

4(4) 325

Ա-44

Է. Բ. ԱՂԱՅԱՆ

ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ
ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՐԱԿԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА

Э. Б. А Г А Я Н

ЛЕКСИКОЛОГИЧЕСКИЕ
И ЭТИМОЛОГИЧЕСКИЕ
ИССЛЕДОВАНИЯ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1974

4 (7ույց)

Ա-ԱԿ


ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՋ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԸՐ. ԱՆՈՑԱՆԻ ԱՎԱՆ ԼԵԶԻ ՌԵՍՏՈՐՑ

Է. Ք. ԱՂԱՅԱՆ

ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ
ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

621

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՋ ԿՈՒ ՀՐԱՏՐԱՎԵՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1974



Ա Ռ Ա Ջ Ա Ք Ա Ն

Քառասներորդներ հայ (ինչպես և հին գրավոր հուշարձաններ ունեցող ամեն մի ժողովուրդի) բանասիրության և լեզվաբանության միջակա գիտական բնագավառ է. կամ, ինչպես այժմ բնորոշված է ասել՝ միջգիտակարգ: Մեր մատենագրությունն սկիզբ է առնում հինգերորդ դարից, բայց մեզ չի հասել այդ դարի ոչ մի ձեռագիր հուշարձան. մեր ամենանինն ձեռագիրը 9-րդ դարից այն կողմ չի հասնում: Դարերի ընթացում բեղաբերակվելով ու վերաբեղաբերակվելով բազմաթիվ արագրություններով, հին գրական հուշարձանները հասել են մեզ առավել կամ պակաս աղավաղումներով, սխալագրություններով, համատառումներով, իսկ երբեմն էլ՝ արտագրողների կողմից կատարված հավելումներով: Հասկանալի է, որ մեր բանասերները, հրատարակելով այս կամ այն հեղինակի գործը, տարբեր ձեռագրերի համեմատությամբ, ինչպես և ձեռագրագիտական ու լեզվաբանական բազմակողմանի հենությամբ ձգտում են վերացնել այդ աղավաղումները, և բոտ ննաբավորին, վերականգնել հրատարակվող գործի հեղինակային բնագրին հարագատ տեխաբ: Եվ սակայն, հակառակ բոլոր շանհերին, հրատարակվող մատենագրական հուշարձանների մեջ մնում են անեղծվածային բառեր ու բառանանիք, աղավաղված գրչություններ, որոնք և հատուկ էրևելությունների առարկա են դառնում: Հենց դրանով է զբաղվում հայկական քառասներորդներ: Լեզվաբանական ու ձեռագրագիտական-բանասիրական հատուկ ուսումնասիրությամբ

պարզել մեր հին մատենագրության այս կամ այն հուշարձանի մեջ հանդիպող անհասկանալի, բացատրիկ գործածությունն ունեցող բառերի ու բառակապակցությունների խնդրյունը կամ ոչ խնդրյունը, գտնազան աղբյուրների զուգարությամբ նշգրտել ազովազված բառերի ու բառակապակցությունների ձևը կամ բացահայտել բուն իմաստը, մի խոսքով՝ որոշել մեր հին մատենագրության մեջ հանդիպող այն բառերի ու բառակապակցությունների խնդրյունը, իրական ձևն ու իմաստը, որոնք այս կամ այն պատճառով անստույգ կարող են համարվել.— սա այս է հայկական բառաբանության հիմնական խնդիրը: Մեր դասական բանասիրության ներկայացուցիչները (Հ. Անանյան, Ստ. Մովսեսյանց, Հ. Մանանդյան, Ն. Բյուզանդացի, Գ. Տեր-Մկրտչյան, Հ. Ալիևյան, Հ. Վարդանյան և շատ ուրիշներ) հսկայական ջանք են կատարել այս ուղղությամբ և բազմաթիվ նշգրտումներ կատարել մեր հին մատենագրության հուշարձանների անխտանում: Շարունակելով դասական բանասիրության ավանդույթները, մեր բանասիրության արդի սերունդի ներկայացուցիչները, հատկապես վերջին տարիներում, նույնպես սկսել են այս բնագավառով զբաղվել և, ուրախալի է նշել, որ ֆալսեթիչ աղբյուրների են հասել:

Ասանձնապես պետք է նշել այն փաստը, որ մեր հին ձեռագիր հուշարձանների գիտական հրատարակություններ վերջին մի քանի տասնամյակներում մեծ նշանակություն են ունեցել այդ տեսակետից, բայց որում ամեն մի հին ձեռագրի հրատարակության պատրաստելն անխտասպիտեհ ենթադրում է բառաբանական վիճիտարի աշխատանք (տարբերակների բնորոշում, նշգրտումներ, տարբերեցվածների համեմատական կենսություն և այլն, և այլն), այնպես որ, կարելի է ասել, թե ամեն ոք, որ հրատարակության է պատրաստում որևէ հին ձեռագիր հուշարձան, արդեն իսկ թղթազվում է բառաբանության: Զբաղվելով զբարբախյալ ուսումնասիրությամբ, մասնավորապես զբարբախյալ գիտական ֆակուսիտները ստեղծելու աշխատանքին լծվելով, մենք

նույնպես հարկադրված ենք եղել անդրադառնալ բառաբանության բնագավառին և հրատարակել բառաբանական դիտարկումներ մեր բանասիրական հանդեսներում, այդ բառաբանական հետազոտություններն այս գրքի մեջ ներառելով՝ հանձնում ենք մասնագետների ուշադրությանը:



Ստուգաբանությունը լեզվի ուսումնասիրության մի բաժին է, որ զբաղվում է լեզվական միավորների ծագման, երանց հայտնական ձևի և իմաստի, լեզվական դերի ու գործառության և դրանց հետագա զարգացման ու փոփոխությունների լուսաբանությամբ: Դա նշանակում է, թե ստուգաբանությունը, իբրև գիտական հետազոտությունների բնագավառ, զործ ունի բառաբանության, անանցների ու բնականական ձևադրների հետ և ձգտում է պարզել դրանց ծագումն ու զարգացման ընթացքը՝ այս նշանակում է, թե ստուգաբանական հայեցակետը գիտական ստուգաբանության հիմքն է կազմում: Չի կարող լինել ստուգաբանություն, առանց ստուգաբանվող միավորների պատմական կենսության: Եզվական ամեն մի միավոր լեզվի զարգացման ընթացքում կրում է իմաստի, ձևի և գործառության փոփոխություններ, որոնց հետևանքով փոխվում են բառի կազմը, բաղադրիչների փոխանարկությունը, իմաստը և այլն: Իսկ դա նշանակում է, թե յուրաքանչյուր լեզվական միավորի ստուգաբանություն պահանջում է ամենից առաջ այդ միավորի պատմական կենսություն, նրա նախնական իմաստի, ձևի, լեզվական գործառության պարզում: Այսպես, օրինակ, *Տատակ* բառը մեր արդի լեզվում պարզ բառ է և բառակազմական բաղադրիչների բաժանվել չի կարող, թեև նրա *-ակ* մասը կարող ենք նույնացնել այնպիսի բառերի *-ակ* անանցի հետ, ինչպիսիք են *Տարթակ*, *Ժակ* և այլն, իսկ *Տատ* (զբարբայան *յատ*) մասը նույնացնել *Տատակ* արժատի՝ հետ: Այս նույնացումը սակայն մեզ չէր բացատրի *Տատակ* բառի կազմությունը, որովհետև մենք ուղղակի կապ չենք կարող գտնել *Տատակ*

«կարելի» և հասակ «գեօտին» իմաստների միջև: Այլ է պատկերը, երբ մենք դիմում ենք զարբարին և նրա միջոցով էլ՝ ավելի վաղ շրջանի լեզվական իրողություններին: Այդ զեպկում պարզվում է, ամենից ստաշ, որ զարբարյան *յասանել* բառի *յաս* արմատի նախնական իմաստն է եղել «նարվածելու» կարել, կարելու համար հարվածել: այնուհետև նհարավոր է գտնում բնդիանուր լեզվարանական տվյալներից էլենելով պարզել, որ շատ լեզուներում *հասակ*, *գիտին* նշանակող բաները ծագել են «խփել, հարվածել» իմաստով բաներից՝ իրև «նարվածելով հարթեցնել» տափակացնել, ամրացնել» (հիմնալատիկներեն *pavimentum* «գեօտին, հատակ», որ կազմվել է «խփել, հարվածել» նախնական արմատից, հայերեն *տափ*, որի բնիմաստն է «խփել, հարվածել» և այլն), և այս բայերից կզակացնել, որ մեր հասակ բառն էլ, իրոք, կազմվել է *յասանել* բառի *յաս* արմատից՝ *-ակ* անվանով և նախապես նշանակել է հարվածելով՝ խփելով հարթացում ու ամրացում տեղ: Այս մեկ բառի պատմությունը թելադրում է, իր հերթին, նույն արմատի հետ կապված տարբեր լեզվարանական միավորների պատմությունը: Եսխ՝ զարբարյան *յաս* արմատի մյուս նկն է *հաս*, այս արմատից ունեն է մի կողմից *զ-ստ*, որ կազմվել է *զ* նախդիրով և նախահուշ *հ*-ի հետ: Եսուհի, ստանց *հ*-ի նկն ունեն է բարդությունների մեջ, որից ստացվել է *-ստ* անանցը, այսինքն՝ անկախ բառարմատը՝ գործածվելով բարդությունների վերջին կզում և զրկվելով *հ*-ից, վերածվել է անանցի: Վերջապես, նույն *յաս/հաս* արմատի զուգահեռն են կազմում *ա*-ի փոխարեն *ա* երկարբառն ունեցող *յաստ/հաստ* արմատները (հիմնա, հատուց/հատուց—յատուց/յատուց և հատուց/յատուց), այս զուգահեռն նկերը՝ նախահուշ *հ*-ով և *յ-ով*, հնարավոր է գտնում բացառելի *զ-ստ* բառով, որի մեջ *հ*-ն ընկել է *զ-ից* հետ, կարելի է ընդունել, որ նույնպիսի նախդրավոր կազմություն ունի նաև *յաս* տարբերակը՝ կազմված *ի* նախդիրով, որը բույլ արտասանվող *հ*-ից ստաշ վերածվել է *յ-ի* (ինչ որ շատ տվողական է մեր հին նկագրերում), իսկ այս *յ-ից* հետ էլ *հ*-ն ընկել է (*հ*՝ *յ* *հ* *ս* *ա* *ն* *ել* > *յաս* *ն* *ել*), ինչպես որ *զ-ից* հետ է ընկել: Այսպիսով, մեկ բառի պատմական հետազոտումը երևում է բերում իմաստային (խփել -- կարել -- առանձնացնել -- հատակ) բազմաթիվ անցումներ, նկական փոփոխություններ (հատ > յատ, ստ) և գործառական փոխանցումներ (*հաս* արմատ, *-ստ* անանց): Լեզվական միավորների այսպիսի պատմական հետազոտումը ավելի միավորի (կամ միավորների) նախնական իմաստը, ներ և գործառությունը բացահայտելով միայն կարելի է ըզբարդվել դրանց ստուգարանությամբ: Սակայն պատմական հետազոտումը զեհա բավական չէ ստուգարանության համար: Ամեն մի ստուգարանություն հենում է մի կողմից պատմական իմաստաբանության, մյուս կողմից՝ պատմական հրեշյունաբանության վրա: Պատմական իմաստաբանությունը, լայն առումով, գիտություն է լեզվարանական միավորների պատմականորեն կրած փոփոխությունների, դրանց ընդհանուր օրինաչափությունների մասին, այդ փոփոխությունները պայմանավորող օրյեկտիվ ու սուրյեկտիվ պատճառների մասին: Իրև այդպիսին, պատմական իմաստաբանությունը, կարելի է ասել, համապարփակ գիտություն է: Լեզվի բառերը մարդկանց գիտակցության մեջ նկարդող հասկացություններն էր ու դրանց նյութական նկն միասնություն են, իրենց իմաստներով բառերն արտացոլում են մարդու նհանազական գործունեությամբ օրյեկտիվ ու սուրյեկտիվ իրողությունների (երևայրների, տարկաների, հարաբերությունների և այլնի) մասին հասկացությունները, ինչպես և սուրյեկտիվ վերաբերմունք դրանց նկատմամբ: Ինքնին հասկանալի է, որ մարդկային նհանազոտյան նախնական աստիճաններից մինչև առի մակարդակի զարգացումը փոխվել են մարդու պատկերացումները իրեն շրջպատող իրերի ու երևայրների և իր հետ կապված, իրեն վերաբերող գործողությունների, իր մեջ տեղի ունեցող գործընթացների մասին, մի խոսքով՝ այն ամենի մասին, ինչը կարող է գտնուլ մարդկային նհանազոտյան ստարկա: Ճհանազոտյան մեջ տեղի ունեցող փոփո-

— 8 —

խորյուններն առաջ են բերում հասկացությունների փոփոխություններ, որոնք իրենց արագացումն են գտնում բառիմաստի պատմական զարգացման ու փոփոխությունների մեջ: Սակայն բաղիմաստի փոփոխությունները պայմանավորվում են ոչ միայն հանաչողության զարգացմամբ, իրական կյանքում տեղի ունեցող իրադարձությունները, մշակույթի զարգացումը, կենցաղի ու սովորությունների, զարգամարտասության, հազմական կյանքի փոփոխությունները, սուրբկեղծիկ պատկերացումները, մարդու հոգեկան գործունեության հետ կապված զանազան հանգամանքները, անասնական ու հազմական հարաբերություններն ու դրանց պատմական փոփոխությունները և այլն, և այլն.—բառիմաստի փոփոխություններն առաջացել զարժաններ են, և գիտական ստուգարանությունը պետք է հաշվի առնի այդ բոլոր հանգամանքներն ու դրանց առաջ բերած իմաստափոխությունները: Իսկ սրա համար անհրաժեշտ է շատ հանաք մըտովին փոխադրել նախապատմական զարաչըրանները, բառիմաստի մասին զատողություններ անել հնագույն մարզու պատկերացումների համաձայն, նյութական կապտուրայի պատմության տվյալների հաշվառումով, ներկվական ու արտաբերական իրողությունների ընձեռած տվյալների զիտական հենություններով: Այսօրվա մարզու համար զրծվար թե հասկանալի լինի *կոր, կրունկ, կորթ, կեռ, կուռ, կունակ, կրի, կուր* «նավակ, առյառ», և *կրյա* բառերի կապտական, երբ լեզուները պատմության տվյալներն ուսումնասիրելով տեսնում ենք, որ հնագույն մարդիկ մարմնի մասերի, կենդանիների ու առարկաների անվանումները տվել են արտախն ձևի աշխի զարեղ օրեկ հատկանիշով, ապա հասկանալի է դառնում, թե ինչպես *կոր* «ձուռ, կուռ» բառից կարող էր ստացվել *կրունկ, աշտ-հուլ* «տուշկ» արձատից՝ *այա* «բուշ (այսինքն՝ շուսած, ուսուցիչ)» և այլն, և այլն: Պատմական բառագիտությանը և, մասնավորապես՝ իմաստարանությանն անտեղյակ մարզու համար անմարտելի և նույնիսկ ծիծաղելի կարող է թվալ, եթե լսի, որ ուսուերեն король «քա-

զավոր»: ЗРЕЛЫЙ «հասուն», գերմաներեն Kerl «տղամարդ, կարիք», հայերեն *ծեր* և, վերջապես, ռուսերեն КРОЛИК «հագար» միևնույն հնգիլազական արձատից և միևնույն բերիմաստից են ծագում: Սակայն երբ իմանում ենք, որ այդ բոլոր բառերը ծագում են հնդեվրոպական նախնական ընդհանուր g'or «ծերություն, ծերանալ» արձատից, և այդ արձատի պատմականներն կրած իմաստային փոփոխություններն ենք երևան հանում, միանգամայն իրական ու համոզիչ են դառնում այդ՝ առաջին հայացից անհավատալի թվացող զուգադրությունները: Այսպես, ծերանալ, ծերություն իմաստներն ինքնին նշանակում են նաև հասունանալ, մարդկանց վերաբերմամբ հասունանալ, հասակ առնելը՝ հասուն դառնալ է, ուստի և՛ հասուն մարդը, տղամարդը՝ ի հակադրությամբ ծերանալը մի կողմից հասնելով լիկելը, փրտելն է (հմմտ. հունարեն γρηγορος «չկարուկ, շատ հասնելով ինքն իրեն ընկած պտուղ»), մյուս կողմից՝ հասնելը, հասունանալը (հմմտ. հունարեն γρηγορος «ծերանալ, հասնել»): Հասուն տղամարդ իմաստից զարգանում է ինքնին ուժեղ, ուժեղ տեղը, կարիք իմաստը, որ աղոթն երևան է բերում հին բարձր գերմաներեն karol «տղամարդ, կարիք» բառը: Այս բառից է կառույտ (Karols) հատուկ անունը, որը կառույտ Մեծի սլավոնական արշավանքներից հետո սլավոնական լեզուներում վերածվեց հասարակ անվան՝ кароль «քազավոր» նշանակությամբ (ինչպես Caesar հատուկ անունից՝ կայսր, царь), և վերջապես, սրանից էլ կազմվեց КРОЛИК «հագար» բառը՝ հետևյալ նանապարեծով: Լատիներենում հագարը կոչվում էր cuniculus, այս բառը փոխառությամբ անցնելով գերմաներենից՝ դարձավ Küniglic «հագար», որը ժողովրդական ստուգարանությամբ կապվեց նրանմանին König «քազավոր» բառի հետ և ձևափոխությամբ դարձավ Kōnighase «քազավոր-անագապտակ», այսինքն՝ հագար, վերջապես, սրա պատկերումով էլ կազմվեց ռուսերեն

кролики (<корол-ик) «եագար», բարդ: իմաստային այս բազմաբով փոփոխությունները միանգամայն օրինաչափորեն կապվում են մաքուր հոգեկան գործունեության հետ՝ որպես զանազան զուգորդությունների աղյուսակ, սակայն մի քանիսն էլ սուկ պատանական զուգոյղությունների հետևանք են: Բացանայտուն են պատանական է այն, որ պատանականները գեղմ պատանազմոլ բազմաբով կրել է Կազոս անունը, որը պատանականների մաս դարձել է հասարակ անուն՝ որով «բազմաբով», պատանական է այն, որ լատիներենից փոխառված cuniculus բառը առաջին մասով նմանվել է գերմաներենի Kōnig «բազմաբով» բառին, որ է ժողովրդական ստուգաբանությամբ cuniculus-ը Kōnig-ի հետ կապելու հիմք է հանդիսացել ու ձևափոխությամբ հանգեցրել հաս Kōniglin «բազմաբովի», ապա՝ «գերմանական ձևի ու կազմաբանության» վերածելով՝ դարձել Kōnighase, որից էլ պատանականները է առաջին կրոնիկ «եագար»-ը (ստուգաբանունը՝ բազմաբովի): Այս բոլորը ցույց են տալիս, որ պատանական իմաստաբանությամբ գրավորը պետք է հաշվի առնի ինչպես ներկայական, այնպես էլ արտայնչական, հանախ էլ բոլորովին պատանական բազմաբովի հանգամաններն է այլ անունի ցուցաբանող ձգող լուսարանելու իմաստի զանազան անցումների պատանական ընթացքը: Եվ քանի որ զիտական ստուգաբանության հիմքն է կազմում պատանական իմաստաբանությունը, ապա պարզ է, որ ստուգաբան լուսարանելու ստուգաբանության դեպքում պետք է էլի պատանական իմաստաբանության ավարտներից:

Երև բովանդակության պլանում ստուգաբանը հենվում է պատանական իմաստաբանության վրա, ապա արտանայության պլանի իրողությունների լուսարանության ժամանակ նրա առաջնորդն է պատանական հնչյունաբանությունը: Յուրաքանչյուր լեզվի պատանական զարգացման ընթացքում նրա հնչյունական համակարգը կա փոփոխությունների է ենթարկվում, անկի են ունենում հնչյունների զանազան անցումներ, հնչյունական մանրահամակարգերի անհետացում կամ առա-

ջացում: Հնչյունների պատանական փոփոխությունները ենթակայանում են օրինաչափ համապատասխանություններ հնի, նախնականի և նորի միջև: Որևէ նախնական հնչյունի հետագա համապատասխանությունները լեզվաբանության մեջ հնչյունական օրենք անվանում են ստացել: Յուրաքանչյուր հնչյունի ամեն մի համապատասխանություն ժամանակային կամ տարածական հայեցակետով՝ մեկ հնչյունական օրենք է: Այսպես, օրինակ, հայերենի հայ բառն արդի գրական հայերենում ունի հայ անը, այսինքն՝ ավյալ բառում գարարյան հ-ն մեղացել է հ, ա-ն՝ ա, և ց-ն՝ ց. սրանցից յուրաքանչյուրը մեկ հնչյունական օրենք է հին հայերեն-այլաբանաբան պատանական զարգացման գործընթացում (ժամանակային հայեցակետ): Եուրև հայ բառը Ազգային բարբառում դարձել է հայ, այսինքն՝ այստեղ էլ ունենի հ>հ, ա>օ, ց>ց համապատասխանությունները, այլ կերպ՝ հնչյունական օրենքներ, և քանի որ Ազգային բարբառը, ինչպես և բոլոր մյուս հայերեն բարբառները ծագել են հին հայերենից, ապա այստեղ էլ ունենի ժամանակային հայեցակետի համապատասխանություններ: Այլ է պատկերը, երբ համեմատության մեջ ենք դնում Ազգային բարբառի հայ և վանի բարբառի յայտ անը: այստեղ մեկ ունենի հ-ի, օ-ն, ց-ց համապատասխանությունները, որոնցից յուրաքանչյուրը նույնպես մեկ հնչյունական օրենք է, բայց օր էր ժամանակային, այլ տարածական հայեցակետով. բանն այն է, որ երբ հին հայերեն-արդի հայերեն, հին հայերեն-Ազգային բարբառ զուգորդությունների մեջ ունենի նախնականի, հետագային և նրանից առաջացածի, նորի համապատասխանություն, ապա Ազգային բարբառ-վանի բարբառ զուգորդության մեջ համապատասխանություն կա արտանայուն հայկադրոլոլ տարբերակների (զուգահեռաբան առաջացած է համագոյակցող բարբառների) միջև: Այս օրինակով մեկ ցանկացանք պարզել ժամանակային և տարածական հայեցակետերի տարբերությունը: որ կարելի է նակերպել այսպես, միևնույն լեզվի տարբեր փոփոխի՝ նախորդող և

հաջորդ փուլերի, իրողությունների զուգարարությունը ժամանակային, իսկ նույն լեզվի տարածական, համաժամանակյա տարբերակների իրողությունների զուգարարությունը տարածական հայեցակետն է ներկայացնում: Այս առումով էլ, ահա, ավյալ լեզվի որևէ հնչյունի քե՛ր ժամանակային և քե՛ր տարածական ամեն մի համապատասխանություն մեկ հնչյունական օրենք է: Սակայն, հանի որ ավյալ լեզվի ժամանակագրաբեն համագոյակից տարբերակները ծագում են մեկ ընդհանուր, ավելի նախնական և բյուրի համար հիմք հանդիսացած համակարգից, ապա ինքնին հասկանալի է, որ ինչպես ժամանակային, այնպես էլ տարածական հրնչյունական համապատասխանությունները պատմականորեն ստեղծված համապատասխանություններ են և, հետևաբար, հնչյունափոխական պատմական օրինափոխություններ: Յուրաքանչյուր ստուգաբանություն, իբրև լեզվաբանական միավորի ծագման ու զարգացման պատմություն, հիմնվում է հնչյունական օրենքների վրա: Առանց հնչյունական օրենքների բացահայտման և դրանց զործարարության գիտական ստուգաբանություն չի կարող լինել, ուստի և ամեն մի քառաբանության ժամանակ նշտուրեն պետք է գործադրել ավյալ լեզվին հատուկ հնչյունական օրենքները ինչպես այդ լեզվի պատմական իրողությունների բնեղությունը. այնպես էլ նախապատմական իրափոխությունների համեմատական ուսումնասիրությամբ: Այսպես, օրինակ, հայերեն բարբառաբանում, ինչպես և ժողովրդա-խոսակցական լեզվում, լայնորեն գործածվում է *թուշ* բայով գրական լեզվի *այտ* բայի փոխարեն, այդպիսի լայն գործածականությունը և ընդհանրությունը գրեթե բոլոր հայերեն բարբառների համար ներառյալ են տալիս, քն այդ բայը պետք է եղած լինի նաև հին հայերենում. հարց է առաջանում, ի՞նչն է կարող էր ունենալ այդ բայը հին հայերենում: Բնականաբար առաջին ենթադրելի ներ կլինեն հնց *թուշ*, սակայն, իննելով մեր լեզվի պատմական հնչյունաբանության ավյալներից, մենք կարող ենք ենթադրել նաև մի այլ նկ: Այսպես, գիտենք, որ հին

հայերենի *թշ* հնչյունակապակցությունից ընկել է *թ* հնչյունը, ինչպես՝ *խարշել* > *խաշել*, *քարշել* > *քաշել*, *կարշել* > *կաշել* (*կաշմբուռն* բարդություն մեջ). այդ օրենքից ելնելով, կարող ենք ենթադրել, որ *թուշ* բայի հնագույն նեն էլ եղել է *թուրշ*: Այսօրն՝ հայերենի պատմական ավյալներով: Համեմատական բերականության ավյալներից էլ գիտենք, որ հայերենի *թշ* կապակցությունը ծագում է հնդկիրոպական *rs-*ից. *ու-ն* *u-*ից կամ *o-*ից, իսկ *թ-*ն *t-*ից կամ *th-*ից, ուստի և կարող ենք հանգեցնել **turs*/**tōrs* կամ **lhurs*/**lhōrs* ձևիսաներին. սակայն հայտնի է նաև, որ հնդկիրոպական *rs-*ն կարող էր ալ նաև հայերեն *n* (հմմտ. **tōrs* > *թառ-ամ* է *թարշ-ամ*). այս ղեպովում էլ, ուրեմն, հենվելով նույն կանոնի վրա, կարող ենք ենթադրել, որ *թուրշ* նկին զուգահեռ հին հայերենում պետք է եղած լինի նաև *թուռ* նկը, որն իսկապես էլ ավանդույթ է գրաբարում *թուռ* հոգնակի հայցականի նկով և *թուրիթ*, *հասկաթուռ* բարդություններում (մանրամասնությունները տե՛ս ստորև՝ § 43): Այս մի օրինակը սուրբեն բավական ենք համարում պատմական և համեմատական հնչյունաբանության ավյալներն ստուգաբանության մեջ կիրառելու մասին որոշ պատկերացում տալու համար: Կարևորն այստեղ այն է, որ հնչյունական օրենքների նշգրիտ զործարարությունը միայն կարող է գիտական առժև տալ ստուգաբանությանը, ուր որ հաշվի չեն առնվում հնչյունական օրենքները, ուր որ համեմատությունները հիմնվում են պատմական նմանությունների վրա, ստուգաբանությունը դադարում է գիտական նշմարտություն լինելուց:

Առաջնորդվելով այս սկզբունքներով, տարիների ընթացում աշխատել ենք ստուգաբանել հայերեն բազմաթիվ բայեր և հրապարակել գիտական պարբերականներում: Սույն գրում ի մի ենք բերել այդ բոլորը և հանձնում ենք զիտական հաստատականության ուղարարությանը: Հասկանալի է, որ ստուգաբանություններից մի ամենք կարող են վիճելի կամ կասկածելի լինել, և մասնագետների բնեղությունը կնկատարի դրանց նշգրտմանը:

1. ԱՂԱՏ, ԱՂԱՏԵԼ

Առանձին գործածված արմատը նշանակել է «սնր-
գուրգուրանք», իսկ բայը՝ «դառնորեն ողբալ»: Բարբառնե-
րում գործածվում է՝ աղատ—աղատ «դառնագին, սրտաճրմ-
լիկ», աղատ անել «գուրգուրալ», աղատով «աղիողորմ ձայ-
նով», աղատով լինել «շատ սիրել, վրան գուրգուրալ»,
աղատ—պաղատ «աղաչանք—պաղատանք», աղատել «ա-
ղերսել, աղաչել, պաղատել»: Սազում է Շնխ. ԸԼ-, ՕԼ- բնա-
ձայն արմատից (ՔՕՔ. 1, 306), որից են նաև հայերեն աղ-
ալ, աղ—աչել, ող—ոխ, ողբ, եղեր/եղար բառերը: Ըստ
այսմ՝ աղատ բառի արմատն է աղ-, իսկ —տ ածանց է
(չենք բերում ցեղակից լեզուների համապատասխանություն-
ներն ու զուգարանությունները, որովհետև հայերեն աղալ, աղաչել, ողբ, եղեր/եղար բառերի՝ բոլորին հայտնի ստու-
գաբանություններն արդեն բավական են սույն ստուգաբանու-
թյունը հաստատելու համար):

2. ԱՂՈՒՆՔ/ԱՂՆ, ԵՂՄ, ԱՂԷՏ/ԱՂԵՏ, ԱՂՃԱՏ

Հին մատենագրության մեջ աղունք գործածվել է միայն
հոգնակի ձևով՝ «աղետ, եղեռն» նշանակությամբ: ԵՃԲ եղա-
կիի համար ենթադրում է աղուն ձևը, սակայն Հր. Աճառյանը
ճիշտ կերպով ուղղում է աղն. հենվելով հոլովական ձևերի վրա
(աղունք, աղունց, աղունս): Սազում է Շնխ. ԸԼ-, ՕԼ-, «փշաց-
նել, ապականել, ոչնչացնել, կործանել» արմատից: Այդ
արմատից է հայ. եղեռն ըստը, ինչպես և՛ հուն. նեոթա:



(«<ol-vj-pzj) «փշացնել, ապականել», ընչո՞ւ թռչնացնել): նույն արմատից ենք ծագած համարում եղծ «տձև, վատ, պակասավոր, փշացած», իբրև գոյական «հերքում, ջրնջում, մատուց», որից՝ եղծանել (նաև՝ եղծել, եղծնուլ) քավերել, փշացնել, ջնջել, ապականել: Այս արմատի համար պետք է կանխադրել հնիս. արմատի՝ ց՝ անականով *eig՝-ձեր. թերևս այս արմատի հետ պետք էր կապել նաև աղէտ բառը, կանխադրելով ol-, ol-ի անձած oleid/oleid ձևը: նույն արմատից է վերջապես, նաև աղնատ, աղնատել, որի արմատն է աղ-, -ատ ածանցն էլ, իսկ ն-ի՝ անական (հնիս. olgy-):

3. ԱՎԱՅՏ (ԱՂՏ)

Այս բառը հայերենի կենսունակ բառերից է, որ առիս է նաև շատ բարդություններ և անանցումներ, ինչպես՝ աղօտանալ, աղօտաշաճ, աղօտերեակ, աղօտաճանձնչ, աղօտագոյն, աղօտատեսել և այլն, և այլն: Բառիս իմաստն է սկես մուլ (լոյս), նսեմ, թույլ, տկար, ոչ պարզ, ոչ մաքուր»: Հայտնաներից շատերը ճիշտ կերպով համարել են անանցավոր՝ բաղադրված -ատ (տա)՝ ուտ մասնիկով, որ հաստատում և բնորոշում է Հ. Աճառյանը: Այսպիսով՝ բառիս արմատն է աղ-, որ ծագում է հնիս. sal «կեղտոտ—մոխրադույզ, մուլ մոխրադույն» արմատից. ցեղակից լեզուներում ունենք հրգ. salo «պղտոր, մուլ, մոխրադույն», անգլոսաքս. salu «կեղտոտ գույնով», ուս. солоный «բաց դեղին», հնիբրեւ. haloc «մառ. միացույն», կիմր. halog «կեղտոտ» և այլն: Հնդեվրոպական արմատը կապված է sal,—sald «աղ» բառի հետ և փոխարեքարք գործածվել է նաև ուռե-նու (որպես աղագոյն տերևներ ունեցող), ինչպես և թուքի համար, որ ցույց են տալիս լատ. saliva «թուք», salix «տուռեխ», հրգ. sal (a) ha, մրգ. salha, անգլոսաքս. seallh, հիւյ. selja, բոլորն էլ՝ ուռենի նշանակությամբ: Ըստ այսմ՝

հայերեն աղատ նախապես նշանակել է պղտոր, մույլ, ոչ հուտակ, որից և բխում են բոլոր մյուս իմաստներն ու գործածությունները:

4. ԱՄՈՂ

Բառիս արմատն է ող, իսկ ամ- ածանց է (հմմտ. ամուսին, ամ-ործիր և այլն): Արմատը ծագում է հնիս. el- (elei-, lei), ol- (olen, olen) արմատից, որի նախնական իմաստն է «արմունկ, արմնկոսիք»: Ցեղակից լեզուների մեջ բարդ, բացի արմունկից, գործածվել է նաև մարմնի տարրեր մասերի համար, ստանալով նորանոր իմաստներ և նմանությունամբ անցել նաև զանազան գործիքների: Այլ արմատից են ծագել նաև հայերեն ուլն «վիպ», ողն «ող, նաև՝ թիկունք», իլ, իլիկ, ոլոխ: Ոլ-ը ծագում է արմատի պարզական ձևից՝ «ուս, բազուկ» նշանակությամբ և ամ- նախածանցով նշանակել է նախապես սուսակից, բազկակից, զույգ: Ամու բառի սեռականն է ամույր կամ ամուլ: այս երկրորդ՝ սղված ձևը ցույց է տալիս բառի մի երկրորդ ձև՝ ամ-ուլ, որ միանգամայն համապատասխան է զալիս ուլն բառին:

5. ԱՆՑ

Հայերենի շատ արգասավոր արմատներից է, որից, բացի անցանկլ>անցնել, անցք բառերից և դրանց բաղմամբիվ բարդություններից, յ, զ և ա նախդիրներով կազմվել են այժմ արդեն արմատների վերածված բառեր, ինչպես՝ լանց (լանցանիլ, լանցանք են), զանց (զանցանիլ, գերազանց են), առանց (առանցանիլ քանդագույնի, զառանցել), առանցիկ «սառսպելյական», առանցք են), գառանց (գառանցիկ, գառանցական են), Արմատի նախնական իմաստն է «անցք, ձևնապարհ, անցում, ընթացք», որից նաև՝ «ենդություն, դիպված, պատահար»: Մտաղմ է հնիս. sent- «ուղղվել, դիմել, գնալ, ընթանալ, ընթացք, անցք, ձևնապարհ» արմատից. ցեղակից ձևերն են. ավեստ. hant- «հասնել, հասցնել»:

հին իռլ. set կիմր. hynt, բրեառն. hen «ճանապարհ», հին սարս. sith «ճանապարհ, ուղղություն», անգար. sith «քրիստոնէական» անգամ», զոթ. simh «սերի», ga-sindha «քրկեր», sanjan «ուղարկել», հին իռլ. senda «ցնալ», simi «քրիստոնէական», sinn «սանդա», հին բարձր գերմ. sinnan «գնալ, ճամփորդել, զար», sindon «ճամփորդել», sinden «ուղարկել», լիտվ. sinuėiu, լատիշ. situ «ուղարկել» և այլն (Պոկ., 208): Հայերենը ծագում է արմատի -sko մասնիկով ածած ձևից՝ ստորին ճանգարձով (*sg(t)-sko > անց): նույն արմատից է ծագում եսե հայ. բերանալ բառի բեր- արմատը, որի համար Հր. Աճառյանը կանխադրում է *senth նախածը (*senth > իերանալ > բերանալ):

6. ԱՆՈՒՐ, ԱՆԻՐՈՒՄ

Անուր բառն ավանդված է դասական շրջանի մատենագրությունում և գործածական է մինչև այժմ էլ: Նշվի բացատրություն մեջ դրում է. «Մանակ կամ օդ փայտ և լերկաթոյ՝ ի նուսճելի զպարանոց մարդոյ կամ անասնոց, որպէս և անցուցեալն ի բիթն և զործի առնչեալոց»: Այս բացատրությունը, որ հաստատվում է բերված բազմաթիվ վկայություններից, ցույց է տալիս, որ անուր սովորական օդ չէր, այլ վրէի (կամ անասունների դնչի) ազդեցող ծանր փայտե կամ երկաթե օղակ: Անս հնագույն գործածություններից մի քանիսը. Անուրս փայտեղին խորասկզբեր, և արաբից քնդ այնք անուրս երկաթիս: Գիցը զանուր երկաթոյ ի պարանոցի րում: Լուծ անրոյ նորս յաջողեանի (բուրոն էլ՝ ՄԳԲ): Բնչպես կարելի է նշանակաբար հասկանալ, այս նախադասությունների մեջ անուր-ը աուսերեն, ХОМУТ-ի իմաստն ունի, այսինքն՝ հենց այսօրվա անուր-ի նշանակությունը:

Բայտ ծագում է հնի. oid արմատի i-n-dro/endo ձևից. արմատի նախնական իմաստն է «ուռչել», որից բացառվել են «ուռուցք, պարար», ապա և՛ ուռուցիկ և ևս նեցող

առարկաների, մարմնի մասերի ևն անուններ: Այսպես՝ արմատի պարզ՝ oid ձևից են ստացվել հայերեն այս, այսնալ «ուռչել», որին համապատասխանում են (բայտ ձևի) հուն. οἶδος «ուռուցք», οἶδος «չրի ուռչելը, ալիք, ալեծփանք, ծով», հին բարձր գերմ. eiz «պարար», նորվեգ. eitel «բողբոջ, ալք (բույսի)», հանգույց, գեղձ», հին եկեղեցալավոներեն isto (< *id-s-lo) «ամորձիք, երկկամ» և այլն: Իր ձևով հայերեն անուր-ը ծագում է արմատի andoro «անձամ արքերակից. մեր բառի նախնական ձևն է կեղել *անուր (սեռականը՝ անդուր)», սակայն նոր բաղաձայնների կուտակման պատճառով դ-ն բնկել է: Համենայն զիպս, հին Անուրը ծագում ունենք եսե անուր գրությունը, որ Աճառյանը բացատրում է դ-ի սովորական հավելումով (ինչպես ծանր > ծանր, ծանր > մանր և այլն), բայց չի բացատրում, որ զա որևէ վայրում պահպանված ավելի հնագույն ձև լինի: Համենայնզիպս, այս ենթադրությունն օգտին է խոստովանելու բար, որի մասին կխոսվի ստորև:

Անդրադառնալով «ուռչել, ուռուցիկ» կորածն — օգ՝ իմաստային զարգացմանը, պետք է նկատի ունենալ հետևյալը: շատ լեզուներում անիվ, շրջանակ, օղ և նման բառերը ծագում են «կորուսված», ձկնել, ուռուցիկություն» բնիմաստով բառերից, Հետևել շնչալու համար կարող ենք հիշել հենց մեր օղ (աղ) բառը, որ ծագում է հնի. aulo արմատից, որի իմաստն է «կոր խողովակ, երկարավուն փն»՝ խոռոչ՝ գոգավորություն: Իմաստի տեսակետից մեր անուր բառի հետ համեմատելի են նույն արմատից ծագած անս. արք «գործը, միջուկ», նորվեգ. eitel «ճանգույց, բողբոջ», ինչպես և՛ հին հնդկերեն indriyam «ուժ, կարողություն, զորություն», լիտվերեն idra «ծառի փտած բուն կամ բնի միջի խողովակաձև խոռոչ (փտելուց գոյացած)» և այլն: Ձևի տեսակետից համեմատելի են հին հնդկերեն indra, «ուժեղ», ավեստերեն Indra, հին հնդկերեն indriyam «ուժ, կարողություն», միտանի Indar «նույն նշ.», ղավոնական *jendro, *jedr «արագ» և այլն (Պոկ. I, 774):

Այսպիսով, անուր (անդուր) նախապես նշանակել է «կորացրած՝ ճկած՝ ուռուցիկ դարձրած փայտ կամ մետաղ՝ վզին հագցնելու համար», որից է՝ անուր-ի «վզին հագցնելու օղ» իմաստը:

Եսյն արմատից է նաև անդուր բառը, որ բազկացած է անդր (<անդուր) և վար- (վարել «տանել, կրել») արմատներից. այս բառը նշանակում է «կառքի կամ պատգարակի լծված ձի, ջորի, կառք, սալը»: Բնականաբար, նախնական իմաստն է «անուրը կրող», այսինքն՝ լծկան: Վար բառի վեճածովելը ուար-ի կանոնավոր նրուսթ է հին հայերենի համար, ըստ որում վա, վն կապակցությունները երկբարբառային դիրքում դանուսթ են ուս (հմմտ. անխ>անուսակ, քի>քուսյ և այլն):

7. Ա Ն Ք Ա Տ

Գործածվել է հին մատենագրության մեջ՝ յԷ, կարուս, աղբաս, նվաստ. 2. աչքածակ, ազահ՝ նշանակություններով. ունենք նաև անհաստակվ զկարոտ լինել, կարիք ունենալ, անհաստարիմ «աղբատություն», չբավորություն», անանհատ «անկարոտ» բառերը: Ածանցավոր բառ է անհ- արմատից, ինչպես ունենք աղհ-աստ, հաստ-աստ և այլն: Սազում է հնխ. արկ- քանություն, անհրաժեշտություն, կարիք» արմատից. հմմտ. հուն. ἀνάγκη «կարիք, քանություն», հին իռլ. eien, միջին կիմբ. anghen, կիմբ. angen, կոռն. բրետ. anken «կարիք, անհրաժեշտություն»: Հնչյունական օրենքների տեսակետից տարօրինակ է հնխ. կ>հայ. Բ, ըստ որում հընդ- նվորական պարզ խուլները ձայնորդներից հետո վերածվում են համապատասխան ձայնողների (հմմտ. penk «e> հինգ»). սակայն այդ տարօրինակությունը բացատրվում է աղհատ բառի համարանությունը, որին նմանվել է կ՝-աստ ածանցավոր կազմությանը, կ՝ զ>Բ փոփոխությանը. համարանությունը տեղի ունեցած այդ կարգի փոփոխության համար կա-

րելի է հիշել ապա «ամուսնու քույրը» բառը, որ ծագում է հնխ. ք' (C) LOU արմատից, և պնար է լինեք ծալ, բայց ապլզ-ի համարանությունը դարձել է ապլ (ծ>տ):

Տ. Ա Շ Խ Ո Յ Ժ

Բառի ձևը ցույց է ապիս, որ իրանական փոխառություն է, ըստ որում հայերենի աշխ-ով սկզբով բուրբ ստուգաբանված բառերն իրանական ծագում ունեն (հմմտ. աշխարհ-աշխլտ, աշխատել և այլն): Մյուս կողմից՝ -այծ (-ույծ) մասը հայանապես կազմում է այծ (ույծ, ուծ) բառին, որ նույնպես իրանական է: Այսպիսով, պնար է ընդունենք, որ բարբ բարդ է և կազմված է աշխ- <իրանական յՏՆ- և այծ> իրանական յՅՅա, յՅՅա բառերից. իմաստի և կազմության համար միանգամայն համապատասխան է առայց բառին, որ նշանակում է «կայտառ, առողջ, առողջությունն ու ուժերը տեղը» և կազմված է առ- նախածանցով՝ ոյց <հին պրսկ. յՅՅա «տո՞՞ս» բառից: Աշխայծ բառը հին մատենագրության մեջ գործածվել է «ուժեղ, զորեղ, արի, կտրիճ» նշանակություններով, իսկ այժմ ուժի եզրվարթ, կայտառ, եռանդուն» իմաստը: Բառի առաջին բաղադրիչը (աշխ-) Ավեստայի XՏՏ(յ)՝ «կարողանալ» բառի արմատն է: այդ բայը, բացի կարողանալ ընդհանուր իմաստից, ունեցել է նաև «տիրել, իշխել, ի վիճակի լինել. թագավորել» նշանակությունները¹: Ըստ այժմ, *xšaoša նշանակել է «ուժ ունեցող, զորեղ, հզոր», որ մեր աշխայծ բառի իմաստն է:

9. ԱՌԱՎՈՐ, ՎԵՌ

Հին մատենագրության մեջ գործածվել է, բայց ոչ համար. իմաստն է «բզուր, անօգուտ, դատարկ տեղը». այս բառից է առաիւրեակն սանտեղի, զուր, անօգուտ»: Բառի

¹ Ch. Bartholomae, Altiranisches Wörterbuch, Strassburg, 1904, էջ 551—553.

կազմութեան մասին շր. Աճառյանը (Արմ., Ա, 504) անորոշութեան մեջ է. «հայտնի չէ, թե բառի մեջ առ նախդի՞ր է, թե՞ արմատական»։ Մեր կարծիքով առ(ա)- ածանց է և արմատն է վիր. ծագում է հնի. ԿԵՐ «հանդիսաւոր կերպով խոսել, ասել» արմատից, Յեղակից լեզուների զուգահեռներն են. ավեստ. ԽՐՎՈՒՆ «սահմանում, վճիռ, պատվիր»։ հին հնդկ. vṛata- «պատվիր, պաշտ», հին եկեղեցագլուխական ԵՕԼԱ «երգում», հուն. εἶρεσ «խոսել», ἵρηξι «բռն, բայ», ἵρησι «բռն», սուս. врать «ստելի, կեղծել», ВРАКА «առավիգ. Տոգն. ВРАЖИ» «քարրաշներ, գառարկարանություն» և այլն (Պոկ., 1162)։ Ըստ այսմ՝ հայ վիր/վիր նշանակել է «գառարկարանություն, քարրաշներ, շաղիաղգիանք» և առ նախածանցով՝ առախի՞ր՝ ստացել է նախ՝ «գառարկ խոսք, ինչոր խոսակցություն», այս և՛ պարզապես «իչոր, անտեղի, պարսպ սեղը» նշանակությունը։

Այս նույն արմատի SO-ով աճած ձևից ենք կարծում նաև վեա բառը, որ Աճառյանը (Արմ., Զ, 634) կասկածանքով բացատրում է «կամայալառ, վեա». բառը գործածվել է Ախտարբում «լինի վեա, կամայալառ, լեզուանի» կապակցությամբ, ուստի և ավելի հարմար է «գառարկարան, շաղակերատ, շաղիաղգի» իմաստը, բայ որում կապակցություն մեջ արդեն կամայալառ բառը կա։

10. ԱՌԱՒՈՏ

Հայերենի շատ գործածական բառերից է, որ, սակայն, ոչ միայն ստուգաբանված չէ, այլև կազմությամբ անորոշ է. ոմանք առ- համարում են ածանց, ոմանք՝ ոչ։ Մենք արմատն ենք համարում առ, իսկ առ- և առ(առ) ածանցներ. առահին ածանցը շատ հայտնի է, և կրկնելու հորի չկա։ Երկրորդ համար որպես համեմատելի կազմություններ ունենք աղատ (աղոտ), կարատ (կարոտ). այս բառերին պետք է միացնել նաև առատ (առոտ). սրա արմատն է առ-։ որից կազմված են նաև առածել և առատ. ընդունված է առ(առ)-ի, -առ-ի

(ար-ատ) և ած-ի (ար-ած) միջև տեսնել այնպիսի հարաբերություն, ինչպիսին կա մառ-մառ (մառախլ-մառախլ), զած (զածիծ, ստիգիծ) և զառ (զօտի, պարիզօտ) և նման բառերի միջև։ Մաղայն այդ բառերի կազմությունն էլ պարզ չէ, թեև ծագումը հայտնի է. Առատ բառի համար աստ-ը պետք է ածանց համարել, որով արած-ը, արատ բառերի հետ կիսավիր միայն արմատով (հնի. արմատն է *ter/ir, որից՝ ց-ով աճած træg՝ ձևից ունենք արած-, արատ-ը պետք է կապել նույն արմատի մ-ով աճած ձևի հետ (*tred). հմմտ. կիմր. trwyddo «պատռել, ծախիչ», լիտ. triedžiū šabe stipren Durchfall» են, և արատ-ը՝ tr+ատ > արատ)։ Այս -առ ածանցով կազմությունները շատ հին են, ավելի ճիշտ՝ հնութեան մեացորդներ. այդպիսին է նաև առառատ (առառոտ) բառի կազմությունը։ Առանց նախածանցի ունենք առատ (առոտ) բառը, որի մասին շր. Աճառյանը գրում է. «շատ անստույգ նշանակությամբ մի բառ է, որ գործածվում է վանակ հաստ, ստուգաբանական հետեխյու մոմի համովածում. «Հառտի բայ. հուն սկիզբն է ստն գործիքին գործոյ. դ՛ոյն(հ)՝ զիր աս առ, առտ առի. ամենայն ի դէպ բանի ասեն՝ թէ առատ կայ, և առտատ ասեն զսկիզբն ստորն, որպես առտ արկական զայոյ։ Այս բառից են կազմված անշուշտ շաղատ «գիշերվա ժամը շորքը՝ բայ արևելյան ժամահաշվի» և կամառտ «գիշերվա ժամի հինգր»։ — Ըստ իս առտ նշանակում է «ժամանակ» (Արմ., Ա, 824)։ Մեզ թվում է, թե հատվածն այնքան էլ մոմի չէ, ինչպես այն թվում է առաջին հայացքից. հեղինակը հառատ-ը համեմատում է լուչիս հետ, ասով՝ բայը բաժանելով երկու մասի (իրը թե՛ «քաղազրիչներ»)՝ հառ բացատրում է «սկիզբ» (իրը ունենք էլ հառ սկիզբ, ծայր բայը), իսկ առ՝ «գործություն»։ սա արդեն պարզ չէ. ասա՞լի բայը նկատի ունի, հասել բառ առ-ը որպես բարդությունների բաղադրիչ (պղշատ, զխատել են), թե՞ մի այլ անձանոթ բառ?՝ արմուհետև հեղինակը բառի սկիզբից հանում է հ-ն, որով ստանում է առատ, բայց սա էլ գործում է առատ (առոտ). այս բառի համար էլ գրում է «առատ կա» գործվածք, որ

սասում են ամեն բանի (գործի) առիթով». դա, ինչպես իր խոսքերից է բխում, նշանակում է «ժամանակ կա». վերջապես այդ առատ բառի համար էլ գրում է, թե **ուօտ-ը** արեգակի գալու ժամանակն է, Բառի համար մեզ հենց այս վերջինն է կարևոր. հեղինակը քաջատրում է, որ **ուօտ-ը** արեգալու ժամանակն է, այսինքն՝ **աբևազալ, աբևածագ**: Այսպիսով, ահա, ունենում ենք **ուօտ** և **աուօտ** բառերը, որոնք էլնի ստուգարանորեն քաջատրենք, նշանակում են. **աու-ջինը՝ «արեագալ, արեածագ»**. Երկրորդը՝ «արևածագի զեմ, լուսաբաց»: Համարելով երկու բառերի արմատը **-աւ-**, մենք այն բխեցնում ենք **սու**. *saw-el/sauol, suyel-, sul «արեգակ» արմատից, որի ժառանգներն են. հին հնդկ. **suvāt** = **ավեստ**. **hvāra** «արեգակ, լույս, երկինք», հին հնդկ. **sūrta** «պայծառ, լուսավոր», **սուե**. հուն. **ἥλιος**, **ատաթկ**, **ἥλιος** **դոր**. **ἥλιος**. **ἥλιος** «արեգակ, լուս. **sol** «արեգակ», **գոթ.** **sauil**, **հին իտ.** **sōl** «արեգակ», **հին իտ.** **and-solis**, **հին շվեդ.** **and-syllis** «արեգ դարձած՝ մայր մտած» (**der Sonne zugewendet**), **լիտ.** և **լատիշ.** **soulė** «արեգակ», **ռուս.** **солнце** «արեգակ», **հին բարձր գերմ.** **sundar** «համբավ» և **այլն** (Պոպ., 881—882): Հնր. **sau-el** բառի պարզ արմատն է **SAU**, որ հայերեն տալիս է **ա** (նախահունշ **s-**ի անկումը սովորական է. նույնիսկ այն զեպերում, երբ բառասակզրի **s-**ի զիմաց հայերենում ունենք **ն**, **բ** **տ** **Ա**. Մեյնի, ոչ թե ունենք **հնր.** **s > հայ.** **ն** հնչյունախոտփոխյունը, այլ **s-**ի անկումից հետո **հ-**ի հավելում հաշվական հոգի վրայ: Հնդկությունական այդ արմատի մասին է. Թենկենիստե հետևյալն է գրում. «որոշ չափով, այսինքն՝ կարճ ձայնազորով, **-el-**ը մտնում է հնդկությունական բառապաշարի ամենահին բառերից մեկի կազմի մեջ. ***saw-el** «արեգակ»-***saw** «իտալիս» արմատի անրուն (աթենմատիկ) քաղաքություն մեջ, որ լեզվից լեզու երևան է բերում երկակի, ժայռահեղորեն նատիպ բնությունի հերթադալություն՝ արմատական և անանցական: **Saw-el-**ի կոզրին և, հավանաբար,

նրա համապատասխանությունը կազմված, կղեկողվի **աբրին**. **ausel** «ալզ, արշալույս» ...Հնդկությունական ***sawel-**ի մեջ **-el-** տարրը անանց է ներկայացնում, և միայն ***saw-**ն է ստանում անանցներ ու վերջավորություններ և, անանց լինելով, կրճատվում-զտոնում է ***saw**: Ինչպես **kerd** (հուն. **κέρδ**) տալիս է **եզ. սեռ.** **křde e/os** (լատ. **cordis**), այնպես էլ ***saw** պետք է տար ***saw-e/os**, որը հնչյունաբանորեն վերածվեց **ավեստ.** **h(u)wō-**ի. մյուս կողմից. ***saw-**ից **-en-**ի հավելումով կազմվել է **քաղաքայլ** ***saw-en/sun** (գոթ. **sunnō**) **զուգահեռ** **sy-el/sul-**ին (վեդայական **svar, sō'rah**): **Suens** (գաթաների ***wōng**) հայտնապես առաջացել է **քաղաքայլ** **syen** (ավեստ. ***vanvant** «արեային») և արմատական **սեռ.** **հալ.** ***sues** (ավեստ. **huvō**) մեկերի փոխազդեցությունը: Այս **syens-**ը որպես սեռական հոլով կրիմակի անկանուն է. **և՛** իր **syen** հիմքով փոխանակ **sun-**ի, **և՛** իր **-s-** վերջավորությունը՝ փոխանակ **-e/os** երես **syen-**ը արմատաբար իրանական հոլովման մեջ, նա պետք է տար **սեռ.** — **բաց. հուն.** **κωδης** որ **syel-**ը տալիս է **հերոս**²: Արաբիսով մեր առաջում բառի մեջ ունենք հնդկությունական հնազուն մի արմատ՝ ***saw**, որը պալհանվել է **աանց -el-, -en** անանցներ:

11. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.

Նախնական իմաստն է **քաջ, կտրիճ**, որից ստացվել են՝ կրոնական առումով՝ «բարեպաշտ», բարոյական առումով՝ «անբար», բարոյական մաքուր» նշանակությունները. արմատն է **FLX**, իսկ **աու-** և **-ի** անանցներ են: **Ազգում** է **հնր.** ***get-** (**ket-**) «կտրիճ» արմատից, որից են. **գալտ.** **catu-** «կտրիճ», **իտ.** **cath** «կտրիճ», **հին իտ.** **hōotr** «մի առածու անուն», **անգլ.** **heapo**, **հին բարձր գերմ.** **hadu-** «կտրիճ», **միջին բարձր գերմ.** **hader** «վճե, կտրիճ», **հին բուլղար.** **katora** «կտրիճ», **կիմր.** **cadr** «տեղ, արե», **cadarn** «հզոր».

² E. Benvenist, Origines de la formation des noms en indo-européen, Paris, 1935, էջ 42—43 և 63—66.

բրևս. cadarn «բայ, կորիճ, արի» և այլն Հայերենի համար պետք է կանխադրել հնիս. արմատի և ձևորոշման անձամբ *qetan տարրերակի (qetan > հայ. Բլն > ԲԼՆ. ուրից՝ -ի անանցով՝ Իհեի), ինչպես որ բուլղարերեն, կիմերերեն, գերմաներեն և բրետոներեն ձևերի համար էլ կանխադրվում է ր ձևորոշով ձևը (Walde-Pokorny, I, 339)։

12. Ա.Ռ.Ի.Բ

Հին մասենադրության ավանդված չէ. լայնորեն զորածովում է բարբառներում՝ «ստաստաղ» նշանակության, անկզական բառ է, որի սեռականը՝ առից «ստիքի, ստաստաղի» նշանակության, բառ չը. Անաույանի, պահպանված է Չարսանճաքում։ Ծագում է հնիս. rēt «ձող, դերան, բուն, գերանկապ» արմատից, որի ցեղակից ձևերն են. հին բարձր. գերմ. ruota, հին իսլ. rōta «գերան, ձող, զավազան», հին սարա. rōda «փայտե խալ (riřahkreuz)», սնգարա. rod «ցույց, զավազան», եկեղեցադավանական ratište, ratovište «նիզակարուն»։ Ըստ այսմ, հայ. ասիլ նախադաս նշանակել է «գերաններ, գերանակապ» և նիշտ նույն իմաստային զարգացումն ունի, ինչ որ՝ ձեղում, որի արմատն է ձեղ—ձող, գերան»։ Հրեչյունական տեսակետից ոչ մի կասկած չի հարույցում. ընդհանրենում պետք է տար բիլ, սակայն հայերենում ի-ից հետո չ-ն միշտ բնկնում է (ի-ից հետո չ իրեն չի կարող), ուստի և՛ բի. նախահավելված ձայնավորը պարտադիր է բ-ից առաջ. միակ զմպարություն է ներկայացնում Բերևս հնիս. ր > հայ. ր համապատասխանությունը, բայց սա էլ հաճախ է լինում բառակցում (հմտ. հնիս. par > հայ. ար (նախդիր), հնիս. reug > հայ. առեմ/առիմ, հնիս. ar > հայ. առի (անույլ բայի կատարյալի առաջին զնմբի) և իրանական փոխառություններում՝ պլր. *rasan > հայ. աստան, պլր. rat > հայ. աստ և այլն)։

13. Ա.Ս.Կ.Լ

Իմաստն է «տուտակ»։ հին մասենադրության մեջ զորածով էլ է միայն մեկ անգամ։ Ծագում է հնիս. ās արմատի արձ աճած ձևից, որ նշանակում է «վառել, այրել, այրվել, շոգալ, փայլել»։ Ցեղակից ձևերն են. հին հնդկ. asa-ի «մոխիր», լատ. āra «ղոհանազան, զոհարան» (նախնական «կրակ» իմաստից. հմտ. ara sepulcri «թաղան կրակ»), arceo «չոր լինել, տաշտվել», aridus «չոր», ardeo «այրվել», հին իսլ. arinn «կրակի տեղ, կրակարան, բարձր տեղ, բարձունք» (իր կրակ վառելու տեղ), թոխ. ās (պաճարայ) «չորացնել», ինժ. āa-āš-šī-i (զործ. հոլ.) «կրակարան», հուն. ἄσινος «բունկուն, բորբոս, վառվուն» և այլն (Պոպ., 68)։ Հնիս. zg-ն հայերենում դառնում է սկ. ինչպես որ sd-ն էլ դառնում է ստ (օր. nizd- > հայ. սիստ)։ Այս նույն արմատի արձց- տարրերակից ծագում է հայ. ահյուն «մոխիր. մեայլի ոսկորներից զոչացած չող», իսկ արձցի-տարրերակից՝ ազազիլ «չորացնել» (Արմ., Լ, 22, 175)։ Մեր ասկե բարդ կապվում է հնի. արմատի «փայլել, շոգալ» իմաստի հետ, սառ որում ստուակը համեմատվում էր «կայծ շոգացող, կրակ» հասկացությունների հետ. այս են հաստատում ՆՁԲ-ում ստուակ բառի տակ բերված՝ «Ստուակն կարկենան է և յականց Գիրքն կայծ ասի» վկայությունը, ինչպես և կայծ բառի «կարկենան, ստուակ» իմաստը։

14. ԱՍՏՈՒՃ/ԱՇՏՈՒՃ

Գործածվել է միայն աստուճ հաց «ցամաք հաց» կուպակցությունը՝ աշտուճ և աստուճ ձևերով. բաղադրությունների մեջ ունենք՝ աշտիճագոյն, աշտակից/աստիճակից։ Հնագույն ձևն է աստուճ, որի մեջ ս զարձն է շ բառակերպի ե-ի առեմանությունը (հմտ. աստիճան > աշտիճան)։ Արմատն է աստ-, իսկ ուճ և իճ (աշտակագոյն) անոնց են (ուճ-ի համար հմտ. պարկուն)։ Ծագում է հնիս. ās «այրել, տաշտել, վառվել, շոգալ» արմատի մ անականով ձևից՝ āzd > աստ (հնիս. Զժ հայերենում օրինաշարերն զանոնում

է ստ. հմմտ. օզժ->օտ, ուշժ->նիտ և այլն). ցեղակից լեզուների համապատասխանություններն են. հուն. ζῶν «այրել, շորացնել», ζῶναι «շորանալ», լին. և լին. օզժիտ «շորացնել», լատ. ardeo «շորանալ», aridus «շոր, շորացած», ardeō «այրել» և այլն: նույն արմատից են նաև հայ. ազ-ագ-ել «շորացնել» (արմատի ցն-ով աճած՝ azgh- ձևից. հմմտ. գերմ. զոթ. azgo «մոխր»), ռուսից «շոր, ցամաք, անջրի» (զարգայլ մ աճականով, բայց նախահնչյւն օ ձայնավորով՝ azdo), անիւն (gy աճականով՝ ozgy- ձևից. հմմտ. հին իւլյ. aska, զերմ. Aeshe, անդլ. asches «մոխր, աճյուն», և այլն), և վերջապէս՝ ասկն «սուտակ» (ց աճականով՝ azg ձևից՝ «փայլել, շոգալ» նախնական իմաստից (տե՛ս նախորդը):

15. ԱՐԳԱՏ

Այս բառը հիշում է նորար Քյուզանդացին իր Ֆրանս-հայերեն բառարանում որպէս միջին հայերեն բառ, ունի նաև նրեմիա Մեղրեցին, որոնցից ասել է նաև Հր. Աճառյանը (Արմ., Ա, 643): Արարտայան բարբառում, ինչպէս և ուրիշ բարբառներում, զործածվում է աբաղ, աբառ ձևերով և նշանակում է «խազողի որթի կտրած սոս՝ մատ»: Անշուշա, բառի հնագույն ձևն է աբառ, որի մէջ գ-ն Ե-ից հետո վերածվել է Բ-ի (ինչպէս՝ կարգ>կարք, մարդարիտ>մարբարիտ են) և վերջին տ-ն էլ ձայնեղացել է արարտայան բարբառին հատուկ հնչյունական օրենքով: Մազում է հնի. պ(e)rad- արմատի քրժ-տարբերակից՝ գրաւո>գրաւո>աբ-գաւո հաջորդական փոփոխություններով. Հնի. արմատի իմաստն է «ճշուղ, արմատ, սոս, ճիպոտ». ցեղակից լեզուների ձևերն են հուն. ῥίζη «ճշուղ, սոս, ճիպոտ», ῥίζωμα «էլու. բլբժնաբլբ»՝ «մատաղ սոս», այբ. gránzē «արմատ», լատ. radix «արմատ», կիմր. gwraidd (<՝քրժիո) «արմատներ», գրուց տոս. ճրպզ. հին կրն. gruelten «արմատ», զոթ. wourts «արմատ, անգութ. wurz «բույս. արմտիք», հին իւլյ. urt «արմտիք. սազարթ». röl «արմատ» և այլն (Պոկ., 1167):

հայերենում քր>բզ փոփոխության համար համեմատելի է հնի. քրց'>հոյ. կրքիմանի (<՝քրքիմանի<՝քրքիմանի):

16. ԱՐԳԵ, ԳԵՂԱՐԳԵ

Արգե բառը նժԲ-ում բացատրվում է իբրև «նիղակ, տեղ, աշտյա», որ ընդունում է նաև Հ. Աճառյանը (Արմ. բառ., Ա, 661): Այս բացատրությամբ արգե նույնացվում է ն՝ նի-գակի, ն՝ տեղի հետ, որոնք, սակայն, բոլորովին տարբեր բաներ են: Յովոթ արտի մենք շուենք՝ հայոց հին գեղերի ու սագմի գործիքների գիտական ուսումնասիրությունը և նկարագրությունը, որպեսզի հնարավորություն ունենալիք պարզելու զրոնց տարբերություններն ամենայն մանրամասնությամբ ու ճշգրտությամբ, համեմայն զեպս նիղակի և տեղի տարբերությունը հնչուովյամբ բացահայտվում է ըստ զործածության: Տեղը սուր սլաք էր, որ զործածվում էր որդեւ ձեռքով նետելու զենք, ի տարբերություն նետի, որ աղեղով էր արձակվում. այս երկուսի տարբերությունը պարզորոշ կիր-պով երևում է հետևյալ կապակցության մեջ. «Շուն ոչ միայն սոս բարանց հանդուրժէ ձիգս՝ ընդդէ կալով, այլև սո տիգոց և նետից բնղզէ մարձակելով՝ հարուածոցս» (Փրկոն, Ա. կրօնմարտ. ըստ նժԲ): Միևնույն ժամանակ, տեղը որպէս սուր սլաք ազդուցում էր նիգակի մայրը: Այս էլ հաստատվում է բազմաթիվ վկայություններով, որոնցից լավագույններն են. «Մանուկ քուզ նիղակին ի ձեռնն կալեալ, և նիղակուն ի կատափն մատուցեալ ծծէր զարբայն վարազդատ» (Բուզանդ), այսինքն՝ նիղակի տեղը (= սուր սլաք) ձեռքին բռնելով, նի-գակով (= նիղակի բնով՝ կոթով) ծծում էր արտ վարազդա-տին: «Տեսցեն զբերովբէն և զսուր տէջ նիղակին» (Նիբնմ. ըստ նժԲ):

Քանի որ նիղակը և տեղը բոլորովին տարբեր բաներ են, ապա արգե չի կարելի միաժամանակ թե՛ մեկը համարել, և թե՛ մյուսը: նժԲ-ի բերած զործածությունները ցույց են տալիս, որ արգե խոցելու զենք էր. դա երևում է հասկացնա հետևյալ կա-

պակցութլումից. «Ի պատերազմի յախտեանն սուր արդեանց ի սիրա սոսուցու» (Փիլոն. բառ ՆՃԲ): Հարց է, թե նա նետու՞ն է զենք էր, թե ոչ, և եթե այո, ապա նո՞ւրիսն էր, ինչ որ տեղը Թե՛ առաջին և թե՛ երկրորդ հարցի պատասխանը ապիս են արդև բառից կազմված բարբոթությունները: Այսպես՝ ունենք արդևրենկից բառը, որ նշանակում է, թե արդև նետուու զենք էր, ինչպես և՛ տեղը: Բայց տեղը սլար էր, որ կարող էր և՛ տոսն՝ ձին զրեծածվել, և՛ սլարցվել նիզակին՝ որպես խոցող սուր ծայր: Արդև միայն նետուու զենք էր, ուրեմն՝ նիզակից փոքր, որով և կարծես թե նույնանունով և՛ տեղի հետ, ինչպես կարելի է հասկանալ նաև արդևրենկից բառից: Սակայն դրա հետ միասին ունենք նաև արզնատլզ բառը, որը ցույց է տալիս, որ արզև նույնպես իր ծայրին ունի տեղ, որով խոցում էր. դա սլարը կերպով նրեում է հասկացված հետևելու կապակցություն մեջ: «Ոչ արդևտարիցա խոցեցաւ մարմին եղեայ բանն աւշարչարե- լի» (Հովհաննես Սարկիսազ. բառ ՆՃԲ), Այս բուրբից կարելի է եզրակացնել, որ արզև նիզակի նման, բայց շատ ավելի թեթև զենք էր՝ ձեռքով նետելու համար. նա չէր նույնանուն նաև տեղի հետ, որ է՛լ ավելի փոքր ու թեթև նետուու զենք էր (հմտ. «Ոչ տիգաւորք և արդևտարք շարք», ՆՃԲ, Ա., 350): Քանի որ արզև կարող էր իր վրա կրել անց, ապա պարզ է, որ նա ամօր փայտի ձող էր՝ սուր ծայրով կամ ազուցված սուր սլարով (տեղով): Ըստ այսմ արզև բառը ծագում է հնդ. *rēt-, *rōt-. *rāt- արմատի ստորին ձայնդարձով ձևից (*rāt), որի 1-ն օրինակաբարեն ձայնեղացել է ձայնորդից հետո (r>լ) և սկզբից ավելացել էր և՛ ձայնավորը -ից առաջ: Ցեղա- կից բունուրից մերին առավել մոտ են հին բարձր գերմ. ruota, գերմ. Rute «գավազան, ձող», հին եկեղեցաբարտոնա- կան ratīste, ratovīste «նիզակաբուն» (Walde—Pakorny, II, 368): Հնդեվրոպական արմատն ունեցել է «ձող, բարակ ծառարուն» իմաստը, որից և զարգացել են «գավազան, նի- զակաբուն» և մեր արզև-ի իմաստները. իմաստի զարգաց- ման համար հանմանտեղի է եկտ բառը, որի հին. *nad- ար- մատը նշանակել է «եղեգն»:

Ոչազբավ է նաև արզև բառի հոլովումը. ՆՃԲ-ն տալիս է միայն հոգեանկին՝ արզուեմ, արզեանց: Հայտնի է, որ Ե հանրող բառերը, նույնիսկ նրանք, որոնք նախապես Ե-ից առաջ ունեցել են ի ձայնավորը, հոգեանկի սեռականում ունե- նում են -անց և ոչ թե -եանց (հմտ. հարսն-հարսին- հարսանց, զառն-զառին-զառանց են): Արզև բառի այս շեղումը կարելի է բացատրել նրանով, որ եզակիում ունե- ցել է նախապես սեռականի—նաև վերջավորություն, ինչպես՝ ձեռնուլ, գլուխտ են: Այս բացատրությունը չի հիմնավոր- վում, որովհետև զարանավանկի ր ձայնավորին հարողող Ե-ով բառերը այդ հոլովման շին ենթարկվում: Մնում է են- թադրել, որ նախապես այդ բանն ունեցել է արզև, արզան, արզանց ձևերը և արզին (արդինք) բառի համարանությունը ստացել է —նաև հոլովումը: Մեր այս ենթադրությունը հաս- տատվում է գեղարզև բառի հոլովումով, ըստ որում ունի և՛ գեղարզան, գեղարզանց, և՛ գեղարզեան, գեղարզեանց ձևերը: Սակայն սա նշանակում է նաև մի այլ բան. «Արմատական բառարանում» արզև և գեղարզև բառերի տակ 2. Սճառչանը կասկածանքով նորոգում է, թե կապ ունե՞ն այդ բառերն ի- բար հետ: Մեղ թվում է, թե կապը բացահայտել էրան իբրև ապացույց է ծառայում ամենից առաջ ձևարանական հաս- կանիքը՝ հոլովման նույնությունը, Բայց իմաստային կապն էլ ակնհայտ է. ինչպես դրեանք, գեղարզը նիզակից ավելի մեծ, խոցելու ձևումամարտի զենք էր: Նրա մեծությունն մա- սին կարելի է գաղափար կազմել «Աստվածաշնչի» հետևյալ հատվածից. «Թուն գեղարզան նորա իբրև դատորի ոստայ- նանկից. և տէլ նորա թ վեցհարեք սկեղէ երկաթոյ» (Ա Թար., մէ, 7): Եթե սիկը հավասար է 6,8 գրամի, ինչպես բնորոշված է, ապա՝ հատվածում հիշված գեղարզի միայն տեղի կշիռն է՝ ավելի բան 4 կգ, իսկ բունը՝ ոստայնանկի ստորու շափ, Գեղարզի և նիզակի տարբերությունը շեղու- վում է նաև «Հաղազս պիտուրի» գրքի հետևյալ հատվածում. «Ոչ ի գեղարզանց վերածուրելով, և ոչ ի նիզակաց» (Ըստ ՆՃԲ): Այսպիսով, պետք է բնորոշել, որ գեղարզն նի-

զգալի ավելի մեծ տեսակն էր՝ հաստ ու երկար բնով և խոշոր անդով, թեև ուշ շրջանում զեղարդի երկու տեսակ են տարբերում՝ մեծ, որ գործածվում էր ձեռնամարում, և կորճ՝ որ հեռավոր նետում էին թշնամու վրա՝ Քանի որ, ինչպես վերը ցույց տվեցինք, արդև նախապես նշանակել է բուն, ձող, կոր, այսպ՝ զեղարդն բառի մեջ էլ այդ իմաստը պետք է ենթադրել, որով ամբողջ բառի նախնական նշանակությունը կլինի զեղի արդև, այսինքն՝ զեղի բուն, ինչպես ունենք նիզակարուն (= նիզակի բուն): Ըստ այսմ, ԳճԳ բազադրին էլ պետք է նշանակած լինի տեղ, սլաք կամ հման մի բան, որ ճշտել հնարավոր կլինի միայն բառի ստուգաբանությունն իմանալու դեպքում:

17. ԱՐՏԵՎԱՆ/ՈՒՅՔ/

Ավանդված է զատական շրջանից՝ սովորաբար հոգնակի գործածությամբ, բայց Հ. Աճառյանը հիշում է նաև աբուական եզակի գործածությունը Աստվածաշնչի մեջ (Աբմ., Ա, 763): Կազմված է -ան ածանցով. ուրիմն արմատն է արտե, որ ծագում է հել. "derop սեռանից" արմատի "drep- ձեխց, ինչպես հունարեն ὄρωπτειν, ὄρωπτειν սեռանից" բառը (Pok, I, 212): Հայերենում իբրև կանոն dr տեղափոխությամբ դարձել է rd (հմմտ. "dro->արտ-որալ), այսպ՝ րմ և ստացել և նախադիվիվածը. հնի. p-ն ձայնավորից հետո դառնում է ւ, ուստի և "drep>rdep>rtep>արտե: Իմաստի տեսակետից դժվարություն չի առաջանում, որովհետև -ան ածանցով ստացվել է տեսանլիք բնչհանուր իմաստը, ապա և՛ բարբիշ, ինչպես որ այս բառն էլ ստացվել է բարբիլ քաղք բացել-փակելը՝ բայից:

18. ԱՐՏ ՈՐ ԱԼ

Այս բառը գործածված է միջնադարում (Վաստատից ցիրք, Վարդանի Քնակք և այլն), գործածվում է Պուլի, Խարբերդի, Նոր-Նախիջևանի և մի քանի ուրիշ բարբառներում:

և նշանակում է շտապել, աճապարել: Գոյակալի ձևերն են արտուր, արտուբն: Հ. Աճառյանը «Արմատական բառարանում» (հտ. I, էջ 766) արմատական ձևն է համարում արտար-է. բայց պարզ արմատն է արտ-, որ ածանցված է -ար մասնիկով, ինչպես օճենք՝ գորել, մտաբել և այլն: Սազում է հնդեվրոպական *dro- արմատից, որ նշանակում է ավազել, շտապել: Հմմտ. հին հնդկերեն prati ավազում է, շտապում է, հունարեն ὄρωπτειν ավազում նմ (վրայով), հին բարձր գերմաներեն zittarom շտապում նմ, գոթերեն anatrimpan «չըջել, շարժվել», միջին բարձր գերմաներեն trumpfen ավազել, անգլերեն tramp, trample ամռնել և այլն: Հայերենը ծագում է drā- ձեխց, dr>rm օրինաչափ տեղափոխությամբ (հմմտ. *drakru>արտատ, dhabbro>դարբին և այլն) և բառասկզբում r-ից առաջ ա-ի հավելումով, որից և ստացվել է արտ- պարզական արմատը:

19. ԱՐՏ (ԱՐՏԵՆ, ԱՐՏԻՔ)

Գրաբարում գործածվել է անո իբրև անկախ բառ՝ բարբի լուր, սրբախալի լուր, բարև, ողջույն» նշանակություններով, բայց ավելի հաճախ՝ անտիք ածանցավոր ձևով, և իբրև բայ՝ անտիլ: Գրվել է նաև անտ ձևով, սակայն ածանցումների մեջ անկա է միայն անտ (առանց է>ի փոփոխության): Սազում է հնի. aud «խոսել» արմատի ayeid, ayeid անած ձևերից, որոնցից օրինաչափորեն ստացվում են անտ (<ayeid) և անտ (<ayeid). ցեղակից լեզուներում ունենք. հուն նմա սփառաբանել, հին հնդկ. vadati «խոսում է», ողջունում է», vandate «գովք, պատկասալից ողջույն», հուն. ասնո (<σFeiv) «երգել», թոթ. AB. wātik, B watik «գրամայել» և այլն:

20. ԲԱՅ, ԲԱՅ ՈՅ

Այս բառը նշանակում է թղալանների սրչ կամ զազանների ձմեղագ բառաստեղծքը. գործածված է հայ հին մատն-

նագրութիւն մեջ. օրինակ՝ «Ասիո՛ւ գոլեաց ի յանտարին և զԻշախանձ արքն ի բախն»։ Ավելի գործածված է քայոց ածանցյալ ձևով, ինչպես և՛ քայիլ, քայաճալ քայաձևերով, ինչպես՝ «Ազգք ազգք անհրատց ի մանրանի քայեցեալ անշարժ կայ»։ Կոչ. «Բայանան օձք ընդ հողով. և որք իրենանց են ի սորս և ի սոյգս հրկրի» Փիլ. իմ., «Ազգսունք բնականք. և արշոյ յառաջարդն քան զմանե ի բայոց մտանելոյ» Եզն. և այլն։ Գրված կա նաև քան, որ սակայն հետին է։ Մագուս է հեղեվրոպական *bheu- արմատի *bhya-> *bha ձևից. բնգհանոր «բնակարան, տուն» իմաստով նույն արմատից կան բազմաթիվ բառեր ընդակից լեզուներում. ինչպես՝ հին իսլանդերեն buet «բնակարան», չեխերեն budlo «կացարան, բնակարան», հին պարսկերեն both «խրճիթ», լիտվաներեն butas «տուն» և այլն։ Հայերենի սորքը՝ իմաստով նույն արմատից ունենք՝ հունարեն βουσία, բουσιός «վայրի կենդանիների որջ», լիտվաներեն bukias «կենդանիների որջ», հին իտալացիներեն bōl «կենդանիների և մարդկանց ապրելու տեղ», որոնք բոլորն էլ նախապես նշանակել են «ապրելու տեղ, բնգհանրապես, իսկ հետագայում՝ «կենդանիների ապրելու տեղ, որջ»։ Այսպիսով, հայերեն քայ-ի կապը *bhut-, *bhut- արմատի հետ հաստատվում է։ Չայեղարձի համար կարելի է համեմատել գոթերեն bauen «բնակվել», գերմաներեն bauen «կառուցել» և այլն։ Այս արմատից են նաև՝ հայ. բայ, բուսանիմ, բոյն (*bheu-no), բուն (ծառի), սևո. բնոյ (*bhuno), թեև Պոկոսեին այս երկուսի (բոյն, բուն) մասին վերապահովությամբ է գրում։

21. ԲԱՐԱԿ «ՈՐՈՍ ԾՈՐՆ»

Հայերեն բարակ «որսի շուն» բառը, որի հնագույն գործածությունը գտնում ենք Եղիշիի մոտ, և զործածական է նաև ժամանակակից գրական հայերենում, ստուգաբանված չէ։ Բառի ձևը, յուր-սկ հանգրվ, թույլ է տալիս ենթադրել, թե նա իրանական փոխառություն կարող է լինել։ Դեռևս նձԻ-ի հեղինակները, ինչպես և Զարեհայանը, ճիշտ կերպով

նկատել են այդ բանը և հիշյալ բառը կապել են պարսկերեն պարագ «շուն» բառի հետ, որ սակայն գոյություն չունի։ Այդ իմաստով և այդ ձևով կա տաճկերեն باراق baraq «որսի շուն» բառը, որի մասին կիսովի ստորև։ Հիշյալ հեղինակները տաճկերեն այդ բառն անշուշտ պարսկերեն են համարել։ Մոֆուս Բուզգան հայերեն բարակ բառը կապում է իտալերեն bracco, baracco «որսի շուն» բառի հետ, որ մերժում է Հյուրըմանք, քանի որ այդ բառը, ֆրանսերեն braque, անգլերեն brach «որսի շուն» բառերի հետ, ծագում է գերմաներեն bracke, հին վերին գերմաներեն bracko հոմանիշից, որի հետ նույն է հին ֆրիզերեն barm—braccus (ավելի մանրամասն տե՛ս Հ. Ա.Ճ ա.ձ.ան, Հայերեն Արմատական Բառարան, հատոր Ա, էջ 994)։ Հակառակ Բուզգանի, մենք գտնում ենք, որ հայերեն բարակ բառը իրանական ծագում ունի։ Նա կապվում է պահլավերեն bārak «արագավազ ձի, նժույգ», Renner, Ross բառի հետ, որ գտնում ենք Nyberg, Hilfsbuch des Pehlevi, II, Glosser, Upsala, 1931, 32-րդ էջում։ Բառը ծագում է հին պարսկերեն bar- «արագ շարժվել, արշավել, sich rasch bewegen, stürmen» արմատից (Bartholomae, Altiranisches Wörterbuch, Strassburg, 1904, S. 943)։ Բառի այս սկզբնական իմաստը լույս է սփռում թե՛ պահլավերեն bārak բառի ծագման, և թե՛ հայերենում նրա կրած իմաստափոխության ընթացիկ վրա։ Նախնական «արագ շարժվել, արշավել» իմաստից հեշտ է բխեցնել պահլավերեն bārak բառի «արագավազ ձի, նժույգ» իմաստը։ Ինչպիսի նախնալի է, որ բառին այս իմաստը տալով նկատի է տանվել ձիու մի հատակաելի՞ր՝ արագավազությունը։ Նույն իմաստով բառն անցել է նաև նոր պարսկերենին, միանգամայն օրինաչափ կերպով ստանալով ۵ باراک bārak ձևը։ Մի անգամ արգեն նժույգի իմաստը նստանալով՝ բառն սերիշ բարդությունների բաղադրիչ է դառնում ոչ միայն իր նախնական «արագ շարժվել, արշավել» իմաստով, այլև՝ անմիջականորեն նոր իմաստի հետ կապվող «հեծյալ, լավ ձիավար» իմաստներով։ Այսպես՝

նույն արմատից են կազմված՝ հին պարսկերեն barəma հատուկ անունը, որ նշանակում է «արշավող, հեծյալ», և baro «1. արագավազ ձի, նժույգ: 2. Հնձնող, նժույգով արշավող» բառը (Bartholomae, *ibid.*, 944): Հատկապես վերջին բանն ուշադրավ է նրանով, որ կազմված է baro և aspa բողազդրիչներից, որոնցից երկրորդը, ինչպես գիտենք, նրշանակում է «ձի»: Ուստի և՛ այստեղ էլ bar- արմատը հանդես է գալիս յուր նախնական «արշավիչ» իմաստով, որով և ամբողջ բարդությունն ստանում է «արշավող ձի, արագավազ ձի» իմաստը: Այս նույն արմատից և նույն ճանապարհով է ստացվել նաև Ավեստայի bāsar- < *bartar «հեծյալ, առկես, Reiter» բառը (Nyberg, *ibid.*, 32): Վերջուպես նույն արմատի հետ են կազմված նաև հին պարսկերեն assabara «ձիով արշավող», Ավեստայի ayarbeara «մի օրվա ճանապարհ, Tagesritt», պաղեների bar «հեծանելի, ձի, Reittier» բառերը (Hörn, Grundriss der neupersischen Etymologie, Strassburg, 1893, § 160): Այս բոլոր բառերի համեմատությունը ցույց է տալիս, որ պահլավերեն bārak բառը յուր ծագմամբ նշանակել է բնդհարապետ «արագավազ, արարչավ» և հետագայում միայն բառիմաստի նեղացման հայանի երեսյթի շնորհիվ հատկացվել նժույգին: Այստեղից էլ արդեն հեշտ է եզրակացնել, որ այդ նույն բառը յուր նախնական «արագավազ, արարչավ» իմաստով կարող էր հատկացվել նաև ուրիշ կենդանիների, առանձնապես որսի շան, որի բնորոշ հատկանիշն է արագավազությունը: Այս ղեկրում էլ մենք ունենք բառիմաստի նեղացում, այն տարբերությամբ, որ արագավազ ձիու փոխարեն այստեղ հանդես է գալիս որսի շուկը, որ այս կարգի իմաստափոխությունը միանգամայն իրական է, հեշտ է ապացուցել նույն պարսկերեն تازی tazi «արագավազ» բառի հնուագայում ստացած իմաստների համեմատությամբ: Այդ բառի արմատն է իրանական tač «վազել», որից՝ Ավեստայի tačaiti «վազել, հոսել», պահլավերեն taxtan, tačēt, նոր պարսկերեն یاختان taxtan تازم tazam

«վազել» (Hörn, *ibid.*, § 368): Պահլավերենում նույն արմատից ունենք tačik «1. արագավազ: 2. Միջազեռցի, արար: 3. Արարական բառը, որից՝ նոր պարսկերեն تاجیک tājik, նաև tazik, تازیک tazik «արարացի ծնունդ, որ մեծացել է Պարսկաստանում և تازی tazi «1. արագավազ (օր. asb-i tazi «սառնիկ ձի»): 2. Արար (ինչպես՝ zabāni tazi «արար. լեզու, արարչական»): Այս վերջինից թարգմերենն էլ աճնի tazi բառը «որի շուն» իմաստով: Իմաստափոխության հիշտ նույն պատկերն են ներկայացնում նաև հայերենի տանիկ և թալի բառերը: Առաջինը, որ ափանջված է հինգերորդ դարից, ունի «արագավազ և «արար» իմաստները, ըստ որում առաջին իմաստով նա գործածվում է թե՛ ձիու և թե՛ ուղտի համար, ինչպես օրինակ՝ տանիկ ձի, Բուզ. դ. 47, էջ 134, տանիկ ուղտ, Բուզ. դ. 54, էջ 141 և այլն: Ինչ վերաբերում է թալի բառին, որ գործածական է ժողովրդական խոսակցական լեզվում, ապա նա էլ՝ ծագած լինելով նույն արմատից՝ ստացել է ավելի նեղ իմաստ և, հիշտ ինչպես թուրքերենում, նշանակում է «որսի շուն»: Ուշադրավ է, որ այս վերջին իմաստից ստացվել է նաև մի նոր, փոխարևական իմաստ՝ «նիհար, լզար»: Գրա պատճառն այն է, աշխուշտ, որ որսի շունը սովորաբար բարակ ու երկար ոտքերով և նիհար է լինում, ուստի և՛ նմանությամբ գործածվում է նաև իբր փոխարևություն (հմմտ. Եփեսելի, թալի է գառի, կամ, իբր «արագություն» լզար-թալի և այլն: Տանիկ բառի մանրամասն քննությունը տե՛ս Հ. Աճառն աճ, Հայերեն արմատական բառարան, հատոր 2, էջ 760—764): Այս բոլորը ցույց են տալիս, որ «արագավազ» բառը կարող է իմաստի նեղացմամբ հատկացվել թե՛ ձիուն, և թե՛ շանը: Այս էլ իր հերթին նշանակում է, որ հայերեն բարակ «որսի շուն» բառի ծագումը՝ պահլավերեն barak բառից՝ միանգամայն բնիկուն է: Վերջուպես այդ բանը հաստատվում է նաև նույն պահլավերեն բառի ուրիշ փոխառություններով: Будагов, Сравнительный словарь турецко-татарских наречий

(СНБ, 1869, 2 հատոր) գրքի առաջին հատորի 251-րդ էջում գտնուում ենք թուրքերեն بَرَاقَ barāq «որսի շուն» և կիրգիզերեն بَرَاقَ barāq «մի տեսակ որսի շուն, րոժ պսղես» բառերը, որոնք հեղինակը, առանց որևէ հիմքի, կցում է վեջը հիշված ֆրանսերեն braque բառի հետ, նկատի լսանելով հնչյունական անհամապատասխանությունը և, մանավանդ, շունենալով որևէ պատմական հիմք կիրգիզերենի ու ֆրանսերենի փոխազդեցության համար: Անտոյանը, յուր Քերմաստական Բառարանում» (հատոր Ա, էջ 995) հիշելով այս բառերը, հարցնում է, թե արդյոք որանք կապ ունեն հայերեն բարակ բառի հետ: Այդ բառի մեր ստուգաբանությունը միանգամայն հաստատապես ցույց է տալիս, որ թուրքերեն barāq և կիրգիզերեն bārāq բառերը նույնպես ծագում են պահլավերեն bārak բառից և վերջված են պահլավական շրջանում, այսինքն՝ Սասանյանների հարստության ժամանակները, եթե ոչ ավելի շուտ: Անշուշտ նույն ծագումը պետք է ունեցած լինի նաև շաղափայրեն بَرَاقَ bārāq «մի տեսակ որսի շուն, րոժ պսղես» բառը, որ Բուրջուդը՝ բաղեղով 1820 թվին Կալուկայում հրատարակված շաղափայրեն-պարսկերեն բառարանից, հիշում է յուր բառարանում: Բառի մ բաղաձայնը Դ-ի փոխարեն՝ հավանաբար արդյունք է բարբառային տարբերության, եթե ոչ՝ կրչազբաղան կամ տպագրական վրեղակ:

Այս բոլորը նշանակում են. 1. պահլավերեն bārak բառը իր սկզբնական իմաստով նշանակել է «արագավազ» և հետագայում միայն իմաստի նեղացմամբ հասկացվել է ձիու մի տեսակին՝ նժույգին: 2. Հայերեն բարակ «որսի շուն» բառը փոխառյալ է պահլավերենից, երբ այդ բառը պահլավերենում իմաստի հիշյալ նեղացումը չէր կրել, և հայկական հողի վրա իմաստի նեղացման մի այլ ընթացք է ստացել՝ նախազգվելով շան արագավազ տեսակին՝ որսի շան: 3. Իմաստափոխարյան այս վերջին պատկերն են ներկայացնում

նաև բարբերեն bārāq, կիրգիզերեն bārāq և շաղափայրեն bārāq բառերը, որոնք նույնպես փոխառյալ են պահլավերենից:

22. ԲԱՐԳԱՒԱՃ

Հին մատենագրության մեջ զործածվել է սոցանձայի, փառավոր, անվանի» նշանակությամբ: Անշուշտ բարգ բառ է, որի առաջին բաղադրիչն է բարգ. ծագում է հնթ. *bharg «լցնել, ուռճացնել» արմատից, որի համար Պոկոնին տալիս է *bharek^U, *bhareky ձևերը (I, 110—111): Յեղակից ձևերն են լատ. farcire «լցնել, լիովի ցննել», farim տեղով խիտ», միջին իտալերեն barc «սաստոխություն», այբան. bark «տուսցք», mbarē «ամբողջպահս, լիովին», լատ. frequens «հաճախ, շատ, բազում», լիտ. և prakār, և prakre «ամար, հաստատուն» (WP, II, 134. Pok., I, 110—111): Ըստ այսմ, հայերենում էլ բարգ պետք է նշանակած լինի «շատ, լիովին»: Երկրորդ բաղադրիչը՝ ալան նույնն է ալաչ «ժայռ, երգ, մեղմ և ցաղր» երգք բառի հետ: Այս բառը փոխառված է պահլավերենից. պահլավ. ձնն է āvāc, որը պիտի տար հայերեն ալան, ինչպես՝ ārdē > արթիթ, gac > գան, dahē > զանիթ, hančār > հանցար, čašak > հաչակ և այլն: Ըստ այսմ, ալան ավելի հին ձնն է, որ միջնադարում դարձել է ալաչ, այլն՝ ավան (Արմ., Ա, 799): Բարգավան բառի մեջ ալան նշանակել է «համբավ, հաչակ», սաստի և ամբողջ բառը նախապես ունեցել է «շատ հաչակված, մեծահամբավ» իմաստը: Լեզուների մեջ ստորական է ձայն բարդի «հաչակ, համբավ» իմաստն ստանալը. հայերենում հաչակ բառը նախապես նշանակել է սուրբոտության ձայն, աղաղակ» և ապա՝ «համբավ»: Պահլավերեն նույն āvāc բառը նոր պարսկերենում ստացել է նաև «հաչակ, համբավ» իմաստը, որից է փոխառվել նա աֆղաներեն, թուրքերեն և քրդերեն թնձ «ժայռ», շաղափայրեն āvaze «համբավ» և այլն: Աշխարհաբարում բարգաւան, բարգաւանի ստացել

են յլով զարդացած. բուն կերպով զարդանայ՝ նշանակու-
թյունը. երկրորդ րադարկչիչ իմաստի մթազնվելու և ամ-
բառի նաև կապվելու նտեսնքով, մինչևևս ստաշին բա-
ղադրիչը պահպանել է իր հին՝ լիովին, շատս իմաստը:
Հնի. *bharq կամ *bharek^{II}, bharek^{II}, ձևերից հայերեն բարզ
ձևի ստաշացումը միանգամայն համապատասխանում է
հնչյունական օրենքներին:

23. ԲԱՐՁՐԱՔԵԱ՝Ց, ԹԵ ԲԱՐՁՐԱՔԻ

Այս բառը միայն մեկ անգամ է գործածվել Բարսեղի
«Ճատք վանս վեցօրեից արարչութեանն» զրքի գասական
շրջանի թարգմանության մեջ, հետևյալ հատվածում. «Վասն
այնորիկ է երկայն պարանոց ուղտու, զի դիրաւ լիցի նմա
ձկտու ի բարձրարեթ ճասակէն առ ի հասասարութիւն բարձ-
րարեաց ոտիցն. զի յորժամ խնարհեցի և հասցէ ի թա-
թուլան, համարձակ լինի նմա ստնուլ զդարմանս իւրոյ կե-
նացն ի թիոց և ի խոտոց որ օւնիցին զերես երկրի»: Եւթ
բերում է այս բառը բարձաբիաց ձևով և բացատրում թոր
ունի զբարձր արեանց, բարձն և սոս, բարձրարուն»: Եունչ
ձևով բառս հիշում է Էր. Աճառյանը «Երանտական բառարա-
նում», ԱԲ բառի բարդությունների շարքում և բացատրում
թարթր ոտքերով: Վերջապես, նույն ձևն է բերում նաև Ստ.
Մալխասյանցն իր բառարանում:

Կարծում ենք, որ բառարանների մեջ ընդունված այդ ձևը
պետք է մերժել, և ուղղել բարձաբի, հետևյալ պատճառարա-
նությամբ. Բարսեղից բերված հատվածում հիշյալ բառը գոր-
ծածվում է որպես անական-որոշիչ սոս բառի, որը զրված է
հոգն. սեռ. հոլովով: Որոշիչը համաձայնել է որոշյալին, ուստի
և բարձաբիաց հոգն. սեռ. հոլովածն է: Ըստ այսմ, բառի ն-
զակի ուղղականը պետք է լիներ բարձաբի՝ կազմված բարձր
և աբ բառերից՝ ի անանցով, որ կնշանակեր բարձրարուն,
բարձրտուն: Հայկազյանի հեղինակներին թերևս շփոթության

մեջ է գցել աճաց(բ) բառը, որ նրանք դիտում են իրեն սաս-
ձին բառ. հիմնվելով միայն երկու վիճակային վրա- դրանք են.
«Նի՞ք կարասցէ թափել հովի ի բերանոյ առի՞ժու արեանց եր-
կուս (Ամով. Գ. 12). «Երկու արեանց, զարշապարքն՝ որք
ընթացան ի ծառն, և ինն ի դրախտն» (Հմբ. Ամով.): Այս
երկու նախադասությունների մեջ էլ աճացս ձևի հայցական
համարելը կասկածելի է. երկրորդի մեջ հայցական համարելը
անբացատրելի է զարձնում նախադասությունը (= երկու ոտ-
քերը, զարշապարենքը, որոնք դեսցին զեպի ծառը և ելան զը-
բախտից). անիմաստ է «երկու ոտքերը, զարշապարենքը դես-
ցին»: ավելի ճիշտ կլիներ թարգմանել (վերացնելով ստորակի-
տը)՝ երկու ոտքերի զարշապարենքը դեսցին (այս զեպում
կունենանք սովորական փոխաբերություն մարտ ամբողջի փո-
խարեն): Ինչ վերաբերում է առաջին վիճակայինը, ապա հիշտ
հասկանալու համար ստիպված ենք մեջ բերել Ամովսի մար-
դարեությունը այդ հատվածն ամբողջությամբ. «Ձորօրինակ
եթէ կարացցէ թափել հովի ի բերանոյ առի՞ժու արեանց եր-
կուս, կամ ըլթակ մի օնկան, այնպէս զերծցին որդիքն իւրաւե-
լի, որ քնակեալ են ի Սամարիա, զէմ յանդիման աղզին, և ի մէջ
Գամակացւոց»: Այս հատվածից հեշտ է հասկանալ, որ աճաց-
ցը մասնական սեռական է երկու թվականի համար (ոտքերի
երկուսը = ոտքերից երկուսը). ճիշտ. Եւ կոտորեաց Գաւթ
յատրեաց եւթն հազար կառաց, և քառասուն հազար հետևա-
կաց (ԱՄնացորդաց, ԺԹ, 18). Եւ էր ամենայն իսրաէլի հա-
զար հազարաց, և հարիւր հազար արաւաց որ ձելին սուսեր, և
յուզաս չորեքնարիք լիսուն հազար արաւաց սուեւրաւաց
(ԱՄնացորդաց, ԻԸ, 5): Ինչպես կրեւում է բերված օրինակ-
ներից, թվականների հետ սովորական է մասնական սեռակա-
նը, ուստի և աճացս երկու կապակցության մեջ էլ բուն
հայցականն է երկուս, իսկ աճացս սեռական: Ի զեպ, Ձոհ-
րապի հրատարակության մեջ ձեռագրական տարբերակների
շարքում բերված է արքաց երկուս տարբերակ, որ արդեն
կասկած չի թողնում մեր բացատրության նկատմամբ, բոս
որում արտագրողն էլ հասկացել է իրր աբ բառի հոգնակի

սեռական: Ըստ այսմ, ահեց բառը պետք է հանել բառա-
ցանկից, դիտելով այն որպես ալ «տաք» բառի հոգնակի սե-
ռական-տրականի ձև (այ, աքից և աքեաց), իսկ ս-երը, ո-
րոնք դիտվել են որպես հայցականի վերջավորություն, պետք
է համարել հոր: Համապատասխանորեն բարձրաբաց բառի
համար պետք է ուղղականը համարել բարձրաբի:

24. ՔԻԼ, ԳԱԼ

Այս երկու բառերն էլ հանդիպում են Այլունեցու «Մեկնու-
թիւն բերականին» աշխատության մեջ, հետևյալ հատվածում.
«Իսկ առասական է, այսինքն տեսակատր անուն, որ զհա-
սարակական ինչ էութիւն ասէ, որպէս մարդ կամ ձի կամ
ոչխար կամ արջառ և այլփոխք ամենայն զզգ կենդանեաց,
աճականաց և անասնից: Եւ պիտի այնորիկ ասէ հասարակա-
կան զայսոսիկ, զի ի սոցանէ բաժանին մի մի անհատ գո-
չացութիւնք՝ Մարկոս, Աղամ, հայր, որդի, թոռն, խնձորի,
տանձի, մանուշակ, շուշան, տլփիին, սղոցն, դալն, լոթն,
բիւն, կապտոն, ովկիան: Իսկ սեռականա իմն այս ի բազումս
կոտորի, որք են առասականք. և այսք են սեռքն. կենդանի,
տունկ, բոյս, ոչ կենդանի, աճական, անասն, ցամաքային,
ջրային, երկնային, հրային, օդային, թևատր, թռչուն, զա-
ղան, շորքոտանի, սղուն, լուղակ, զեռուն, խոտաբուստ,
ձեռնընդել, վայրենի, քանզի ամենեքին սորա ի բազում տե-
սակս բաժանին, զորս առասական ասէ»³: Բառարաններում
(ՆՃԲ, ԱԲ, ՋԲ) բիլ բացատրվում է «բաց կապույտ», իսկ դալ
«դեղնա-կանաչավուն»: Այս վերջին բառը քննության անկելով՝
Հր. Աճառյանը համարում է դալ-աբ բառի արմատը և ծա-
ղած համարում հնի. պարզ dhel արմատի ստորին ձայն-
զարձով dhլ ձևից: Հետագայում, սակայն, մերժում է թե՛
իր ստուգաբանությունը և թե՛ բառարաններում տրված բա-
ցատրությունը, և «Արմատական բառարանում» երկուսն էլ

համարում է ձկնանոններ, տալով հետևյալ մեկնաբանու-
թյունը. «ՆՃԲ սխալմամբ մեկնում է բառս զպարսպոցն ինչ
կամ դեղին և համեմատում է իտալ. giallo «դեղին» բառի
հետ: ՋԲ «թուի թէ արմատ դալար և դալուկն բառից»: Այս
հիման վրա Աճառ. Բազմ. 1898, էջ 370—1, կցում է դալար
բառին և սրա հետ միասին հանում հնի. dhel արմատի dhլ
հանդարձից: Ուղիղ մեկնությունը տվավ Մ. Աբրեղյանը
(տե՛ս Բիլ բառի տակ): Իսկ Բիլ բառի տակ գրում է. «ՆՃԲ
մեկնում է բառս «բաց կապույտ» և սրանցից է հանում պլուզ
կամ բլուզ (վերջին ձևը գոյություն չունի) և համեմատում է
իտալ. ևն «կապույտ», թրք. buludi «ամպադույն, կապույտ»
բառերի հետ, Ավելի խոհեմ է ՋԲ, որ դնում է «թուի բացա-
դույն կապույտակ»: Երկուսն էլ համաօտարացես սխալ են: Վե-
րի հատվածում դույների մասին խոսք չկա քնմլ, այլ բույ-
սերի և կենդանիների: Հեղինակը շարուն է նախ մարդկային
սեռի անուններ, հետո բույսեր և հետո ձկներ. այսպես, ձը-
կան անուն են հայտնապես՝ դլփիին, սղոց (սղոցաձուկ), լոփ
(այժմ լոթք) և կապույտ. ձկներ պետք է լինին նաև դալ և
ովկիան բառերը և մանավանդ բիլ, որ երկու ձկների միջև է
դրվում: ՆՃԲ չլիթվել է կապույտ բառից՝ որքանով գույնի
իմաստով, որին հետևել են դալ «զալար», լոփ «կարմիր»:
— Այս պատճառան մեկնությունը թվարկեց իմ մեր հա-
մալսարանի գլխախոսներից՝ հայագետ Մանուկ Աբրեղյանը:
(Աժմ. 1): Գծարկն, հակառակն երկու խոշորա-
գույն հայագետներին, սակայն մենք կարծում ենք, որ սրված
մեկնաբանությունը կարող է լրացման: Թշուրհմացություն-
ներից խուսափելու համար նախապես ասենք, որ մենք
հաշվի չենք անում այն փաստը, որ հայ նոր դրականության
մեջ, հատկապես քեարբրգություն մեջ, հաճախական գործա-
ծություն ունի բիլ բառը «բաց կապույտ» նշանակությամբ:
Մեր բանաստեղծների բառարաններից են առել բիլ բառը, և
այնուհետև մեկը մյուսից սովորելով՝ գործածել: Այնպես որ,
արդի դրականության լեզվում բիլ բառի հաճախական գոր-
ծածությունը ոչ թե նշանակություն չի կարող ունենալ Այու-

³ Н. А. Д о н ц. Двоннейскій и армянскіе толкователи, Петергоф, 1915, стр. 207—208.

նեցու հիշյալ հատվածի բիլ բարբ բացատրելու համար: Հեն-
վելով Մ. Արեղյանի բացատրության վրա, Հր. Աճառյանը
բիլ է դալ համարում է ձկնանուններ. որովհետև «Տեղիները
շարում է նախ մարդկային սեռի անուններ, հետո բույսեր և
հետո ձկներ», ըստ որում ովկիան բարբ նույնպես ձկան
անվանում է համարում (զգովարանում ենք ընդունել): Ինչ-
պես տեսնում ենք, մեծանուն հայադեղների համար միակ-
հիմունքը բառերի շարքն է՝ մարդկային սեռի անուններ, բույ-
սերի անուններ, ձկնանուններ: Մակայն իրականում այդ
շարքը այլ կերպ պետք է բացատրել. մեջ բերված հատվա-
ծում Մյունեցին խոսում է անունների մասին, հակադրելով
«հասարակական» և «անունական» հասկացությունները. հաս-
րակականը, ըստ Մյունեցու, այն անուններն են, որոնցից
թրածանվում են մի մի անհատ գոյացությունները: այս վեր-
ջինների համար իրեն օրինակ բերում է՝ Մարիսա, Ադամ
(հատուկ անուններ), հայր, որդի, թոռն (անձի հասարակ ա-
նուններ), խնձորի, տանձի, մանուշակ, շուշան (բուսական-
ներ), տլփին (ձկնանուն) և այնուհետև՝ սղոցն, դալն, լոբն,
բիլն, կապույտն, ովկիան: Օրինակների ամբողջ շարքը դիտե-
լով՝ տեսնում ենք, որ սղոց, դալ, բիլ, կապույտ բառերն
ունեն որոշիչ հոգ, իսկ մյունները՝ ոչ. պատճառը պարզ է. բո-
լոր մյուս բառերը, այդ թվում և վերջինը՝ ովկիան, գոյական-
ներ են, մինչդեռ որոշիչ հոգով բերվածները՝ ամականներ (սղոց
բառն էլ՝ ըստ մեր քերականների մեկնության՝ ստղ-ոց ստղոց,
կարճացնող, կտրող» է, այսինքն՝ դարձյալ ամական): Ստաց-
վում է այն, որ ն հոգով բերված բառերը բոլորն էլ ամական-
ներ են՝ գոյականաբար անված (սղոցը, դալը, բիլը, լոբը,
կապույտը): Արդ, եթև ընդունենք մեկնումը՝ հեղինակը
ձկների զանազան տեսակներն է անվանում, ապա պարզ է,
որ բիլ, դալ և կապույտ (հավանաբար նաև լոբ) անվանում-
ները տրված են ըստ գույնի: Այս տեսակետից առանձնա-
պես ուշադրով է կապույտ բառը. իսկապես այդ անվանումով
ձուկ կա, որ Հր. Աճառյանն էլ հիշում է «Փավտաական բա-
նաբանում»՝ նշելով նրանի խոսվածքը: Մեզրու շրջանում

Մեղրի դեպի ձկների մի տեսակը կոչվում է կիպիտ, որ է
կապուտի(կ). իբրև էլ այդ ձուկը կապուտադուն է, ինչպես
և նրանի կապույտը և այլ վայրերի կապուտիկ, կապու-
տակ, կապույտ և հման անվանումներով ձուկը (մեծ մասամբ
գետածուկ): Նշանակում է, բիլն և դալն էլ, եթև նույնիսկ
իրեն ձկնանուններ են գործածվում, ապա գույն ցույց տվող
բառեր են եղել նախապես ըստ այսմ, բիլ քրաց կապույտ»
և դալ «եղեղա-կանաչավուն» բացատրությունները, որ տա-
լիս են նձբ, ԱԲ, ՋԲ, Տիշտ են: Այս եղանակով մենք միավո-
րում ենք Արեղյան-Աճառյանի մեկնաբանությունները նա-
խորդ բանաբանների բացատրությունների հետ. բիլ և դալ
(նաև լոբ) գույների անվանումներ են, որոնք գոյականաբար
գործածվել են ձկների անվանման համար՝ ըստ գույնի հատկա-
նիշի, ինչպես կապույտը: Հասկանալի է, որ մեր այս բա-
նաբանությունից հետո Հր. Աճառյանի ստուգաբանությունը՝
դալ < հեխ, ժիլ մեում է ուժի մեջ: Ինչ վերաբերում է բիլ
բառին, ապա մենք այն կհայտնենք հետ. ԽԻԼ-ՍՕ-Տ Կա-
պույտ, դեղին, խարտաշ» անսմ ձևի պարզ ԽԻԼ- Կապու-
յտ, սպիտակ արժատի հետ (ՊՊԿ. I, 118):

25. Բ Ո Ղ Ջ

Այս բառը մեր մատենագրության մեջ վկայված չէ, արդի
յեղվում չի գործածվում: Մի անգամ գործածում է նրեմիա
Մեղրեցին իր բանաստեղծ «խոյլ» բառի դիմաց (էջ 144).
նույն տեղում ուժի և զրանից կազմված բառն բառը՝ քաղ-
լարտա, վրան պուրջ գուրս եկած» իմաստով: Բառիս գոյու-
թյունը և նշանակությունը հաստատում է արդի գավառա-
կաններից Տիգ. բողոջ «վերք, պատար», որից բողոջվիլ
«վրան վերքեր գուրս գալ»,—գրում է Հր. Աճառյանը: նրե-
միայի բղուն բառը ենթադրել է տալիս արժատի բուլջ ձևը,
որի ու-ն օղվել է ամանցման մեջ: ըստ այսմ, պետք է ըն-
դունել բողջ և բուլջ ձևերը:

ճրկուան էլ ծագում են հնչւ. *bhei-/bhol- արմատի *bhei- և bhōi- ձևերից, շ ածականով, որի համար հմմտ. զաղը, ջիեղ են: Հնդգվերտական արմատի իմաստն է «ուռչել», որից հայերենում ունենց բեղուն, բեղմն, բեղմնաւոր, բու-որ, բլուր, բուլ (զվւ.) «խմորագունդ», իսկ արմատի *b) ձևից՝ պալար, պղպղակ և այլն, որոնց մասին մանրամասնորեն խոսում է Հր. Ահառյանը (Արմ., Ա, 1138—1141):

Այս ստուգաբանությունը մենք կատարել էինք, երբ պրոֆ. Գ. Զահուկյանը մեզ արմատից իր նոր ստուգաբանություններ՝ մեքենայի վիճակում, որոնք և հետագայում հրատարակից «Պատմա-բանասիրական հանդեսում» (1965, № 1): Այդ հոդվածում նա այս բողջ բառը ծագած է համարում հնչւ. նույն արմատի *bholdhjo կամ *bholtjo ածած ձևից. անկախորեն ստուգաբանված այս նույնական ստուգաբանությունները փոխադարձաբար հաստատում են իրար: Նույն հոդվածում պրոֆ. Գ. Զահուկյանը այդ բողջ բառն է կապում բղջախոն բարդութեան բղջ բազադրիջ՝ բիղջ կամ բուլջ սկզբնաձևով: Ընդունելով այդ հիմնարկ մեկնությունը, պետք է նկատել, որ սկզբնաձևը պետք է համարել բողջ, ինչպես որ ենթադրել է տալիս Երեմիայի բղջուն բառը: Իրեն ապացուց սրա կարելի է հիշել և այն, որ Երեմիան մեղրեցի էր, իսկ Մեղրու բարբառում հին հայերենն ու ձայնավորը դառնում է օ, որից կարելի է ենթադրել, որ նույնիսկ բողջ բառն էլ ստացվել է նախնական բուլջ-ից (հմմտ. սուր>սոր, սուն>սուն և այլն): Ցավոք սրտի Մեղրու բարբառից մեզ այդ բառը հայանի չէ: Ինչ վերաբերում է բողջ ձևին, ապա նրա գոյությունն էլ հաստատվում է Տիրոսանկերտի բողջոց-վիլ բառերով:

26. ԳԱՄ, ԳՕՏԻ

Գամ արմատը առանձին ավանդված չէ, այն գտնում ենք զգածիլ «1. հագնել, 2. (փխր.) իր մեջ կրել, համակվել», զգածուն «հագնելը», զգածնուլ «համակվել, զրաղվել»:

զգածուցանել «համակել», մթազգած, խաւարազգած «մտնելով» խաղարով պատված», սեւազգած «սևով պատված», առիգած «ղենյակ, գոգնոց» և այլ բառերում: Մագում է հնչւ. veg «հյուսել, հանգուցել, հյուսվածք, գործվածք» արմատից: Ֆեղակից լեզուների բազմաթիվ բառերից հայերենին իմաստի կոդից առավել մերձավորներն են. լատ. velum «1. վարարյւր, 2. ծածկոց, վերմակ, առագաստ», velo «ծածկել, պատել, փաթեթել մի բանով, փաթեթել—կապել», կիմր. gwe «գործվածք, հյուսվածք», գերմ. wickeln «պատել, փաթեթել», Wickel «զպալար, փաթեթ», անգլոսաքս. wöcig «1. պատատուկ, պատաղիճ, 2. օշ, օղակ» և այլն: Այս բառերի համեմատությունից երևում է, որ հայերեն զամ արմատն էլ պետք է նշանակած լինի պատել, փաթեթել, որից ինքնին կարող էին զարգանալ հագնել, վաճ առնել, ինչպես և փոխարեական՝ համակվել իմաստները: Արմատի բնիմաստն առավել ցայտուն է մթազգած, խաւարազգած բառերում, որոնց մեջ զգած նշանակում է «պատած»:

Նույն հնդգվերտական արմատից է ծագում զօտի <զաւտի բառը, որի մեջ ի-ն օժանց է, և արմատն է զաւտ, որ պարզ կերպով երևում է պարեգօտ, ընդգօտել «միասին կապել» բառերում: Ակ. Գր. Ղափանցյանը գիտես 1927 թ. իր «Հնէաբանական մի քանի մնացորդների հայերենում» աշխատության մեջ շեշտում է աւ—ա լծորդների անկայությունն այնպիսի բառերում, ինչպիսիք են մաւտ (մօտ)—մաւտ (-լիմ), ամաւր—ամաւր-ել, ծանաւր—հանաւր-ել, (*ծանաւրել, աւաւտ—արած-ել և այլն): Նույն աշխատության մեջ նա նկատում է աւ—ա լծորդովին զուգորդող պայթաշխականների պարզեցումը, ինչպես աղաշել—աղաւր, հանաւրել—ծանաւր, աւաւտել—աւաւտ և այլն, որոնց մասին ավելի հանդամանորեն խոսում է շատ տարիներ հետո՝ իր «Ընդհանուր լեզվաբանության» մեջ: Մեզ համար, տվյալ դեպ-

4 Գր. Ղափանցյան, Հնէաբանական մի քանի մնացորդների հայերենում, Երևան, 1927, էջ 3:

բում, կարևոր է այն, որ այս աշխատության մեջ որիչ բաների շարքում հիշում է նաև զգածիմ—գառտի բառերը⁵, գանելով, որ նրանք մեկ արմատից են ծագում:

Կամ արմատի «պատել, փաթափել» իմաստը, որ պահպանված է ցեղակից լեզուներից շատերի մեջ, հնարավորություն է առիտ իրար հետ կապել զած և գառտի բառերը նաև իմաստային տեսակետից: Այդ կապը էլ ափսիս աներկրա է գտնում հին Շեղ. wāgurgā «տուն, շվան, պարան», հին կորն. gūat «հենք, թև, առասան» համեմատությամբ, որանք նույնպես հնի. weg արմատից են ծագում: Վերջապես, ափսիս լավ այդ կապը հաստատվում է հենց հայերեն զգածիմ բառով, որի համար Հայկազյան բառարանը առիտ է նաև օտարականի զիրեն, պատել, մածանիլ» իմաստը՝ համապատասխան վկայություններով:

Այսպիսով՝ հայերեն զած (զգածիմ, առիզած) և գոտի միասին ծագում են հնի. veg արմատից. միակ հանգամանքը. որ կարող էր կասկած հարուցել այս ստուգաբանության նկատմամբ, հնի. e ձայնավորի փոխարեն հայերեն ա ձայնավորի առկայությունն է, Սակայն դա էլ հեշտությամբ լուծվում է, երբ նկատի ենք առնում հնի. արմատի ետաստիճան ձայնզարձը. վայրե-Պոկոտնիի բառարանում բերված ցեղակից ձևերի համար նշվում է արմատի նրկու ձայնզարձը՝ e և o (veg, vog), հայերենը ներկայացնում է ձայնզարձի ստորին ստիճանը (vög).

27. Գ Ա Ր

Առանձին չգործածվող արմատ է, որ բարդությունների մեջ հանդես է գալիս իբրև երկրորդ բաղադրիչ (այժմ ածանցական գերով)՝ «որն էլ ցավով տառապող» հիվանդ, հիվանդություն» նշանակությամբ, ինչպես՝ ցավագար. լեզվագար, զլխագար և այլն: Հնում գործածվել է որպես ինքնու-

⁵ Պրոֆ. Փր. Ղափանցյան. Բնահատոր լեզվաբանություն, հատ. 1, Երևան, 1939, էջ 208: Ը. Անտոյանը գտի բառը համարում է բարդ կազմված զուս և տի «կապ» բաղադրիչներից:

բույն բառ՝ կազմելով ածանցավոր ձևեր, ինչպես և հանդես գալով իբրև բարդության առաջին բաղադրիչ (հմտա. անգար, «միզորեն», զարադրիսն «աղիքների հիվանդություն, փորհարիներ», գարելի կամ զարելի «ցավալի», գարիլ «ցցավ բղբալ, ցավիկ» և այլն):

Իրանական փոխառություն է. բառն առկա է Ավեստայում՝ gada ձևով «իշացում, վնասվածք, խախտում, լարիք, աղետ» նշանակությամբ (Բարթ. 488): Ցեղակից է նեղական gada- բառին, որ նշանակում է «հիվանդություն» Հր. Անաչյանը նախապես մեր բառը համարել է իրանական փոխառություն՝ համեմատելով պ՛շե. gar, պրսկ. gar, gar՝ «բոր, բորոտություն», քրդ. gir, բելուջ. gar՝ «բորոտություն», զենգ. garenu և անն. gara- «մի տեսակ հիվանդություն», նոր. պալվ. garje «բորոտություն», garjav, garab «բորել» բառերի հետ: «Արմատական բառարանում» (Գ. 81) հիշելով իր այդ ստուգաբանությունը և մերժելով՝ դրում է. «հյ. զար չի կարելի փոխառյալ դնել այս իրանյան ձևերից՝ նշանակության պատճառով. ինչպես նր չի կարելի դնել ցեղակից՝ ձևի պատճառով. սպասելի էր նախաձայն կ և ոչ զք: Ավեստերեն gada բառը լիովին համապատասխանում է մեր զար-ին թե՛ ձևով և թե՛ իմաստով, ըստ որում իրանական ծ-ն նայրենում դառնում է ք (հմտա. nivača > նուչք. *hačazat > նարպատ, frapačak > նրպարակ և այլն):

25. Գ Ա Ի Ա Կ

Բառիս արմատն է գաւ, որ առանձին չի գործածվել, սակայն գանիդ. «մեծ և դեր գառակ ունեցող» բառը հաստատում է, որ գաւակ-ի ախ-ն էլ ածանց էլ Լատ Հր. Անտոյանի, հայերենից են փոխառվել վրաց և թուշ. ծոջո «անասունի գառակ, ողնաշարի ծայր» բառը (Արմ. 1, 527): Սադու՛մ է հնի. yat «կորացնել, ձկնը» արմատից. հմտա. րատ, vatax, -icis «կոր կամ ծուռ ոտքեր ունեցող», vatius «գեղայի ներս ծոված, կոր», գերմանական wapwan «կորություն, ձկվածք», նեղ իմաստով՝ «դիտա», հրդ. wado «գիտա», հաարս.

usathan «արունքի ուռուցիկ մասը»: Հայերենի համար այս ստուգաբանությունը անընդունելի կլիներ հնիս. t>հայ. 1 գոտիություն պատճառով, քան որում ձայնավորից հետո հնիս. t-ն հայերենում դառնում է j: Սակայն պարզ արմատը պետք է զննել va-, ինչպես հավանական է համարում Պոկոսենին (էջ 113): Հնիվերով բառ. varus «դեպի իրար թեքված, կորացած, ծուռոտ» բառի վրա: Հայերենը հիմք է տալիս հաստատելու, որ պարզ արմատն է va- և միաժամանակ երևան է րիբում p-ով անձած ձևը (*wa-p> գալ):

29. Գ Ե Ղ Գ Ե Ղ - Ե Ղ

Գեղզիլ «բերկրկի՝ խաղուն ձայնով կրկնվող», քստ 2. Աճառյանի (Արմ., Բ, 124—125) միայն մի անգամ է գործածվել հին մատենագրության մեջ, մինչդեռ նրանից կազմված գեղզեղիկ, գեղզեղանք բառերը մեծ գործածություն են ունեցել դասական շրջանում և այժմ էլ գործածական են՝ գեղզեղալ «գայլայլել, կորցրել ձայնով հնչել», գեղզեղանք «գայլայլ, կրփի քաղցր ձայն» իմաստով: Կրկնավոր բառ է. պարզ արմատն է գեղ «երգ», որը թառանձին չէ գործածված, բայց պահված է գեղօն «երգ» բառի մեջ» (Արմ., 125): Այս գեղօն բառը, որ ավանդված է դասական շրջանից, գործածվում է արևմտահայ գրականում սերից, կրգ ու նվազ» և «բայցակա» իմաստներով:

Մասում է հնիս. gheil «կանչել, գոչել, դռուլ» արմատից, որ ջեղակից լեզուներում պահելով այդ իմաստը, ավել է նաև դանազան թալունների անուններ, ինչպես՝ հին իսլանդերեն gjalla «հնչել, արձագանքել», անգլ. սաքս. gillian «գոչել, կանչել, բղավել», հին բարձր գերմ. gellan «հնչել, գոչել», հին հյուսիս. gála «գոչել, կանչել (աբաղաչի), կրկնել», անգլ. սաքս., հին բարձր գերմ. gelan «երգել, նաև՝ ճեղգվել, կախարհել», հին սաքսոներեն, հին բարձր գերմ. galm, միջին բարձր գերմ. galm, gelm «ձայն, հնչյուն, աղմուկ», անգլ. սաքս. gealdor «կախարհի կրգ», միջին բարձր գերմ. gielpan «խրեն գովել, սնապարծել», gelpfen, gelfen «գոչել, երգել, իրեն գո-

վել», անգլ. սաքս. gielp, հին իսլանդ. gjalp «մեծախոսություն, ինքնագովություն», հին սաքսոներեն gelp «հակահաստություն», շվեդ. gelpa «ճամփել, կանչել (թռչունի)», նաև. չչևլժոն «ծիծիծիսակ», որից կրկնություն կլչլչ «տարբեր», կլչլչտ «ճամփել, կլչլչայ, մեղծ ծիծաղել», սառս. (քստ. Պոկոսեն) galit'-ca «ծաղրել, հեղեղել», գավառական՝ nagalits «աշխատելիս կրկնել, չափ սալով ձայնել» և այլն (WP, I, 628, Pok., I, 428):

2. Աճառյանը «Ջրմատական բառարանի» հավելվածում (հ. է), շեշտելով հիշյալ բառերի նմանությունը հայերեն զեղզեղի հետ, այնուամենայնիվ, կապած է հայտնում, Եկատի ունենալով բառակարգի ցի> հայ. Գ համապատասխանության զգվարթությունը: Մեղ թվում է, սակայն, որ այդ զգվարթությունը վերանում է, երբ հաշվի ենք առնում այնպիսի բառեր, ինչպիսիք են հնիս. *gheleg'h> հայ. գեղծ, նիս. *ghoidhio> հայ գեշ, «խոնավություն» և այլն: Ըստ այսմ, Աճառյանի ստուգաբանությունը պետք է համարել վավերական:

30. Գ Ժ Տ Տ Լ

Գրարարում գործածվել է ներգործական և շեղար-կրավորական ձևերով՝ քարտիպանել, զարյացնել, սիրտը քաղացնել» և «նեղանալ, խոտվել» նշանակություններով: Կիսկատար քերականության մեջ (հ. 6, էջ 631) շր. Աճառյանը արմատն է համարում գծիտ կամ գծուտ, շորոշելով թե դրանցից որն է միշտ (իբրև շտուգարանից համեմատելի է գեի-+ոտ>դիուտ, դիուտի բառը (հմմտ. նաև Ղարարդի բարբառի գծատ «խնկնուկ» բառը, ինչպես և՛ արդի ժողովրդա-խոսակցական գովել, որ ունի «գայլանալ, իրենից ջրտա դալ» իմաստները), և մասնավանդ՝ ժողովրդա-խոսակցական զգծուտ «խնկնուկ, դիժ գամար ունեցող»:

Հայերենի շատ գործածական վերջածանցներից է -գին. որ սովորաբար կապել են զին ժարժեր» բառի հետ, ենթադրելով, թե հիշյալ ածանցով բառերը նախապես նդել են բարբառայիններ, բայց հետո, գործածվելով իբրև մակբայ, ըմբռնվել են որպես ածանցավոր բառեր, և դրա հետևանքով էլ ստացվել է զին մակբայակերտ ածանցը։ Այս բացատրությունը այնքան հավանական է, որ բոլորը կարծես թե լուր կերպով ընդունել են այդ՝ առանց կասկածելու։ Եվ սակայն, -գին ածանցով բառերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դա հիշտ չէ։ Նախ՝ այդ ածանցով մակբայներ կազմվում են ժամանակակից հայերենում (կովժադին, տըրտմագին, խնդագին և այլն), մինչդեռ զրաբարում նա կազմում էր ածականներ (աճագին «աճեղ», ուժգին «ուժեղ, բուռն, հզոր», մուկգին «խիստ մոխի, կատաղի»), որոնք կարող էին գործածվել նաև մակբայաբար. հմմտ. Հողմ մեծ ուժգին (Ա, Քաղ. բ, 6), Ուժգին զոչմամբ... մատուցանէր (Եբրա. Ե, 7), բայց՝ «Զի ուժգին շարժիցի հողմոյ» (Յայտ. 2, 13)։ Երբ քննության ենք ենթարկում այդ ածանցով կազմված այն բառերը, որոնք գործածվել են հինգերորդ դարի մատենադարձության մեջ, առանձին ենք, որ զին նշանակում է «ունեցող, որևէ հատկությամբ օժտված», ինչպես՝ մուկգին = մուկությամբ օժտված, ուժգին = ուժ ունեցող, ուժեղ, մրազին = մուկ ունեցող, մթով օժտված = մթին և այլն, մինչդեռ զին բառով կազմված ածականների մեջ զին բաղադրիչը նշանակում է «զին ունեցող, զնող, զնած, զնված», ինչպես՝ մեծագին = մեծ (թանկ) զին ունեցող, քանկագին = թանկ զին ունեցող, արժաքագին = արժաթով (= դրամով) զնված (զընած), մարդագին = մարդ զնող և այլն։

Այնուհետև՝ զին բառով կազմված ածականները մակբայաբար չեն գործածվում։ Եկատելի է, որ զին բառով կազմված ածականները սովորաբար ենթարկվում են ոչ հոլովման, այսինքն՝ զին բառը պահպանում է իր անկախ հոլովումը.

մինչդեռ զին ածանցով կազմված ածականները հոլովվում են ի-ա խոսն հոլովմամբ. հմմտ. նարդեան աղետի մեծագնոյ (Մար. ԺԳ, 3^թ), բայց՝ «Շարժմանց աճագից եղևոց ի Քիւզանդին» (Խոր., Գ., 52)։ Այս ամենայն են մուկգին արուեստը (Ճաղընտ., Գ) և այլն։ Ոչազբավ է, որ մուկգին բառը հոգնակիում ունի նաև -եաց ձևը, ինչպես՝ նմանեալ ես մուկգինեաց (Ճաղընտ., Ա.). դա ցույց է տալիս, որ -գին ածանցն ունեցել է ի քնով հիմք իզական սեռի համար⁶, իսկ այդ էլ նշանակում է, թե այդ ածանցը դեռ շատ վաղ ժամանակներում արդեն ածանց է եղել և, հետևաբար, կապ չունի զին բառի հետ։ Նրա հնուության օգտին է խոսում նաև այն՝ որ շատ բառերի մեջ նա պարզապես աստիկություն է ցույց տալիս (մուկգին = խիստ մուկ, կատաղի, մթագին = խիստ մութ և այլն), ինչպես և այն, որ ունեւ նրա կրկնակի գործածությունը՝ մեկ բառի վրա, ինչպես՝ անագնագին։ Վերջապես, առանձնապես կարևոր է այն, որ զին բառով կազմված ածականներից բայ չի կազմվում, չի կարելի ասել՝ զանձագնել, մեծագնել, քանկագնել և այլն. անհրաժեշտություն դեպքում դիմում են հարադրությունների օգնությանը (օր. զանձագին առնել), մինչդեռ -գին ածանցով կազմված ածականներից ունենք բազմաթիվ բայեր (մուկգնել, աճագնել կամ աճագնաւել, մթագնել և այլն)։ Այս բոլորը ցույց են տալիս, որ -գին ածանցը ոչ մի կապ չունի զին բառի հետ։ Դրանից ելնելով էլ մենք այն ծագած ենք համարում հնխ. veni ածանցից, որ ունի օ-վետ, մի բան ունեցող, մի բանով առատ իմաստ, և պահպանված է հեղինակական, հունա-կան ու լատինական էությունում, ինչպես՝ սանա. apavani կան ու լատինական էությունում, ինչպես՝ և այն։ Մասնիկը բաղադրյալ է, որ կազմված է -ven և -to-ածանցների միա-

⁶ Գա նաև մեծագին. բայց դա մեծագին բառի ստուգանք չէ, այլ ի ածանցով կազմված բարբառանցավոր բառ. հմմտ. վանանալ զգա մեծագին (Մատ. ԻԶ, 9)։

⁷ Սեպհ՝ հին հայերենում պահպանված հեռերի մասին տե՛ս Ը. Ա և ա յ ա ն, կրկնաբար բերականություն հայոց լեզվի, Գ. 3, էջ 292—312։

ցումով⁶։ Վերի օրինակները ոչ մի կասկած չեն թողնում իմաստի համապատասխանության վերաբերյալ, ինչ վերաբերում է ձևին, ապա դա էլ ճշգրիտ կերպով ներկայացնում է հայերենի հնչյունական օրենքները, այսպես՝ հնխ. v հայերենում դառնում է գ. հնխ. e-ն անդամիներինքի առաջ դառնում է ի (հմմտ. հնխ. g'en > հայ. ծին), հնխ. n մնում է անփոփոխ, իսկ l վերջավանդում անդամինի և հաջորդ ձայնավորի միջև ընկնում է (հմմտ. *bheronti > բերեն)։

Չնդեվրոպական -vent մասնիկի հետ են կապել հայերենի -վետ ածանցը, որ, սակայն, իրավացիորեն մերժում է Է. Աճառյանը⁹. մեր այս ստուգաբանությունը մի ավելորդ անգամ ևս ապացուցում է այդ մերժման ճշտությունը։

32. Գ Ո Ր Տ

Այս բառն ստուգաբանված է կազարդի կողմից իբրև Չնդեվրոպական բառ՝ կցվելով լատվ. warde, լիտվ. variē «գորտ» բառերին։ Հյուրըմանն բնորոշում է այդ, և Հր. Աճառյանն էլ, բերելով այդ ստուգաբանությունը (Արմ. 1) գրում է. «Հնխ. wordo- ձևից, որի հետ նույն են միայն լեթթ. warde, արևելյան լեթթ. varglē, լիթ. variē «գորտ»։ մյուս լեզուների մեջ գտնում ենք զանազան իրար անհամապատասխան ձևեր, ինչ. հն. βαρδα, լատ. rana, գերմ. Froch, հրգ. irosk են. բառիս այսպիսի այլազան ձևեր ստանալը բացատրվում է զորսին վերազգված հմայական հատկություններով։ Վաղե-Պոկոտնիի բառարանում Չնդեվրոպական word արմատ չի բնորոշվում, անշուշտ, զուգաբանությունն ունեցող լեզուների սակավության պատճառով, այդպիսի արմատ չունի նաև Պոկոտնիի բառարանը։ Գտնում ենք, որ պետք է վերանայել մեր բառի ստուգաբանությունը։ Մեր

կարծիքով, մեր գորտ բառը ծագում է հնխ. ay(e)-, ayed-ayer «խցացնել, թրել, հոսել» արմատից, որից են նաև հայ. զևա, օտա, вода, водный, հուս. ԾԾԻ, և այլն։

Չնխ. արմատը զանազան անակոսներով ու ածանցներով և ձայնդարձի տարրեր ստեղծաններով ձևական ու իմաստային մեծ զարգացում է ստացել ցեղակից լեզուներում։ Նախնական իմաստից զարգացել են գլխավորապես Չնխայլ հիմնական իմաստային խմբերը. 1. թաց, խոնավ. 2. թացություն, խոնավություն. 3. շուր. 4. հոսանք. 5. չրային կենդանի և այլն, Հայերենը մի կողմից ունի զևա (= Նորգահոս շուր), իսկ մյուս կողմից՝ զարտ, որ է՝ շքային կենդանի։ Գորտ բառը ձևական տեսակետից ծագում է արմատի yed- տարրերից-ro ածանցով աճած yodōro yodro ձևից, որ dr > rd հայերենի համար սովորական տեղափոխությամբ դարձել է wordo > հայ. զորտ։ Իմաստի տեսակետից հայերենի հետ կարող են համեմատվել. սանս. udra «շրշուր, կուզք», հուս. ԾԾԻ «շրի օձ», հին սլավ. выдра «կուզք», հին Չնդե. udrah «շրային մի կենդանի», ավեստ. udra «շրատամուր, կուզք» և այլն, ինչպես և հատկապես վերը արդեն հիշված՝ լատվ. warde, varglē, լիտվ. variē «գորտ»։ Մեր այս ստուգաբանությունը ցույց է տալիս, որ՝ ա) ճիշտ է մեր զորտ բառի համեմատությունը լատվ. և լիտվ. բառերի հետ, բ) ճիշտ է կանխորվել հայերենի Չնդեվրոպական նախածը՝ wordo, բայց զա հնդեվրոպականից հայերենին անցման ընթացքում dr > rd տեղափոխությամբ ստաչացած ձև է yodro-ից. դ) հայերեն և բալթիկական համապատասխան բառերը չեն ենթարկում հնխ. մի տարրեր արմատ, այլ հանդում են ay(e)-, ayed-, ayer- արմատին, որից կանխավորապես կազմվել է yodro ածանցավոր ձևը։

33. ԳԱՎԱՊԱՐ, ՄԱԳՐ

Բերելով այս Գաղապար բառը Արմատական բառարանում⁸, Հր. Աճառյանը գրում է. «ԳԱՎԱՊԱՐ, «մազր», այսպես

⁸ K. Brugmann und B. Delbrück, Grundriss, II B., I T., 58: 461—5, 664.

⁹ Է. Աճառյան, Կիսկատար բերականություն, հ. 3, էջ 115:

ունի բառ. երեմ. 72 (նույնը նաև երկրորդ տարգրության մեջ), ինչ լինելը հայտնի չէ» (Արմ. 1, 616): Միտադարու-
թյամբ են առաջացել և՛ դղալագաւ, և՛ մագը կեղծ բառերը-
առաջինը դղալագաւ բառն է, որ կա նույն բառ. երեմ. 75-րդ էջում՝ ԳԱՂԱՏՔ ատապարս ձևով, իսկ մագաբ-ը՝ ատապարս
բառն է՝ սկզբնատառի շփոթությամբ (Տ և Մ): Բառ այսմ՝
երեմիայի բառն ուղղելի է՝ ԳԱՂԱՊՔ ատապարս, որով և
երկու կեղծ բառեր զուրս կզան արմատական բառերի շար-
քից:

34. Գ Ա Ն Գ Ա Ա

Կրկնավոր բառ է, որի անփոփոխ արմատն է դղա-
լինչյան ցույց է տվել Հ. Անառյանը (Արմ. Բ, 401): Կրկնու-
թյան համար հանձնատանի են դնելով, ծանձնում է այլն:

Մագոսմ է հնիս. *dnel արմատի ստորին ձայնդարձից
(dhj). արմատի ժառանգները կան միայն գերմանական
լեզուներում՝ նորվեգերեն և շվեդերեն բարբառային dilla
սշարժել, ճռճել, բեկեր շարժելով բայլել, նորվեգերեն
բարբառային dalla, dulla «մանր քայլերով գնալ», հուն-
գերեն dalen «գանձեցայ քայլել», անգլերեն dally «ծամանակ
գնանել, ձգձիկ, նապաղել, գլխահանել», նորվեգերեն diite,
dalte «մանր քայլերով գնալ, ցատկոտելով գնալ» (ՄՔ, 1,
865, Քռք., 1, 246): Վաղին հնիս. *dnel արմատից է հա-
նում հայերեն դղղղղալ, և որպեսզի իմաստի կապ ստեղծի
հայերենի աչք բառերի ու գերմանական լեզուների նշված
բառերի միջև, Նեղիկբազմական արմատի իմաստն է համար-
ում «դղալ, մանր քայլերով քայլել»: Հ. Անառյանը (Արմ.,
է, 122) իրավացիորեն մեթոսմ է հայերեն դղղ-ալ բառի
կապը գերմանական ճշուղի հիշյալ բառերի հետ և զբանով
իսկ հարցականի տակ առնում *dnel արմատի «դղղալ» ի-
մաստը:

Մեր այս ստուգաբանությունը մի կողմից անմիջա-
կան կապ է ստեղծում գերմանական ճշուղի բառերի հետ,
իսկ մյուս կողմից՝ կապող ռազկ է դառնում դրանց և հա-

լերեն դղ, դղղղը, դղղղ, դղաղ «սարսելը, ցնցում,
շարժում» բառերի միջև Ա. Մեյեն (MSL, 10, 279) «իրար
է կցում դղալ, դղղել, դղղղել, դղղել, դանդաղիլ իբր
կրկնական, հմմտ. սանս. dardirat, dēdicat, հուն. τανυζυγισ-
τανοζωτο «շարժել, պրոբել», τανυζυγισται «դղղալ», լիով-
մրցյս «շերմ», սաս. дрогнути «ցնցվել», дрожать «դո-
ղալ», լին. držeć, չեխ. drhati, լիտվ. drebū, dredėti «դո-
ղալ», որոնք բոլորը կրում են dr- ձայնավոր + ր արմատա-
կան տարրը» (Արմ. Բ, 401—402): Հ. Անառյանը, շխտելով
հայերեն դանդաղ, դղ ևն բառերի իմաստային կապի մասին,
մեթոսմ է Մեյենի ստուգաբանությունը, որովհետև բացի
դրանից, բոլորը դ ունեն մյուս լեզուների Ի-ի դիմաց:
Մեր դանդաղ բառը իր իմաստով ճշտում է Նեղիկբազմակա-
ն արմատի իմաստը, այն է՝ «բեկնակի շարժվել, շարժման մեջ
լինել, մանրաքայլ գնալ (սուս. семенитъ, գերմ. trippeln): Այս
գեւորում միայն հնարավոր է դառնում իրար հետ կապել
դանդաղ, դղղ-ալ, դղղղը, դնդղղ թխանք և մասնա նյութ»
(զբված նաև դղղղղ, դանդղղ), որի սկզբնական իմաստն է
«դղղղղաղաղ» և որի հետ նույնն են դնդղղ «երերուն, շար-
ժուն», դնդղ «կակուղ» (Արմ., Բ, 588—589), դղղղ—դղղղ
«ցնցում», որից՝ դղղղղ—դղղղել. «1. ցնցել, 2. շարժվել»,
ցնցման ձայն հանել, թեղացնել, 3. վախեցնել», դղղղալ
«թեղալ» և այլն: Դրդղել բառը, որ Ա. Մեյենն միացնում է
նախորդներին, հետո է մնում հնչյունական անհամապա-
ասարահանության պատճառով: Հիշյալ կրկնավոր և պարզ
ձևերի մեջ գտնում ենք ա (դանդաղ, դանդղղ), և (դնդղղ),
ս (դղղ, դղղղը, դնդղղ, դնդղղ) և ու (դղ-որդ—դղղղղ <
դղղ-որդ—դղղղ-որդ), որոնք ենթադրում են հնիս. արմատի
նուստիճան ձայնդարձի *dhj, *dnel, *dhdj ձևերը:

35. ԳԵԿԵՐ, ԳԵԳԵՐԸ

Հին մատենադրության մեջ գործածվել է թե՛ առանձին,
որպես արմատական բառ, և թե՛ բաղադրությունների մեջ,
ինչպես՝ դեգեբել, դեգեբանել, դեգեբունել: Հ. Անառյանը

(Աբմ. Բ, էջ 477), հիշելով այդ բուրբ, իմաստը բացատրում է «մի տեղ կենալ՝ անտառ՝ դանդաղի, ժամանակ անցկացնել» և «Յափառել» իմաստը համարում է նոր. «նոր գրականում բառի իմաստը փոխվելով եղել է «Յափառել»: նՆԲ-ն ղեզեր բացատրում է՝ «արմատ ղեզերելու, որպես ղեզերելու և ղեզերանք», իսկ ղեզերել՝ «Յափառել, կալ մալ ուրեք, և պարտպիլ կամ կրկնել յիրս ինչ. պատաղիլ, յամել առամանակ մի, և տատանիլ», Ինչպես տեսնում ենք, իմաստները բավական տարրեր են, ուստի և պետք է դիմել գործածություններին՝ պարզելու համար, թե իրոք «Յափառել» իմաստը նոր է, նՆԲ-ն ղեզեր, ղեզերանք, ղեզերել, ղեզերումն բառերի համար բերում է բազմաթիվ վկայություններ, որոնցից մենք կհիշենք միայն տարրեր իմաստերը գրեթե ողջ գործածությունները՝ բնորոշելով հնագույնները:

1. Կափանել՝ եղև ղեզեր առ յորով բաղաբօք (ղեզեր=Յափառ, Յափառական. եղև ղեզեր=Յափառանց, շըրջեց):— Բակերբան:

2. Ախործ է ղզինեաց ղեզերանս (==գինու ղեզերանքներ=գինով թմբույթյուն, արրեցություն=գինարբույթ):— Ս. զիրք:

3. Վատխարն ի լավ ղեզերանս ածեալ (==զբաղմունք, պարպումունք):— Գործք Արիստոտելի:

4. Զպպաղանացն ի բաց լիցես ղզիզերանս (==զղեզերանս յպպաղանաց=դանդաղելու և հպաղելու):— Փիրն:

5. Յահ և երկիղ մատնեալ՝ կար ի ղեզերանս (==տատանելը, վարանում, տատանում):— Վարք Հարանց:

6. Գեզերեալ զազց ղնա առ զդուն իւր (ղեզերեալ=նստած մնացած: ձուն. աշեծու, լառ. assidens): Ս. զիրք:

7. Ոչ ղեզերին առ զուրս լիսցն (==համախել, գալ):

8. Յանկ ղեզերիս պարտասեւլ պատհանա հնարից (==որոնել, փնտրել, ձգտել):

9. Յարածամ ղեզերիմ յրեթեանուլն (==պարտպել, ըզբաղվել):— Նարեկացի:

10. Ինգերէին ի զուրս տան իմոյ (==շրջում էին, ման էին գալիս):— Զովհաննէս կաթողիկոս:

11. Ասպակնին ընդ շունս և ընդ գաղանս սունը զիր ղզիզերումն վարուց (==շրջելը, Յափառելը, մուրովելը):

12. Զսահ՝ որ առ գինին՝ հասարակաց ղեզերմունք են (==զբաղմունք, որպես մուրովյուն):— Փիրն:

13. Բազում Յախանձանօք և յերկար ղեզերմամբ խնդրեցէ (==ձգտելով, շանալով):— Փարպեցի:

14. Մ՝վ, յերկինս աստուածային ղեզերմամբ (մտօք) (==հածում՝ մտքի):

Բերված վկայությունների մի զգալի մասը V դարից է, ուստի և հետին շրջանի իմաստափոխություն չի կարելի համարել: Արդ, բուրբ օրինակների մեջ եղած իմաստները կարելի է խմբավորել հետևյալ ձևով. 1. Շըրջել, ման գալ, 2. գալ, համախել, 3. զբաղվել, պարտպել մի բանով, 4. զանգաղել, հպաղել, մնալ, 5. որոնել, փնտրել, ձգտել, 6. մտքով հածել, 7. վարանել, տատանել: Իմաստների այս բազմազանությունը և հնույթյունը մեզ հնարավորություն են տալիս բարձր ծագած իմաստներու հետ. *dheu-, *dhwewարմատի *dhwewer ձևից, որ նշանակում է «շրջել, շարժման մեջ լինել, շտպել, պտույտ, Յափառում, հուրովյուն, թմբույթյուն, անտառային»: Հայերենի հետ իմաստի համար հատկապես համեմատելի են. հին ֆրիզերեն *dwiljith* «հածել, Յափառել, մուրովել», հնյուս. *dvelja* «գանդաղցնել, ուշադրել, կասցցնել», հին սաքսոներեն *bidwellian* «պահել, կասցցնել, խափանել», *fordwelan* «հպաղել, անդ. -ասր. *gedwolen* «Յափառած, ման եկած, մուրոված, խափանված», հին բարձր գերմ. *twalm* «թմբույթյուն, լիովաներեն *dwlifinēti* «աննպատակ այս ու այն կողմ շրջել՝ ման գալ», *dulis* «աննպատակ այս ու այն կողմ բարձր եկող» և այլն (WP, I, 843, Pok., I, 261—267): «Տատանվել, տատանել» իմաստի համար լավագույնը նույն արմատից ծագած հայերեն ղե-ղիկմ «երերալ, տատանվել, տատանել, կասցցծել» բառն է, «Յափառել, շրջել» իմաստի համար լիով. և հին ֆրիզերեն բառերը, իսկ «անգաղել, ժամանակ անցկացնել» իմաստը համար՝ հնյուս. և հայեր. բառերը:

Այս բառը, որ նշանակում է «դանապան» և համապատասխանում է հունարեն *Θαλασσοδρανός*, բառին, բառ նշմբ-ի վկայության, մեկ անգամ միայն գործածված է Բարսեղի ճաների թարգմանության մեջ, հետևյալ ձևով: «Չարքայությանն զփականս նա ունի. որչա է երկինք... քի ձևն նորա երկցինքն թեզ վայելիք բարութեանցն» (նշմբ, I, 643), Կասկածից վեր է, որ բառը կազմված է որ>դուր արմատից, որ նույնն է դուռն բառի հետ (հմտ. դուրհ, քի դրանէ և այլն): Բառի երկրորդ թաղարկին է ոյլ, որ ոչ այլ հնչ է, եթե ոչ հերս. -ել, —ել վերջավորությունը. դրանցից առաջինը, որ օրինաւափորեն տալիս է հայերեն աղ. ենթակայական զերբայի հանրահայտ վերջավորությունն է, երկրորդ ձևը այլուստ հայտնի չէ, բայց կա պատմական —ել՝ վերջավորությունը, որ հայերենի աղ-ի զուգահեռն են համարում:

Հայտնի է, որ հերս. է խաչ պայմանկար ձայնավորի ու ձայնորդի միջև դառնում է ի (ինչ. matros>մաուր, aratrom>արաւր), իսկ երկու ձայնավորների միջև՝ յ (ինչ. mater>մայր. bhrater>եղբայր) Արց, հայերենի աղ ձևը կարող էր ստացվել միայն հերս. ստորին ձայնաբանով -լլ ձևից, իսկ տեղ ձևը օ բնի հետ միանգամայն օրինաչափորեն կտար -ոյլ: Նշանակում է, հայերեն դրոյլ բառը ծագում է հերս. *dhuu-0-տել զերբայական ձևից: Ուշագրավ է, որ ոչ թե դռնապան, այլ դրոյլ բառն է գործածվել թարգմանության մեջ հունարեն *Θαλασσοδρανός*-ի դիմաց, որ նույնպես զերբայական կազմություն ունի:

37. ԵՂԵՐ, ԵՂԱՐ

Բառի իմաստն է «աղբ, կոծ». առանձին չի գործածվում, իսկ բարդությունների և ածանցումների մեջ էլ ժամանակակից լեզվում միակ ընդհանրացած ձևն է եղբը, սակայն հետո եղել է նաև եղար, որից՝ եղաբամայր «աղբասաց կին»: Հետագայում այս ձևն էլ փոխարինվել է ընդհանրացած եղեր- ձևով և դարձել եղերամայր: Մագում է հերս. el-/ol- բնա-

ձայնական արմատից, որից եղակից ձևերն են հուռ. «կեկա նման ճշացող, կնամարդի, կնաս», *ἑλεφρογυα*: «աղբայ», *ἑλεφρογ*: «աղբ. լացուկոծ», *ἑλεφρο*: «1. ողբ. 2. ողբերգ, եղբերգ», *ἑλεφρο*: «ցամաքություն, վշտակցություն», հին իսլ. *jalmt* «աղմուկ, տաղմայր» և այլն: Ըստ այսմ՝ մեր բառի արմատն է եղ-, իսկ —ար ածանց է (հմտ. աղբար, մծար, հրածար և այլն). ինչ վերաբերում է —եր-ին (եղ-եր), ապա կարծում ենք, թե դա ստացվել է նախահունչ ե-ի աւանանջությունից, եթե, իհարկե, դա ևս մի անձանոթի ածանց չէ:

Այս նույն արմատից վաղին և Պոկրոսին հանուն էն հայ. աղմուկ բառը, իսկ Պոկրոսին՝ հնչվելով Պիզանիի վրա, թիկնցում է նաև աղօբ, ողբ, ողմ բառերը. դրանցից առաջինն ըր. Աճառյան չի ընդունում՝ իմաստի անհամապատասխանության պատճառով (աղմուկ հնում նշանակել է «իրարանցում, խառնաշփոթություն, կոխվ.»). աղօբ բառի կապը հավանական է թվում, բայց դրա համար արմատի el-, ol- ձևերի հետ հարկ կլինի կանխադրել նաև al- ձևը, այդ զեպրում կունենանք աղ- արմատը՝ աղ-ա-նել և աղ-ար(բ) բառերի համար: Ինչ վերաբերում է ողբ և ողմ օրաց. ողբ» բառերին, ապա դրանց ծագումը հիշյալ արմատից վաղուց հայտնի է:

38. ԵՐԿ/ՆԵՐԿ/ՆՈՒՐԿ

Թե՛ դրաբարում և թե՛ բարբառներում լայնորեն տարածված ու գործածական բառ է, որ նշանակում է՝ «1. տանիքից բացված անցք՝ լուսամուտ, 2. տուն, 3. անցքի կեց, ընտանիք, զերբաստան»: Դրանից են կազմվել՝ երկուկից «հարևան, դեկից», երկամար «ծխահաշիվ, աների՝ ծխերի թիվը», երկումարց «անվար» և այլն: Բարբառներում գործածվում է երկիմ ձևից ծագած զանազան տարբերակներով (հմտ. Մոսէ չերդիկ, Սեր. չերդիկ, Ախց. կր. էրբիկ, Ջղ. յերբիկ, Վն. էտիա նն), նախահունչ հ-ով հերց/հերդիմ ձևերի տարբերակներով (հմտ. Քրիլ. հերք, հերբիկ, եակ՝ էրբիկ,

Սժգ. Տեխաս, Երև. Տեխասիկ, Գոր. Տեքք) և վերջապես Տեխասացիներով և ու ձայնավորով Տեխոզ ձևի տարբերակներով (Տեմ. Մեղրի Տեռզ, Կարճևան Տեռզ, Կաքավաբերզ Տեռզ (Վարճավաբ), Տեռք (Կարև, Գաղեմճիս), Դարբարզ Տեռք, Մոկք Տեռասուս և այլն): Բարբառային ձևերի այս բազմազան տարբերակները համապատասխան Տեչուսական օրինքների համաձայն հանգում են երեք նախածին՝ երզ- (իք), Տեռզ (իք) և Տեռզ (իք), ըստ որում Մեղրու, Դարբարզի, Կաքավաբերզի և Կարճևանի բարբառներում տե-ն ստացվում է նախնական ու-ից:

Նկատի ունենալով այդ երեք ձևերը, մենք դրանք կապում ենք Տեխ. բերձ, բերձ- ՄԷ. մյուս կողմը տանել՝ վաբել՝ մզել, 2. հանապարհ բացել, 3. (իբրև զոյական) մուտք, անցք, 4. նավակ» արմատի perto-/porto- ածանցավոր ձևերի Տեմ, որոնք օրինակաբար են տալիս են Տեռզ, հուրզ: Ցեղակից լեզուների համապատասխան ձևերն են. ավեստ. pərtəuš «մուտք, հուն», լատ. portus «դուռ, դարպաս», հին կիմր. rī «հուն», կոտև. rīt «ծանծաղառ», լատ. angī-portus «նեղ անցք՝ անցում», հուն. πύλος «անցք, մուտք, անցում» և այլն: Նույն արմատից են ծագել հայերեն հուրզ «անցք, անցում», բացված ճանապարհ», հուրզիկ «գնալ», հուրզան տալ «առաջ մղել», ներհուրզիկ «առաջ խաղալ», ուրզ «չբի անցք, ջրանցք, չբի խողովակ, ավազան», ինչպես և հերիս: Մրդ բառի համար կապակցի տեղիք կարող է տալ perto->հեռզ (ո հոլովում) սպասվող ձևի նախահունչ Գ-ի կորուստը, սակայն բարբառներում պահպանված Գ-ով ձևերը ցույց են տալիս, որ այդտեղ էլ ունենք Գ-ի անկում, ինչպես, օրինակ, առ բառի սկզբում, որ ծագում է Տեխ. pok' u արմատի ստորին ձայնդարձով pək' u ձևից (Տեմ. նաև Տեխ. post > Տայ. բառ են): Դա նշանակում է նաև, որ բարբառային ձևերի նախահունչ Գ-ն հետագա հավելում չէ, այլ նախնական Գ-ի պահպանումը. մյուս կողմից, բարբառային և ու ձայնավորներով տարբերակները ճշտորեն համա-

պատասխանում են հնդկվրոպական ձայնդարձի վերին և միջին աստիճաններին: Այս ստուգաբանությանը մերժվում է մեր այն ենթադրությունը, թե հայ. երզ բառը կարելի է ծագած համարել հնթ. rēl արմատի ստորին ձայնդարձով rī ձևից¹⁰:

39. ԵՐԿԻՆ (Ք)

Այս բառի համար առաջարկված բոլոր հին ու նոր ստուգաբանությունները մերժված են 2. Հյուրըմանի և Հ. Անառյանի կողմից, ըստ որում դրանցից ոչ մեկը չի բավարարում գրական ստուգաբանության սկզբունքներին, թե՛ հայ հին մատենագրության և թե՛ նորագույն լեզվաբանական գրականության մեջ հաճախ բառը դիտվել է որպես ածանցավոր, կազմված երկ- արմատից և -ին ածանցից, որ հին հայերենում կենսունակ ածանց է եղել (Տեմ. օրինակ. լուս-ին):

Ծագում է Տեխ. *dei-, *deja- (*deja, *di, dja) արմատից, որի ածած ձևերն են *dejeu(-), *deiuo-, *diyo-, *diyeu-, diy-, dju-(*din, *deino-) և այլն: Արմատի նախնական իմաստն է «բաղել, լուսավորել», որից հուն. δεινός «երևույթ, սանկիրտ di-» abidet «երևույթ, ցույց», հին հուրթու. teit «պարծառ», հոմերյան հուն. δεινός «տեսանելի», զրհնու: ջրուտ պարզ, պարծառ են:

Այդ հիմնական իմաստից ցեղակից լեզուներում զարգացել են երկու որոշ հիմնական իմաստներ, այն է՝ «օր, ցերեկ» և «երկինք»: Առաջին իմաստով ունենք սանս. divā «օր, ամիս», ցերեկը, divēdive «օրըստօրե», divase «օր, ցերեկ», հուն. δεινός «բալ կղանակ, բալ ու պարծառ օր», լատ. dies «օր», արմ. di «օր», հին իռանդ. in-diu «այսօր», կիմերերեն diw, dyw «օր», հայերեն տիև և այլն: Երկրորդ իմաստի ներկայացուցիչներն են. սանսկրիտ dyāus «երկինք, օր», divya «երկինային», dēva «աստված», Ավես-

¹⁰ Վրաբեր հասարակական գիտությունների, 1971, Մ 7, էջ 17.

տալի լեզվով՝ daevō «դև», հուն. Ζεύς, Διός, Լատ. Deus «աստված», Լատ. Jupiter «Յուպիտեր» (= Երկրի աստվածը), հին պրուս. deus, հին իտալոդեերեն tivar, հին իտալոդեերեն dia, կիմերերեն dutu, կրեթերեն duy, բրետոներեն doné «աստված» և այլն։ Այս «աստված» իմաստը ծագել է «երկինք» իմաստից, բայտ որում աստվածն ըմբռնվել է որպես Երկրի հայր՝ տեր։ այդ բանը շատ լավ է արտահայտվում Լատիներեն Jupiter ասածու անվան մեջ, որի սեռականն է Jovis, և որը համապատասխանում է հուն. Ζεύς πᾶτος, հին հնդկերեն dyaṅspitá «երկրի հայր» բառերին։ «Երկինք, աստված» իմաստն ունեցող այդ ցեղակից բառերը ստացվել են հնխ. արմատի ս ճանաչորով «ճած ձևերից»՝ *dejeu-, *diyo-, dteu-, *diy-, *diu- (WP, I, 772—773, Pok., I, 183—186)։ Հայերեն երկ-իմ բառի արմատը ծագում է *diy > *divi- նախածեղից, որի զուգահեռներն են Լատ. Jupiter (սեռ. Jovis, բայց ումբրերեն՝ արական Juvapai(i), կիմերերեն diuiu, կոետերեն duy «աստված»։

Հայտնի է, որ հնխ. *dw հայերենում տալիս է րկ, ապա՝ ե հավելվածով՝ երկ-ը, այդպես են ստացվել երկու < հնխ. *dwo, երկնի, երկ-նով < հնխ. *dwi, երկ-այն, երկ-սր < հնխ. *dwa և այլն։ Պատմականորեն այս *dw < րկ փոփոխությունը բացատրվում է հետևյալ ձևով. նախ ք զարձել է q (dw > dq), ինչպես ունենք՝ *wedo > qhu-, vasj > զարուն և այլ նախերում. ապա՝ *d > t, որ օրինաչափություն է Ստացված *dw > tg կապակցություն մեջ նախորդ խուլի անմասնությամբ ց ձայննդն էլ զարձել է k (tg > tk)։ այնուհետև երկու պայթյալաններից առաջինը վերածվել է շփականի (Պ), որով ստացվել է Պk, իսկ Չ շփականի էլ, ինչպես հայտնի է հին իրանական փոխառություններից, սովել է r (Պk > rk)։ Հրեդեկտրոպական նույն *diu արմատից, ինչպես վերը հիշեցինք, ծագում է նաև հայերեն տիւ սօր, ցերիկա բառը։ Տիւ < հնխ. *diy («= *diw) և երկ-(իմ) < հնխ. *dwi = *dwi ձևերի միջև ունենք նույն հարաբերությունը, ինչ որ տե(ի) > հնխ.

«dewə և երկ-(այն), երկ-(սր) < հնխ. *dwa ձևերի միջև, որոնք մեկ արմատից են ծագում (Արմ., Բ, 832—837, Զ, 875)։

40. ԵՐԿԻՐ

Այս բառի համար առաջարկված բազմաթիվ ստուգաբանությունները մերժվել են Հյուսիսային և Ամառային կողմից։ Հայադիտություն մեջ շատերը, այդ թվում և մենք, համարել են ածանցյալոր բառ, կազմված երկ- արմատից և -իր ածանցից, առանց որևէ իրական տվյալի։ Գտնում ենք, որ արմատը ծագել է հնխ. *dheu-, *dheya արմատի *dhyer («= *dher) ձևից։ Հնդեկտրոպական արմատը, որ նախապես նշանակել է «շարժվել, շարժման մեջ լինել», ցեղակից լեզուներում ստացել է բազմաթիվ իմաստներ, որոնք կարելի է խմբավորել հետևյալ հիմնական իմաստային խմբերում. ա) շարժում, քննացք, ք) հույզ, խռովք, գ) մշուշ, մեզ, ամպ, ջուր, դ) խանգարում, արգելք, ե) հապաղում, դանդաղում, դադար, զ) հող, գետին, մակերևույթ, է) մոլորում, մտքի խանգարում, ը) թուլություն, հիվանդագին վիճակ, թ) բուռն շարժում, հարձակում, կոխվ են։ Մեր երկիր բառը կապվում է գ խմբի հետ, որի ներկայացուցիչներն են. հին հնդկերեն dhū(II), dhū(II) «հող, փոշի, գետին, երկրի մակերևույթ», հուն. θύζ «կույտ», ավազուս պիս, ավազաբլուր, բարձունք», միջին բարձր գերմ. dūne. հին բարձր գերմ. dūna «լեռան կողք», սեղլ-սաքս. dūn «բլուր, բարձրավանդակ, լեռ», անգլ. down «ավազաբլուր, բլուր, բարձունք, բարձրավանդակ» են (WP, I, 835—843, Pok., I, 263—266)։ Արմատի Ի-ով աճած ձևից բազմաթիվ ցեղակից բառեր կան, որոնք սակայն ունեն է, Լ, Թ խմբերի իմաստը (հմտ. հին հնդկերեն dhōrana «քննացք, բուռն շարժում», Ալգեստայի լեզվով dvarsiti «շտապում է, գնում է» են)։ Հայերենը, ծագելով այդ ձևից, կապող ուղակ է գտնում նախորդ բառերի և արանց միջև։

Հայերենի համար միակ զովարությունը ներկայացնում է *dhw > րկ փոփոխությունը, որ սակայն բացատրվում է

վում է շատ պարզ կերպով: Գրաններ, որ հնիս. *dw հայե-
րենում դառնում է բի. այդ փոփոխության մասին մենք խոս-
ենք ենք երկիմբ բառի ստուգաբանության մեջ և պարզելի,
որ այստեղ ունենք dw > dg > ig > tk > tk > rk հաջորդական
փոփոխություններ: Այստեղ էլ համապատասխանորեն ու-
նեցել ենք dhw > dhg > dgg > ձց, այսինքն՝ երկու պայթու-
կաններից առաջինի վերածումը շփականի, որ օրինաւա՛փ
կրելով էր նախահայերենում:

Արդ, ստացված ձց կապակցության ծ-ն (շփական դ) դար-
ձել է բ. ինչ-որ հաստատվում է հին իրանական և աուրական
փոխառություններով (հմմտ. ասոր. šappuša > շալ. շամփուս.
պահ. փաթաձակ > Իրապարտի պահ. niveš > նուէր են;)
Այստեղ, որքան, հնի. dh > ծ > ր փոփոխությունը միանգա-
մայն օրինաւա՛փ է, ինչպես որ՝ d > | > θ > ր փոփոխու-
թյունը: հնդարականը w > g > k փոփոխությունն է. dw > ig >
tk փոփոխության մեջ g-ի (< *w) խլացումը նախորդ խու-
լին անմտանկելու հետևանք է. dhw > dg կապակցության
մեջ այդ խլացումը չէր կարող լինել, որովհետև նախորդն էլ
ձայնեղ էր: Մնում է կնիպարել, որ նախապես ունեցել ենք
բեզիբ, որը երկիմբ բառի համարանությունը դարձել է եր-
կիր: Մեր այս ենթադրությունը հաստատվում է բարբառ-
ների տվյալներով, հետևյալ ձևով: Անենք բարբառների, ո-
րոնց մեջ հին հայերենի բ, գ, զ, ձ, ղ ձայնեղները և պ, կ, տ,
ծ, և խուլները անփոփոխ են մնում Ի-ից հետո, այդ բար-
բառներից են Մեղրին և Ագուլխուր: Արդ, այս բարբառներում
երկիմբ և երկիր բառերի մեջ կ-ի դիմաց ունենք գ (չեզդինջ,
չեզդիր)՝ մինչդեռ ուրիշ բառերում կ-ն մնում է անփոփոխ,
ինչպես՝ երկան > արկան, երկու > էրկու, երկայն > էրկել
և այլն, Դրանց հակառակ, Այաշկերտում յունենք երկիր և էր-
կիմբ, մինչդեռ երկայն բառի դիմաց՝ յուզլէն (Արմ., Բ, 522-
543): Մրանից մենք ներակայանում ենք, որ հնագույն հալե-
րենում ունեցել ենք երկին և երբի ձևերը. դրանց փոխա-
դարձ համարանությունը որոշ տեղերում երկրորդի գ-ն է
գարձել կ և ստացվել են երկիմբ, երկիր, իսկ որոշ տեղերում
ընդհակառակն, առաջինի կ-ն է դարձել գ և ստացվել են

երգիմբ, երբի ձևերը, որոնք և անփոփոխ կերպով մնացել
են այն բարբառներում, որոնց մեջ ձայնեղները Ի-ից հետո
փոփոխության չեն ենթարկվում: Մրանով լուծվում է հնիս.
*dhw > շալ. բի (< րգ) համապատասխանության հարցը,
և երկիր բառի ծագումը հնիս. *dhwer ձևից միանգամայն
բացատրելի է դառնում:

41. ԸՆԾՈՒՄ, ԸՆԾՈՒՄ

Գործածվել է հին մատենագրության մեջ՝ «ծելի, ծագել,
բիել, ձառագալից» իմաստներով: Ըր. Աճառյանը արմատն
է համարում ինձ, իսկ ու-ն մասնիկ: Նույն արմատի հետ է
կապում նաև բնձիլ/բնձիլ, որի մասնիկն է համարում -իլ:
Մեր կարծիքով բնձուիլ բառի արմատն է նիլ/ծիլ, իսկ ըն
նախածանց է, ինչպես և բնձիլ/բնձիլ բառի մեջ: Երկուսի
մեջ էլ ունենք ծիլ/ծիլ արմատը: Ընձիլի բառն ստուգա-
բանել են Ենֆուտլովիցը և Պեղերսենը. առաջինը մեր բարբ-
կապում է հին իսլ. kioln, հին բարձր գերմ. kil «ծիլ», անգլ.
quill «փետուր» և գերմ. Kiel «փետուրի զարմաճ» բառերի
հետ. կրկնորդ՝ նուև. Կելոս «նորածին», գոթ. keimen
«ծիլ», լիտ. židėti «ծաղկել» բառերի հետ: Պոկրանին՝
միավորելով այդ երկուսը, հայ. բնձիլ/բնձիլ-ը, ծիլ, ծիլ,
ծնլ բառերի հետ դնում է հնիս. ց'ei-, gi- «ծիլ», բողո-
չելի, բացվել (բողոչել, ծաղկիլ), ծաղկել արմատի տակ, հա-
մեմտանելով գոթ. keinan «ծիլ, բողոչել», անգլոս. cinan
«պայթել, բացվել», հին սարս. kimo «բողոչ, ծիլ, բնձիլ»,
հին բարձր գերմ. kil «սեպ», լատիշ. zēļus, չի՛՛ «ծաղկել»,
կրևալ. լիտով. žy'd(ži)u, žy'dėti «ծաղկել»: Վերջին ան-
գամ, այս ստուգաբանության վրա հենվելով, իրար հետ
կապեց հայ. ծիլ, ծիլ, բնձիլ, ծիլ, չիլ բառերը Պ. Բե-
դիրյանը¹¹, այժևացնելով նաև ճիլ, ճեղ և հարակից բա-
ռերը: Ընդունելով ծիլ, ծիլ, ծեղ, ծիլ (բնձիլ) բառերի ծա-

¹¹ Պ. Բեդիրյան, Մի քանի ստուգաբանություններ, «Պատմա-
բանասիրական հանդես», 1952, № 1, էջ 139-148:

գումարանական միասնությունը¹² և միացնելով դրանց նաև բնծնիլ բառը, հարկ ենք համարում ավելացնել հետևյալը:

Հնդեվրոպական արմատը պահվել է միայն հայերեն, բայթիական և գերմանական լեզուներում, բայ որում գերմանական և բայթիական ձևերի համար կանխադրվում է ձ-ով ածած ձև (gēid-/gī-d), ինչպես և -lo/-la մասնիկը (համա. հին բարձր գերմ. kidel «սև»)։ հայերեն ծիլ, ծեղ ձևերը եկիմազում են gi-lo, gēlo ձևերը. ինչ վերաբերում է ծիլ և ընծիլ, բնծնիլ բառերին, ապա իւ ներկարբարսի համար պետք է կանխադրել նաև gēu- ձևը, որից կարող էր ստացվել ծիւ. լի-ով ձևերն առաջանում են -lo/-la մասնիկով ձևից. gēu- պարզ ձևից է ինչպես ծիւ բառը, այնպես էլ՝ բնծնիլ (*gēu > (բն)ծիվ, բնծիլի > բնծուիլ/բնծուիլ)։ Ընծուիլ բառի երկու՝ սծիլ, բողբոջիկ և սնտադիլ իմաստները նույնպեսի հարաբերության մեջ են իրար հետ, ինչպես շտապիլ բառի «ստ, ճյուղ» և «ճառագայթ» իմաստները:

42. Թ Ե Ի

Իմաստի մեծ զարգացում ստացած և մեծ թվով բազարություններ ու զարգամաներ կազմող բառ է, լայնորեն զարծածական թե՛ հին մատենագրության մեջ, թե՛ ժամանակակից գրական հայերենում: Նախնական իմաստն է «թռչու-թի թև», ապա՝ սճկան լողակ, մարդու բազուկ, նավի ղեկ և այլն, Մազում է հեխ. pet արմատի ստորին ձայնդարձով pte ձևից՝ -wo ածանցով: Տեղակից լեզուներում իմաստային զուգարանություններն են. հուն. πετρα «սփետուր, թռչունի թև, ծառի ճյուղ կամ տերև», πετρα «թռչունի թև, թռիչք, թռչուն, լողակ», հագոտատի թևք, սրի բերան, տերև», անս. pātra «թև, փետուր», բάτρα «թռչուն, թռչող».

¹² Ծիլից. Անդ. Արդ. և այլ խմբի մյուս բառերի կապը ծիլ, ծիլի, ծիւ, բնծիլ բառերի հետ չեն բացահայտում, առաջին խմբի (հիւլ ևն) բառերի մեջ ասուլարանություն տե՛ս «Բաները Երևանի համալսարանի», 1988, 1, էջ 173—174 (ստորն՝ հ. 70):

փետուրական», հրգ. fēdara, անգլոթ. fēder, անգլ. feather, հին իւլ. fjadr, լատ. penna «փետուր» և այլն: Նույն արմատից են ծագում նաև հայերեն թիւ, քիւ, քիւր, քիլ, թարչիժ (Թարչալ) բառերը, որոնց մասին մանրամասնորեն խոսվում է «Արմատական բառարանում» չորսաբանչուրի տակ:

Կասկածից վեր է, որ այս արմատի հետ է կապվում նաև հայերեն փետուր բառը, բայց ինչպե՛ս Գ. Բ. Զահույանը (Очерки, 103, 106) հակված է ընդունելու, որ այստեղ ունենք հեխ. p > հայ. փ համապատասխանություն, որ նկատվում է նաև այլ ղեկներում, բայ որում այդպիսի ղեկների զգալի մասը նա դիտում է իբրև հայերենի տարբեր շեղերի պատկանող իրակություններ: Մենք կարծում ենք, որ կարելի էլինիք բացատրել պարզապես հեխ. p > Դ՝ անցումով, կանխադրելով *pel-tor-o (-tor զերբայական ժանցով կազմված ձև) և p > Դ՝ անցումը համարել տարբեր մանուբյան հետևանք (երկու պարզ խուլերից առաջինի վերածումը շնչեղի): Համենայնդեպ, այս բացատրություն էլ մնում է սուկ իբրև վարկած, թեև փետուր բառի կապը *pet- արմատի հետ ոչ մի կասկածի տեղիք չի տալիս:

43. ԹՈՒՇ, ԹՈՒԲ, ԹՈՒՐԾ

Թայլ լայտ» բառի հնագույն գործածությունը, բայ ճիւ. Աճառյանի, 13-րդ դարից է, բայց մեծ տարածում ունի թե՛ արևելյան և թե՛ արևմտյան բարբառներում և ամենուրեք զուրս է մղել այս բառը: Նույն բառի հետ ենք կապում նաև քառ բառը, որի մասին ճիւ. Աճառյանը գրում է. «անստույց բառ. մեկ անգամ գործածել է Փիլ. տեսակ. էջ 17. «Պատասխան և թուս մարդկան ուտելով»: որից քալիլ՝ նույնպես մեկ անգամ գործածված Ազաթ. «Գուլիցն փորտուց լնդոթ, թուլիլի օղով, փողիցն այտմամբ»: — Բառ. Երեմ. էջ 122 մեկնում է քառ «թուս», ՀՀԲ քառ լայտ կամ թուշ, քալիլ «թշալիլ, այրիներ ի թուշս լցեալ և կամ դիշուս լցուցանող և ուտուցանող, որպիսի է օղն կամ փուրն, որ ի հարկա-

նելն որոյք զփողս՝ լցուցանէ զթուռն և զբերանն», նՆԲ քառ
 Երբանալիք, լցուցիչ բերանու՝ քալիք Երբանալիք որպես
 պատաստով, ի և ուտուցիկ, և որ ինչ ընու զբերան իրրև զպատ-
 սասն»։ ԶԲ քառ «պատաս», քալիք «թուռնը լեցուն՝ ու-
 սած», իսկ ԱԲ քառ սովորութիւն միացնելով երկուսը՝ քառ
 «մեծ պատաս. 2. թուշ», քալիք «թուշը լեցուն, թուշը լըց-
 նող»։ Մրան պիտի պատկանի նաև հասկարառ «ստոր Հաս-
 կող» Ագաթ. որ սակայն «Հայտնի չէ, թե ինչպես պետք է
 միացնել նախորդներին» (Արմ. Բ, 1311—1312):

Մենք կարծում ենք, որ երկու քառ բառերը երկու տար-
 բեր հատվածներում, նախապես նույն բառն են եղել և մինե-
 նույն «ուտչել» իմաստով. այդ իմաստով էլ զործածվել է
 քառ բառը քալիք և հասկարառ բարդութիւնների մեջ:
 Նախնական այդ «ուտչել» իմաստից զարգացել է «թուշ, այտ»
 նշանակութիւնը: Ըստ այսմ, բերված վկայութիւնների մեջ
 քառ առանձին զործածութիւյմք որսանում է «թուշ, ուսած»
 իմաստները. այս երկու նշանակութիւնները նույնպիսի հա-
 րաբերութիւն մեջ են, ինչպես այս «թուշ» և այլնայ «ուտ-
 չել» բառերի նշանակութիւնները (այս բառն էլ, ինչպես
 ցույց է տալիս ստուգաբանութիւնը, նախապես նշանակել է
 «ուսած»): Այս երկու իմաստների միասնութիւնն ինքնին
 ցույց է տալիս, որ քառ «թուշ» բառի բնիմաստն էլ եղել է
 «ուտչելը. ուսած», որով և վերանուն է շք. Անաղյանի արտա-
 Հայտած անորոշութիւնն ու կասեմբեր հասկարառ բառի
 քառ բաղադրիչի «ուսած, ստոր» իմաստի «այտ» իմաստին
 կապվելու մասին («Հայտնի չէ թե ինչպես պետք է միացնել
 նախորդներին»): նշանակելով «ուսած», 2. այտ (զարձալ
 որպես «ուսած»), քառ բառը մեկ բարդութիւն մեջ չենց
 այդ նշանակութիւնք է առնվել (հասկարառ «Հասկն ուսած՝
 լցվելով փքված, Հասկն ստոր»), մյուսի մեջ պարզապես
 «թուշ, այտ» նշանակութիւնք՝ «Յշերն ուսած» (կապակ-
 ցութիւնն ինքր այդ իմաստն է թեւարում. «զոչում է փքով
 ուսած լինելով, թշերը լցրած օդով, կոկորդի ուտումով»):
 Ինչ վերաբերում է Փիլոն քառ (պպատասս և թուսս մարդ-

կան ուտելով») բառին, ապա, մեր կարծիքով, ավելի հարմար
 է «Հացի պատաստով» իմաստով Հասկանալ (պատասս և
 թուսս = պատաստով և պատաստովներ), և այդ դեպքում այս
 քառ բառն էլ իր նախնական իմաստով կկապվի «ուտչելը»
 բնիմաստի հետ (պպատաստելով ուտուցիկ ձև ստացած Հաց»)։
 այս բացատրութիւնն, անշուշտ, մնում է լոկ ենթա-
 դրութիւն և կարող է հաստատող կամ բացատրող քննութիւն:

Այսպիսով, բնորոշելով, որ քառ «թուշ, այտ» և քառ
 «ուսած» (թուալիք, հասկաթուս) բառերը մեկ արմատ են
 ներկայացնում, մենք այդ արմատը կապում ենք քառ այտոս
 բառի հետ, որի նախնական իմաստը ևս համարում ենք «ուտ-
 չելը, ինչպես այտ բառի բնիմաստն է՝: Երկու բառն էլ մենք
 ծագած ենք համարում հնթ. Թսւ., Թսւ., Թսւ., Թսւ., Թսւ., Թս-
 տուչիչը արմատի Ի-ով աճած -so ածանցավոր *turso ձևից.
 *s զկապակցութիւնը հայերենում տալիս է ա և րը (հմմտ.
 *tars > քառ-աւ և քարչ-ամ), ուստի և *turso-ից պետք է
 տեսնելիք քառ և քարչ. սակայն ըլ կապապթութիւնից ր-ի
 սովորական անկումով (հմմտ. քարչի > քաշի), քարչի > քա-
 շի, թորչումի > թաշումի, կարչն > կաշերուն > կաշմբուն
 և այլն) ստացվել է քուշ: Հնդեվրոպական այբուստը բազ-
 մաթիվ աճականներով (bh, g, k, l, m, n, r, s, t) աճած
 ձևեր ունի, որոնք նախնական «ուտչել» իմաստի զարգացու-
 մով ավել են բազմազան նոր իմաստներ, ինչպես՝ «հաստ,
 խիտ, թանկր, զեր, թիվ, մեծ թիվ, հազար, շատ, ամեն, մե-
 ծանալ, զարքանալ. ուտուցք, պալար, հաստութիւն, զերու-
 թիւն, բարձունք, բլուր, ցցունք, երկիր, ժողովուրդ, մթու-
 թիւն, ցուլ. ուժեղ, ուսած» և այլն, և այլն:

Ձևի և իմաստի կոպից մեք քառ և քաշ բառերի հետ
 համեմատելի են. հին հնդկ. Խւճա՝ «ուժեղ, հարուստ, ա-

* Որ քուշ այտոս բառը կապված է ստուգահիւթիւնը, ուտչելը իմաս-
 տի հետ, ավագորիս ցույց է տալիս ՕՄ ԴՕՏ կապակցութիւնը, որ ելա-
 նկում է սեստորի փոփոխ և ուտուցիկ մասը:

ուստ», հուն. τούρος (<¹τιο- τό-σ) սիւլլա, դեզ, արջ: սպու-
նիրս, լատ. turgeo, -ere բլլցված լինել, լիտվ լըվելը և
այլն: Իմաստի համար (տուռնելը, իմաստից մարմնի մասերի
անվանում) համեմատելի են. հրդ. dioh, անգլ. deoh
«սպղր», հին իւլ. քիո սեստուկի ուսուցիկ ու փափուկ մասը,
նասուկի թուշը (ճիշտ ու ճիշտ համապատասխան հայերեն
օրի էսճ-ին), կիւր. tin սեստուհ, հուն. τούρος տուսոցը,
կրտուկ, կրդ. սպպատ, ցից, երդոնգ, ճիրան, penis, այլ-
եւ լատինաց սակրի միտ, սպղր, հայեր՝ պողի միտուկ, հին
կիւրգաւուլով. tulb սեծոճրակ, շլիւքը, սուս. тина սենտի
կողմը, հետե. թիկանքը, тодстын սեսուս և այլն: նույն
արմատի Բ անվանով և -ջ'օ մասնիկով turg'օ ձևից ժա-
գած ենք համարում նաև թուրք սարտ, թուշը բառը, որ
գործածվել է մեր հին մտանկարաթյան մեջ. ջ'օ սծանցի
համար համեմատելի է լատ. turgeo, -ere բլլցված լինել, լի-
տվ լըվելը: նույն արմատի તેս պարզ ձևից է ժաղամ հայ.
քիւ և tu—phօ ձևից՝ բուփ, որոնց մասին տե՛ս Պոլ. I,
1080 և Արմ., Բ, 1323:

44. Ժ Է Տ Յ Ժ Ե Տ

Գործածվում է միայն բարդությունների մեջ՝ -մետ/-մէտ/
-ծատ/-ծաւ ձևերով (ախտածետ/ախտածէտ, զիւածետեւ/
զիւածեաւայ, լուանածէտ սլուանահար, լուանոս, նենգածետ/
նենգածոտ/նենգծոտ և այլն): Հր. Աճառյանը ստուգարանում
է իրրի իրանական փոխառություն (Արմ. է, 136), գրելով.
այ՛հ. žatan, zatan տարրենի, հարվածել, սպանել, զնդ.
jan պրս. 𐬰𐬀𐬎𐬎𐬀 zadan «զարհել...»: ընթարքի է ապիս ախ-
տածետ իբր զնդ. axti-jatya, ինչպես ունենք paiti > պիտ.
բատ այսմ զնդ. ախտածետ նշանակում է «ախտահար»,
մյուսները (նենգածետ են) կազմված նույն ձևով: Ստուգա-
րանությունը միանգամայն ճիշտ է, բայց կուզենք ավել-
լացնել հետևյալը. հայերենում տարբեր գրչությունների

սխալագրություններ չեն, այլ հին իրանական (հին պարսկա-
կան և ավեստերեն) չառ «խփել, հարվածել» բայի անորոշ
դերբայները. jaidyai, jaiti, բացարձակը՝ jatəm¹³:

Հայերենի լսրս ձևերից երեքը՝ մէտ, մեւ, ժաւ ուղղա-
կիւրեն կապվում են այդ դերբայների արմատների հետ ի-
րենց ձայնավորական հերթադալությունը jaiti > մէտ, jatəm
> ժաւ, -ծաւ ձևի (է-ի փոխարեն և) բացատրությունը ավել
է Աճառյանը. ինչ վերաբերում է նենգծոտ/նենգծուտ ձևին,
այսպէս կարծիքով այդտեղ կամ ունենք մի անհաս ա-
ծանց, կամ, որ ավելի հավանական է՝ մի բաղադրիչը
իմաստի և ինքնուրույնության միջազուրումով վերածվել է
-ծաւ, ժաւ ածանցների, բաւ որում, եթէ մյուս բառերի մեջ
մեւ/մաւ-ի ինքնուրույնությունը դիտակցվում է նաև այս-
օր, այսպէ՛ս նենգածետ/նենգծեւտ/նենգծուտ բառերի մեջ այդ-
պես ցայտուն կերպով չի առանձնանում, և իմաստով նույ-
նանում է նենգծաւ բառի հետ: Այս դեպքում -ծոտ/ծուտ
ածանցի վերածված բաղադրիչի առաջացումը կարելի էլի-
նի դիտել իբրև բաղադրկության (կոնտամինացիայի) հետևանք:
Այսպիսով, հին հայերենի այդ երեք տարբերակների (մէտ/
մեւ/ժաւ) գոյությունը ցույց է տալիս, որ հին հայերենում
զաւ եղել է մի կենտոնակ բաւ, որ պահպանելով իրանական
ձայնավորական հերթադալությունը, պահպանել է նաև դրանց
միասնությունն ու կապը և կազմել նորանոր բառեր:

45. Լ Ե Ս ՈՒ Լ Լ Ո Ս Ե Լ

Ննադույն իմաստն է «մմիւ, ճգմել», որից՝ «մանրել,
փշրել, փռշիացնել», բարբառներում լալներեն գործածվում
է արմատի ու ձայնավորով ձևը՝ լոսել, որ բացի «մանրել»
նշանակությունից ունի նաև «հասանել, հասնող սրել» ի-
մաստը. իմաստային այս անցումը կապված է արմատի հնա-
գույն (հնդեվրոպական) «տորել» նշանակության հետ:

¹³ Ch. Bartholomae, Altiranisches Wörterbuch, էջ 460, 603.

Մագրում է հնխ. kleik¹⁴ - «ցավ պատճառելով տրորել, մշեել, նզմել, նմել» արմատից, որի ժառանգներն են. հին հնդկ. klišnati «տանջված», sam-kliš «ճամել», լիտ. klišė «տնելի», եկեղեցատալոնական klešta «տնելի», kleštiti «ճամել, տրորել», ռուս. (բարբառային) клесть «մշեել, նմել, նզմել», клеши «տնելի» և այլն (Պոկ., 602)։ Հին, և բառակցքում 1-ից առաջ հայերենում ընկնում է (հմմտ. kleu- > հայ. լու (լսել բախ արմատը), kleitfyo > հայ. լիսան և այլն)։ Եւ երկրաբար «հայերենում պոքո է տար է, որից լիսուլ (և ոչ լիսուլ)» սակայն լիս և լուս ձևերի Ե/Օ ձայնաբարձր թույլ է տալիս կանխադրելու հնխ. արմատի klek¹⁵, klok¹⁶ շրջարձակված տրպը, որով վերանում է հնչյունական անհամապատասխանության խնդիրը։

46. Լ Մ Ե Ղ

Արմատն է լում, որ պահված է դիւրալում ճեշտ լմվող, կակուղ» բարդության մեջ. պարզ լմի բայը նշանակում է «ճամել, նմել, կակղացնել», կրկնական կազմություններն են լվմվի, լվմունի (կա նաև լումվմի, որ բարբառային ձև է՝ ու > փոփոխությանը)։ Մագրում է հնխ. lem-/lom- մանրացնել, «մանրացված. կակուղ, փափուկ» արմատից։ Զուգահեռներն են. այբ. lemē «կալ. միջհանք», հին բարձր գերմ., հին սաբս. lam, հին իտլ. lami «անգամալույծ, հաշմ», լատիշ. l'imstu, l'imt, լիտվ. himte «քնան տակ կրել», հին բուլղ. loml'jo «կոտրել, ջարդել», օստ. ЛОМ «երգ», հոգր. ЛОМЫ «ջարդվածք, կոտրվածք» և այլն (Պոկ., 674)։ Հայերենն ըստացվել է արմատի միջին աստիճանի ձայնաբարձր՝ lom, որ պահված է նաև գերմանական և սլավոնական լեզուներում¹⁴։

¹⁴ Թուրքու մեղ հայտնեց պրոֆ. Գ. Բ. Զահուկանը, այս ստուգաբանությունը մեղանեց անկախ առաջարկել է ինքը՝ իր ճշյ բարբառագիտության ներածության մեջ։

Ավանդված է դասական շրջանից. բառարանները բացատրում են «ծիլ, բնձյուղ կամ արմատի մազգուր» (Արմ., Գ, 458)։ Մագրում է հնխ. *sqel-, *skel- արմատից, որի բուն իմաստն է «նեղրել, պատռել», բայց որից զարգացել են «կեղև, պատիճ, հատիկ» և նման իմաստներ ինչպես՝ հին հնդկերեն kāṇa «պատիկ», լատ. siliqua «կեղև, պատյան», սլավոներեն hal' «փուշ, քիտ», անգլ.-սաբս. sciell «պատիճ, պատյան», միջին բարձր գերմ. schelle «պտղի պատիճ», հին բարձր գերմ. scala «պատյան, պտղի կեղև» և այլն։ Արմատի շեղը և խեղը հայերեն ձևերը նույն հարաբերության մեջ են միմյանց հետ, ինչպիսին կա շեղ (շաղ, շիղ) և խեղ բառերի միջև, որոնք ծագում են այլ իմաստով, բայց նույն ձևով (*sqel «ծնել, մկե») արմատից։ Առհասարակ հայերենի շ-ի ծագումը հնխ. Գ-ից մութ է, թեև շատ բառերի մեջ է հանդիպում։ Ինչ վերաբերում է լս-ին, այպ օրինաչափ է գ(kh) > խ փոփոխությունը։ Այնպես որ, թե՛ իմաստով և թե՛ հնչյունական օրենքների տեսակետից *qelp, khelp > խեղը միանգամայն օրինաչափ է։ մղել, պատռել իմաստից օստ, ծիլ, բնձյուղ իմաստի զարգացման համար համեմատալի էն նյուղ, նեղլ, նաղ բառերը, որոնք նույնպես մեկ արմատից են ծագում։

48. Խ ԵՂ Ե Փ

Ավանդված է դասական շրջանից և նշանակում է «մի ամբողջի կեսը, մագրերի երկուսի բաժանված հյուսիսից մեկն մեկը», ըստ «Առձեռն բառարանի» նաև «շուխտակը, երկուտրեանկ»։ Հայերեն գործածվում է արդի բարբառներում «բնկույզի միջուկի չլուրթանչյուր կեսը, բնկույզի միջուկը» իմաստով՝ խեղեփ, նեղեփ, նեղափ ևն ձևերով (Արմ., 2, 459—460)։

Մագրում է հնխ. *(s)qel «նեղրել, պատռել, կտրել» արմատից՝ qelap «նեղ. նշանակության համար մեր բառի հետ

Համեմատելի են հին հնդկերեն kálpate «դատավորվել կարողով, բաժին-բաժին արվել, բաշխվել» kalpāyatī «բաժանում է, բաշխում է», անդլ. սարթ. scielle «բաժնային՝ ոլորտի են պատիճ՝ փոճակ», հին բարձր գերմ. scala, անդլ. սարթ. scealu «պատշաճ, կեդի, պատիճ», sceallan «երկրորդ, փոշա», հին սարթոն. scola, անդլ. սարթ. sceolu «բաժին, մաս, խումբ», լատ. silliqua «կեդի, պատշաճ», սլավոներեն sčajla «պատաս, կտոր», գոթ. halbs հին իսլանդ. half, անդլ. սարթ. healf, հին սարթոն. half, գերմ. haib «կես, մաս», սերբ. խորվաթ. prōkola «մի ամբողջի մաս», ռուս. рѣкол «բաժանում, ձեղրում» և այլն (WP, II, 591—596, Pok., I, 923—927): (S)qel- արմատի (s) qelep ձևն իր մտանգաներն ունի հնդկական, իրանական, հունական, իտալական, գերմանական հնդեվրոմ: Հայերենի խղղեփ ձևը կարող է ստաշանալ ստանց 8-ի ձևից, q(kh) > խ համապատասխանությունը միանգամայն օրինաչափ է: Դժգոհություն է հարուցում վերջին փ հնչյունը: Հնիւ. p ձայնավորից ճատ սովորաբար դառնում է ռ (օր. *septim > եփն), ռուսի և պետք է ենթադրել քիւով անձով *qelepի նախածնը: Բարբառների մեջ խ > հ փոփոխությունը տարմանաթյուն հետևանք է, ինչպես խաղող > նաղղ, խաղ > նաղ բառերում:

49. Կ Ա Տ Ա Ր

Բառի նախնական իմաստն է «զագաթ», որից ստացվել են՝ «ծառի վերին մասը՝ զագաթը. արագաղի բրուկ-ժայր, վերք, ավարտ», ապա և՝ «զործադրություն» իմաստները: Մագում է հնիւ. geu արմատի գծ տարբերակից: Իմաստի անսակնոց մեր բառի հետ համեմատելի են. լիտվ. gėu̯gėras «բեռնազագաթ», միջին բարձր գերմ. koiel «բեռնազագաթ», հին հյուսիսային kuif «կտրածև ծայր՝ զագաթ՝ կույտ», հուանդերեն kuif «փետրափունը, գլխարկ, թշուռի բրուկ. ծառի կատար», գերմ. (բաղարական) koppen «ծառի

պակ», անդլոսլ. copp «զագաթ, անոթ, զավաթ», միջին գերմ. koppe «թշուռի կատար», koppe, kuppe «կտրածև լեռնազագաթ» և այլն:

50. Կ Ա Տ Ի Կ

Կատիկը կոկորդի վերնամասի նորը առաձգական կռճիկն է, որ փակում է շնչափողը ուսելու և խմելու մասանակ. կռչվում է նաև մակկոկորդ (epiglottis): Այս բառը մասնազրույթյան մեջ ավանդված է միայն միջին դարերից, սակայն շատ կենսունակ է արդի ժողովրդական-խոսակցական լեզվում և բարբառներում. գործածվում է նաև արդի գրական լեզվում: Կազմված է կատ- արմատից՝ -իկ մասնիկով. գրված է նաև գրիկ (<*կտիկ) ձևով: Մագում է հնիւ. geu- արմատի guđ/gad տարբերակից. երկու տարբերակներից առաջինը տվել է կուտ-իկ, որից միջին հայերենում ունենք գրիկ, խսկ god տարբերակից՝ կատ-իկ: Հնդեվրոպական արմատի նախնական նշանակությունն է «ճկել, կորացնել, կամարի ձև ապլ», որից ստացվել են՝ «1. աղիք, փորոտիք, 2. կոկորդ, վիշ, 3. գունդ, գնդակ, 4. կլոր անոթ, 5. կլորացրած՝ ոլորած բան, ոլորվածք, 6. անձավ, որը, զով, 7. մեք, աղբ, գիտ» նշանակությունները: Ըստ իմաստի հայերենի կատիկ բառի զուգահեռներն են. լատ. guttur «կոկորդ», լիտվ. guza «1. քուշ, կանառք, 2. խղպիպ (305)», ռուս. гуда «շրթուներ», անդլ. (բարբառային) kyt, kite «ստամոքս, փոր», միջին բարձր գերմաներեն kiutel «փոր», նոր բարձր գերմ. (բարբառային) Köderl, Goderl «բոխիս, խպիպ», իսլ. ku - u - iar/kuttar «ծածրակ, վիշ, ուս», միջին նիդերլանդերեն coon «ծնոտ», նիդլոլ. koon «ալտ» և այլն:

51. ԿԱՐՆԷՆ՝ «ՈՒԾ», ԿԱՐՆԷՆ՝ «ԱՆՐԱԿ»

Այս բառը, որ առանձին գործածությամբ հին մատենագրության մեջ չի ավանդվել, հանդես է գալիս բարբառ-

Թյունների և սծանցումների մեջ «ուժ, զորութիւն» նշանա-
 կությամբ (կարչնեղ, կարչնեղութուն, կարչալիեղ, կարչ-
 բուն): Կարչն, կարչ կարչ/կարչ (Նաբորող Բ-ից առաջ
 և՛ օրինաչափ փոփոխությամբ) տարբերակներից հնա-
 գույնն է և առավել տարածվածը՝ կարչն, որից ստացվել են՝
 կարչն (բ-ի անկումով) և կարչ (ն-ի անկումով): Մազուն է
 հնր. guer արմատի ց՛Գ—ու/ց՛ԳS—ու ակնով: Յեղակից լեռու-
 ների զուգահեռներից բոս իմաստի հայերենին մերձավոր են.
 կիրք. bryw «ուժեղ, ուժեղութիւն», հուն. βρωμα «էջոր,
 ուժեղ, զորավոր», իջուչն «ուժեղ, ամուր», βρω «քանու-
 թիւն», հին իռլ. brig «ուժ, զորութիւն», արժեք, հարգ», լա-
 տից. grinum «խառութիւն, դածանութիւն», գերմ. krieg
 «կռիվ» և այլն: Հնր. rs>հայ. բշ հնչյունափոխութիւնը օրի-
 նաչափ է:

Հր. Աճառչանը կարչն արմատի տակ բերում է Սու. Լե-
 հացու բառարանում հիշված կարչն բառը՝ գրելով. սոսանձին
 կարչն մեք տալիս է Բու. Ստեփ. Լեհ. և մեկնում «ծայր բաղ-
 կին ի մէջ սակերաց թիկան և արմկան»: Սա, անշուշտ, պարզ
 ենթադրութիւն է. ավելի ուղիղ կլինենք զե՛ր «ոչ զղանց կամ
 մկանանց» և կամ պարզապէս «շիղ», ինչպէս ունին ունեցը
 (Արմ. Գ. 1099): Մեր կարծիքով Աճառչանի այն միտքը, թե
 Սու. Լեհացու բացատրութիւնը սլարոն ենթադրութիւնն է, և,
 բավականաչափ հիմնավորված չէ. Սու. Լեհացու բացատրու-
 թիւնն այնքան պարզորոշված է, որ հազիվ թե հնարավոր
 լինի պարզ ենթադրութիւն համարել: Եթե նա կարչնեղ բա-
 րից սոսանձանքին արմատն է լու. Լեհացու բացատրու-
 ցատրեր, ապա ավելի հավանական կլինեն ուղիակի բազմ-
 րիկում, ուս կամ ջիղ բառերով բացատրել. բայց քանի որ նա
 հատկապէս շեշտում է բազուկի ծայրը՝ թիկունքի և արմունկի
 սակորների միջև, ապա պետք է մտածել, թե նրան ծանոթ էր
 սլարոնի մի բառ: Ընդունելով այդ բառն իբրև ինքնուրույն
 արմատ, որ նախորդ կարչն «ուժ» բառի հետ կապ չունի և
 ստիկ համանուն է, մենք ծագած ենք համարում հնր. ց՛ՕՐ
 արմատի ց՛ՕՐոց/ց՛ՕՐS—ՈՐ տարբերակից (Պոկ., 474), արմա-

տի բնդհանուր իմաստն է «կլանել, կուլ տալ. կոկորդ, վիզ,
 վզի աղբի մասը»: Այս նույն արմատից են նաև հայերեն
 կնր. կուր (կեակուր), կակորդ բառերը:

52. ԿԱՐ, ԿԱՐԵԼ, ԿԱՐ (ԱՆԻՆԿ)

Բառի առաջին իմաստն է սպարան, շվան, լար, առա-
 սան», որից բխել են «հող, կարելը» և այլ նշանակութիւն-
 ները: Մազուն է հնր. ցԵՐ «դարձել, պտտել, ոլորել, փաթա-
 թել» արմատից¹⁵, Արմատը շատ մեծ գորդացում է սոսա-
 ցել ցեղակից լեզուների մեջ թե՛ և՛ իր իմաստի ունե-
 կեանքը՝ առավ՛ մարմնի անդամների (մեջք, ոտք, կուտ), զա-
 նազան գործիքների ու գործողութիւնների (կարթ, ջուլհակի
 հաստը) անվանումներ: Մեր բառի զուգահեռներն են հին
 հնդկ. gunā-h («ցր-ոս») «պարանի՛ լարի ստանձին թել-
 առասն, շվան», անգլ. crane-steele «հողակա գործիք»,
 crencestre «շտրհակուհի», հին հնդկ. granth-, grathna՛mi
 «փաթեմքել, ոլորել, կտակել, հանդուց անել», հին իռլ. grin-
 ne «հանդուց, կապ, արցակ» և այլն (Պոկ. 385—390):

Այս արմատի հետ ենք նույնացնում կարաւանդ բառի
 առաջին բազադրիչը՝ կար: ՆՃԲ այս բառը բացատրում է
 «սնանկուտ» կամ «զբաճի վրայի կարած կամ զողված տե-
 դերը»: Հր. Աճառչանը հիշում է նաև նրեմիայի բառարանի
 կարաւանդ «զբաճի կայս» և ակարաւանդ «ոյտը զբաճից» բա-
 ռերը, եզրակացնելով, որ ավելի հավանական է ՆՃԲ-ի նրկ-
 րոջ բացատրութիւնը. միակ գործածութիւն մեջ էլ, թեև
 զրված է հունարեն բնագրի «սնանկուտ» բառի փոխարեն,
 բայց այդ իմաստին չի համապատասխանում. ահա այդ զոր-
 ծածոթիւնը. «Վիրաւորեցու բնդ կարաւանդան ի ներքս»
 (ՍԳԲ, Ա թագ., լա. 3) Այս նախադասութիւնը պէտք է թարգ-
 մանել՝ «Վիրավորվից կարավանդների տակ՝ ներքս», որով

¹⁵ Ուրիկ իմաստից «լար, կարել, թել» իմաստների զարգացման հա-
 մար հմեռ. կարձ, դերձակ, դերձակ, հանդերձ բառերը, որոնց նախնական
 (հնդկերկրական) իմաստն է զարձալ «ոլորել, պտտել, շրջել»:

կարաւանդ-ը կզտանա զրահ: Մեր կարծիքով կարաւանդ-ը օգազրահն է, ըստ բազազրիչների՝ կար «ճանգուլջ, կար» և անկ (<վանդ) «կապ», այն նշանակել է «ճանգուլջներով կապված» հյուսված», որով և կառագլի օգազրահը, նրկորդ բազազրիչը ժանտի է իրանական փոխառութիւններից և նշանակում է «կապ» (իրան. բանդ)¹⁶:

53. Կ Ե Ր Կ Ե Ր

Այս բառը ունի միայն Ս. Գարամաշյանի բառարանը, որ բերում է 2. Անտայանի «Արմատական բառարանում» (Փ, 1156) և համարում անստույգ ըստ: Գարամաշյանը բացատրում է «Բարձրաբայց (=բարձրան, բարձրարուն) թրուշուններու սեռ, տեղիք, folque»: Փրանսերեն այս folque թրուշուր օտա. ԼԵՍՅԱ-ն է, որ օտա-հայերեն բառարաններում ֆարգմանվում է «սկ փարփար, կերկեր»: Եույն կերկեր բառը եույն իմաստով ունի նաև Գազարյանը (Հայ-ուսեներն բառարան, Թիֆլիս, 1911), ինչպես և ավելի վաղ՝ Ռուս-հայերեն բառարանում՝ ԼԵՍՅԱ բառի դիմաց: Բայս անբաստույզ չի կարելի համարել: Ես զործածվում է շատ բարբառներում. մասնավորապէս Մեկրու բարբառում այդպէս էր կոչվում Արարի փափամերձ ձա՛հճատներում բնակվող մի թրուշուն, որ սև փարփար է:

Մագում է հնիս. *ger- «խզված» խոպոտ ձայնով կանչել՝ ձայնել, կանչալս արմատից: Ցեզակից լեզուներում եույն արմատից ունենք, իբրև թրուշունների անուններ՝ հին բարձր գերմ. kra(w)a, kraia, միջին բարձր գերմ. Krähe, հին սուքս. kraia, անգլ.-սուքս. crāwe, հին հյուսիսային kraka «արջնագառվ, կզերակ», հին հյուսիսային kraker «տղառվ», լատ. graculus, «արջնագառվ, կզերակ», հուն. γράζα-

¹⁶ Ընդունելի լինք համարով կար բառի համեմատությունը հուն. γράζα «տառաս, լճան» և գրանց ցեզակից բառերի հետ, որոնք հանդիսան են հնի. և էր «տառաս, հյուսել, կապել» արմատի, որովհետև է՝ չայն-րենում տալիս է ս. այդ արմատից ունենք ստիվ:

ու: «կունի», գուլիերեն tarvos trigaranos, կլմերեն, կրունիերն, բրետոներեն garan «կունի», լիտ. garnys «ճալ», gervi «կունի», լատ. grus, գիրմ. Kranich, լատիշերեն dzefve, հին պրուսերեն gerve, օտա. журавль, հայերեն՝ կուռնի: Հայերենը, այսպիսով, նույն արմատից ունի երկու թաղանթ անան՝ կերկեր և կուռնի, ինչպես որ լատիներենը՝ grus «կունի», graculus «արջնագառվ», լիտվաներենը՝ garnys «ճալ», gervi «կունի», գերմաներենը՝ Krähe «արջնագառվ», Kranich «կունի» և այլն (WP, I, 591—593, Pok., I, 383—385):

54. Կ Ե Ր Կ Ե Ր Ի Լ

Հին մատենագրութեան մեջ, ըստ ՆՀՐ և 2. Անտայանի, պատահում է միայն մի անգամ, այն է՝ «Կաւստակիցի ես տա աղաղակել, կերկերեցաւ կոկորդ իմ» (Սղմ, կը, 4), ՆՀՐ և 2. Անտայանը բացատրում են «Կոկորդը չորանալ, ձայնը կտրվել»: Արդի գրականում գործածվում է կերկերում «խզված, խոպոտ» (ձայնի մասին), հազվադեպ նաև կերկերալ «ձայնը խզվել, խզված» բերկերում ձայնով խոսել»: Մագում է հնիս. *ger «խզված, խոպոտ ձայնով կանչել, խոպոտ ձայնով ձայնել» արմատից, որից ցեզակից լեզուներն ունեն, հին հնդկերեն jarate «աղմկել, հնչել», սուր և բարակ ձայն հանել, խոպոտ ձայն հանել, կանչել», jara «աղմուկ», հին բարձր գերմ. kerran, միջին բարձր գերմ. kerren, karren, և անգլ.-սուքս. ceortan «սուր ձայն հանել, մոնչալս», օտա. grazi, «կանչալ, կոկոս» և այլն (WP, I, 591—592, Pok., I, 383—385): Ընդգիտրուպական բառը բնաձայնական է, որ ցեզակից լեզուներում դարձել է նաև զանազան թրուշունների անուն, որի մասին տես նախորդ բառի տակ: Մեր բառը կրկնապար է, ինչպէս բացատրում է 2. Անտայանը (Արմ., Փ, 1156):

Այս բառից պնքը է կարծել մեր բարբառներում տարածում ստացած և զանազան ձևափոխութիւնների ենթարկված գկոտալ «ստամորսի զագերը կոկորդից զուրս բերել»: Այս

բառի բարբառային ձևերը երբեք խումբ են կազմում. ա) պարզ կեր արմատի կրկնություն՝ յուրաքանչյուր բարբառին հատուկ հնչյունափոխությամբ, ինչպես՝ գեզգռալ (Կես., Մարզվան), քեղկառալ (Ակն), գերգռալ, քերգռալ (Արարկեր), քերգռալ (Մեքաստիա) և այլն, բ) պարզ արմատից՝ զ սաստկահանով և բայական ա, շ, սակ ածանցներով կազմված ձև, ինչպես՝ գ-կառալ (Գորիս, Արարատ., Գվին, Ղբ., Մեղրի, Թրիխի), սկոռալ (Վան), ծիրճատի ալ (Ղարաքաղ), կոչնել (Կեսա-րիա), կոսկալ (Ալշահեր, Մուշ) և այլն, գ) ու ձայնավորով կրկնավոր ձև՝ առաջին ներում Ե > Ղ փոփոխությամբ, որ ունի Մանեան (կողկարգալ) և Բ > Ճ > Ժ, Բ > Ղ փոփոխությամբ, որ ունի Խարբերյղ (գ'օձգ'լղալ): Երեք խմբերից այս վերջինը որովոր և կապել նախորդների հետ. գ'օձգ'լղալ ծագում է որովայ-ից. կողկարգալ անորոշ է մտնու: Նախորդ երկու խմբերի բոլոր ձևերը բխում են կեր արմատից: Իմաստի հա-մար համեմատելի է որովայ բառը, որի հնդեվրոպական նա-խածեր ծագում է, բոս Վալդերի, Դreit- բնաձայնից (II, 357):

55. ԿԻՐ, ԿԻՆԼ, ԿԱՐ (ԿԱՐԱՆՏ, ԿԱՐԻՔ)

Կնեսունակ արմատ է, որ սովել է բազմաթիվ ածանցա-վոր ձևեր, բարբառայիններ, ինչպես և՛ իմաստի ընդարձակ էլուզավորում: Նախնական իմաստը, ինչպես ցույց է տալիս Անատյանը (Արմ., Գ, 1207-8), եղել է «բեռնելով տանել»: Ծագում է հնի. Երբ արմատից, որի իմաստն է «ծանր», այս իմաստից բխել են մի կողմից՝ ծանրությամբ բնորոշ-վող առարկաների անուններ (աղորիք, աղացաքար, երկան, բուռ են), մյուս կողմից՝ ուժ, սաստկություն, բանություն, նե-ղություն իմաստով բառեր: Հայերենում առաջին խմբի բառերից ա՛նենք Էրկան (<gʷrānā> րկան > երկան), երկրորդ խմբից՝ կարչն «ուժ» (gʷrēnu) և կիր (gʷer). կրել բառերը: Այդ բառի զուգահեռներից են. հին հնդկ. guruh «ծանր, ծանրակշիռ, կարեքոս», ավեստ. ցուր «ծանր», պրսկ. gīran «ծանր», հուն. βερός «ծանր», βερίον «ծանրաց-նել, բեռնավորել», հոդեկներ, βερος «ծանրություն», βερίος:

«կշիռ, ծանրություն, բեռ», βερίος «կարեքոս, ծանրակշիռ», հին իռլ. brig «ուժ, կարողություն», կիր. bri «ծանրու-թյուն, արժեքավորություն, արժանավորություն» և այլն:

Այս արմատից ենք կարծում նաև կար «ճարկավորու-թյուն, պետք» (կարիք, կարոս, կար-ևոր) բառը: սև.ժ. ճըն-չում, ծանրություն > պլոնք, կարիք, կարեորություն՝ նմանտի անցման համար հմտ. հայ. ալց պլոնք, կարիք- <ստոր. elas, որ նշանակել է «անշիկ, հարկազրկել, բանա-զատել»¹⁷:

56. ԿԻՑ / ԿՈՒՑ

Բառիս իմաստն է՝ 1. Մի բանի մաս, կողքին, մասը, ի-րար մաս. 2. միասին. 3. հոգն. կից ձևով՝ «սաստուժի ետևի մասը», որից էլ՝ թարցնի նշանակությունը, կուց ձևով՝ «բուռ» (երկու ափերն իրար միացնելով ձևացրած): Հին մատենագրու-թյան մեջ զործածվել է նաև «զույգ» իմաստով. այդ նշանակու-թյամբ զործածվում է նաև բարբառներում (իրար կպած զույգ հայջի համար). արմատից կազմված բայը (կցել) նշանակում է «միացնել, միավորել, հավելել», բարբառնե-րում՝ նաև «զուգավորել» (շնեթի): Ծագում է հնի. ger ար-մատից՝ -sko մասնիկով (*ger-sko > *ge-sko > կից): Ար-մատի ընդհանուր նշանակությանն է «միավորել, ի մի բե-րել, կցել, ամփոփել, հավաքել»: Տեղակից լեզուների զուգա-հեռներից առանձնապես հիշելի են. հուն. ζυγισ (ζυγισ, կշիռ) «հավաքում են», ζυγισ. ζυγισ «հավաքում է, մտղով», ζυγισտος «ձևաքի ափ, ձևաք», լատ. grex «երամ, հոտ», լիտ. gurgu-lys «խառցում», gurguole «բազմաթյուն, զանգված», լա-տիչ. gurste «թուշի կապ», հին եկեղիցալատինական grastī, սուս. ropct «բուս, կոպ», լիտ. gretā «իրար մաս. կոպ-կոպ»:

¹⁷ Շեղանկյի շնեք համարում կարիք, կար-աստ բառերի կար արմատը լատ. carus «խանկարի, սիրելի», լատիչ. kánuot «սանձալ» և այլ բառերի նեո հնի. *ka-ro < *ka-«ցուցնված», անկայք արմատից բեռնակր. որովհետև հնի. k(ɔ) «սարկեռած սալիս է Լ և ոչ կ»:

քի կից», լատ. gremium «գրիկ, խոխոս», հուն. γυνή: «գիսկած բուս, բանջար» և այլն: Հայերենի նեա ըստ ձևի համեմատելի են հուն. γένος: «ճեռք, ափ», լատ. grex «նոս, երամ», լատիշ. gürste «գլուշի կապ», սլավոնական grastъ «բուս» ձևերը, որոնք ստացվել են -sti ածանցով *ձևից (*gursti >gursti), հայերենի համար պետք է կանխադրել -sko ածանցը: կից/կաց ձևերի ի/ու ձայնափոխները ձայնազարժի նեա են կապում, ըստ որում հնի. արմատի համար Պոլոսնիս կանխադրում է ger-, gor-, gur և grem հիմնաձևերը (Պոկ. 382—383):

57. Կ Ո Ղ Կ Ո Ղ Ի Մ, Կ Ա Ղ Կ Ա Ա Ն Ձ

Կողկողիմ բառն ըստ նշՖ նշանակում է սողորմ և ցաճազին աշօբ նայել, լալ, հեծել, պաղատիլ. հայիլ, մաշիլ: Անտառյանն էլ «Արմատականում» (Ձ, 1291) անփոփոխ կերպով բերում է այդ բացատրությունը՝ ալիլացնելով սողիկ օղիկ գալ: և դուրս գցելով պաղատիլ, հայիլ, մաշիլ: Բառի նախնական իմաստն է սողբալ, բարձրաձայն լալ, որ պարզ կերպով երևում է նշՖ-ի բերած օրինակներից, ինչպես և կողկողանայ, կողկողագին, կողկողալի բառերի իմաստից: Կողկողագին նշանակում է քրթրձրաձայն ողբալով, աղաղակելով: Կողկողանք՝ սողը, բարձրաձայն լաց, այս են վկայում «ձայն կողկողանաց», «նառալանք կողկողանաց հեծուրեան» և նման կապակցությունները: Ըստ Անտառյանի, պարզ արմատից կազմված բայը՝ ցողալ ձևով պահպանված է Ջեյթունի բարբառում և նշանակում է քվարն լալ, ողբալ: Ըստ կազմության բառս կրկնավոր է, պարզ արմատը՝ կող, ծագում է հնի. gal- «կռել, գռել, բղավել» արմատից, որից են նաև կիմը, galw- «կռել, կանչել», բրեան, galu «կանչ, գոչում», հին հյուսիսայինն klaka «շաղակբատել, ճովողել», հին հնդկերեն garhati «տրտնջալ, բողբոլ», garha «տրտունջ», բողբոլ», grhu «ծորպցիկան, աղերսող», ալիստերեն gəřəzaiti «տրտնջում է, ողբում է,

կոծում է», սաերեն vārzun «հառաչել, հեծել, ողբալ, վայնասուն բարձրացնել», միջին իտ. giàm «գոչում, անձք», հին բարձր գերմաներեն klingen «հնչել», ռուսերեն голос «ձայն» և այլն: Հայերեն կող- ենթադրում է արմատի gəl- ձևը:

Յերես նույն արմատից է նաև կաղկանձի բայի առաջին բազազրիչը. այս բառն Անտառյանը համարում է կրկնավոր (*կանձ-կանձ>կաղկանձ), սակայն, մեր կարծիքով, հիշատակները համարել համարաբար բառ՝ նույնիմաստ կաղ և կանձ արմատներով կազմված: Այս զեպում ունենք հնի. արմատի gəl ստորին ձայնադարձով ձևը (Պոկ., 350):

Նախկինում մենք հնդկությունական այս արմատի հետ ենք կապել Պուլքն տեղանունը, որ սակայն պետք է մերժել ինչպես իմաստային բացատրություն անհավանականության, այնպես էլ հնչյունական անհամապատասխանության պատճառով, ըստ որում հնի. g-ին համապատասխանում է նույնիմաստ կ և ու՛ զ:

58. Կ Ո Ս Տ Ղ

Այս բառը գործածվում է միայն բարբառներում և նշանակում է «նյուրջ կորելուց հետո ծառի վրա մնացած մասը, ծառի կամ տախտակի վրայի հանդույց կամ երակ, այդ հանդույցը բնիկելուց հետո մնացած ծակը» (Արմ., Գ, 1344): Հալագիտություն մեջ այն ենթադրությունն է ընդունվել, որ այս բառը ստացացել է սառ բառից՝ սկզբից կ և վերջից ղ հնչյունների հավելումով, Անշուշտ, լեզվաբանությունը հայտնի են հնչյունների զանազան հավելումներ բառերի մեջ, բայց տվյալ զեպում շարիազանց տարօրինակ է մեկ բառում երկու հնչյունների տարապայան հավելումը, որը հնչյունաբանական հաստատուն բացատրություն չունի: Եվ թեև իր ժամանակին մենք էլ ենք ընդունել այդ ենթադրություն՝ առ ի չդոչ լուսազունի, սակայն այժմ գտնում ենք, որ ոստղ և կառղ անուններն բառեր են, իրարից անկախ, բայց նույն (կամ մոտավորապես նույն) իմաստներով: Կոստղ բառը ծա-

գում է հնիս. *gues-/gyos-/gus* արմատի *guoz-do* անձն ձևից (Պոկ. 480), որ նշանակում է *սաստ, ճյուղ, շիվ, նրդազարում, սաղարթ*» (*Gezveig, Laubverk*). *ցիգակից լիզունների գոլգո-հուններ են՝ սուսկան, gjethe* «սաղարթ, նրդիկ, սաստը (Նվբ. նշանակախթամբ)»։ հին բարձր գերմ. *questa*, միջին բարձր գերմ. *queste, koste, kaste, quast* «պատկ, ալիւ, ցո-ղիչ, շրջանիչ, նրդիների փանջ՝ արջակ», նորվեգ. *յան, kuu-ás* «խորքի կրամ ճյուղ», սլոան. *ghethi* «տերև», հին շվեդ. *kvaster, kaster, zylke, quast, նորվեգ. յան, kost* «շի-վերի՝ սուտերի փանջ», հին սերբ. *gvozđ* «ամուս», նոն. *ջոշոյրյու* «ամազգափանջ, խոտալու», հին Նոգի. *guspita* «շչո-սել (ճյուղերով)», լատ. *vespites* «խիտ մաշտ», միջին նի-դերլանդերեն *quispel, quespel*, միջին գերմաներեն *quispel* «փունջ, նովար» և այլն՝ Հայերենը ծագում է *ցյոզձ-ի* Խոով անձն ձևից և օրինաչափորեն աուխ է կոսող, ինչպես որ օջձ արմատն էլ ափի է ուս (*zđ* > նոյ. սա)։

Բառի այս ստուգաբանությունը հնարավորություն է տա-լին բացատրելու նաև *ղ ընչունի* հակադրուքն որս բառի վեր-ջում։ Հայտնի է, որ իմաստով իրար հետ կապված (հումանիշ, մեթանիշ, հականիշ) կամ իրար հետ հանձնի գործածվող բառերը համարանությունը մեով էլ նմանվում են միմյանց, պահպանելով սակայն տարբերակը մեկան օրն է հասկա-նիշ, օրինակ՝ ցած բար բարձր բառի համարանությունը դար-ձել է ցածր, նախնական ծալ բար տայր-ի համարանու-թյամբ դարձել է ալլ «ամուսնու թույր», անգամ «շքավոր, սղբատ, կարոտ» բար ալլամ բառի համարանությունը դարձել է անկառ (*q* > *f*), բարբառներում եղ (նիլ) բան ըս-տացել է եղ ձևը՝ եղ-մեղ կամ եղ ու մեղ հարադրության մեջ և այլն։ նույն եղանակով էլ կոսող բառի համարանու-թյամբ ուս-ը դարձել է ոսող։

59. Կ ՈՒ Տ

է. կիցներ, որին հետևելով նաև վալդեն և Պոկոտինի, հնիս. *geu* արմատից են բխեցնում հայերեն կուռն (կռակ)։

կուր, կուռն/կուռնե, կուր «տաշտ, տաշտակ, նավակ, մա-կույն», կրայ/կրեայ/կրիա, կուրի «ակոս», կուրիզ բառերը։ Հր. Անադյանը մեթոսում է այդ բոլոր բառերի կապը միմյանց հետ և հնիս. *geu* արմատի հետ. զրա պատճառն այն է, որ այն ժամանակ, երբ նա կազմում էր իր «Արմատական բա-նարանը», հնդեվրոպական այդ արմատի ստաշին հեշյունը համարվում էր *gʷ*, իսկ զա հայերենում դառնում է ձ։ Անադ-յանն այդ արմատից բխած էր համարում միայն հայ. ծուս, բառը, որի ստուգաբանությունը սուսադրելի էր Մենենի կիցենի էլ, որ սուսադրելի էլ վերահիշյալ բառերի ստուգաբանությունը, զրանք բոլորը կապում էր ծուս բառի հետ։ Հետագայում, սա-կան, հնիս. *geu* արմատը վերածվեց երկուսի՝ *gʷers-*, որից է հայերեն ծուս և *geu*, որից Պոկոտինի բխեցնում է հիշյալ բառերը։ Այդ բառերից, սակայն, ինչպես մենք ցույց ենք տը-վել (տե՛ս ստորև, § 67), կուռն, կռակ, կուռն/կուռնկ, ինչ-պես և կուր, կիւ, կուր, ծագում են ոչ թե հնիս. *geu*, այլ *ger-* արմատից (Պոկ., 385—389)։

Այսպիսով, մտնում են կուր «տաշտ, նավակ», կրայ/կը-րեայ/կրիա, կուրի «ակոս» և կուրիզ բառերը։ Այս շարքից սուս-լին երկուսը մենք միանգամայն ընդունելի ենք համարում, ըստ որում ցեղակից լիզունների մեջ *geu* արմատից ծագած և մեր կուր «տաշտ, նավակ» բառի իմաստը հաստատող բազմաթիվ զուգահեռներ կան. արդեն վերն էլ ստացինք, որ արմատի իմաստներից մեկն է «աման, անոթ», ուստի և հարկ չենք համարում այստեղ հիշել ցեղակից լիզունների բազմաթիվ բառերը։ Կրայ/կրեայ/կրիա բառի կազմությունը հայտնի է այլ/նայ ածանց է, ուստի և արմատն է կուր. իմաս-տային տեսակետից Անադյանը ճիշտ է համարում կիցենի այն բացատրությունը, թե նախնական կուր, կիւր իմաստից է ծագում այդ կենդանու անունը. իբրև զրա սղացույց նա հի-շում է իսպաներեն ու պորտուգալ *tortuga*, ֆրանս. *tortue*, իտալ. պորտուգալ. *tartaruga* «կրիա» բառերը, որոնք ծա-գում են լատիներեն *turtus* «տուս» բառից (Արմ., Գ. 1468)։ Ընդունելով այդ բացատրությունը, կավելացնենք հետևյալը.

Մեզրու բարբառում, ինչպես և ամբողջ Մեզրու շրջանում, կրիային կոչում են աաշտակ (այժմ գործածում են կրիա բառը)¹⁵։ սա նույնպես նշանակում է, որ կրիա բառն իր իմաստով անմիջականորեն կապվում է կուր տաաշառ բառի հետ։ Ինչ վերաբերում է կորիզ և կորի բառերին, այդ հիմք չենք գտնում մերծելու լիզիների աաաշարկած և վալզիքի ու Պոկոտանու կողմից ընդունված սաաազարանուձյունը, քանի որ Աճաաշանի աաարկուձյունն ինքինի վերանուն է արմատի աաաաշին հնչյունի արդի ընթրոշումով (ջ և ոչ թե ճ)։

Մակայն, կիմ ճիշտ է, որ կուրիզ բառը ծագում է ցեւ արմատից, այդ անասարկել է դառնում նաև կուտ սեբրմ, հունդ, թռչուններին որպես կեր ծառայող հատիկն քառի ծագումը նույն արմատի ցւււ- տարբերակից։ Սիյ յաարբերակը բերվում է Պոկոտանու բառարանում (էջ 393), որի տակ, սակայն, ցնչակից լնդունների բազմաթիվ բառերի շարքում չկա հայերեն կուտ-ը, Մեր սաաազարանուձյունն այդ բազմաթիվ բառերին ազնկացնում է նաև հայերեն կուտ բառը¹⁶։ Մնում է մի կրկու խոսք սակ այդ արմատից Պոկոտանու բառարանում

բնեցվող հայերեն կուտ, կուեակ, կուակն բառերի մասին հետ. կրկու արմատների՝ ցեր և ցեւ որոնք ունեն միևնույն «նկնի, կորացնել, կամարի ձև տալ, կոր» իմաստները, բազմաթիվ աճած ձևերով ու ծանրգործներով ցեղակից լնդուներում տվել են բազմազան բառեր՝ ամենատարբեր իմաստներով, որոնք կապվում են նախնական ցեր, ծուտ, ճկկ, կուրացնել» նշանակության հետ։ Հայերենի էլ այդ կրկու արմատներից ստացել է բազմաթիվ բառեր. մեր քննությունների համաձայն, ցեր արմատից ստացվել են ցերը, կեռ» նշանակությամբ սծականներ և այդ հատկանիշի հետ կապվող մարմնի մասերի անվանումներ, իսկ ցեւ արմատից՝ կոր հատկանիշով ընթրոշվող (սուտցիկ, դոգավոր, փոս ընկած և այլն) աաարկաների անվանումներ։ Այս նկատառումներով մենք ցեւ արմատից հանում ենք կուտ/կուեակ, կուակ/կուեակ բառերը, և հատկացնում ցեր արմատին։

60. Հ Ա Կ

Այս արմատն իր նախնական իմաստով առանձին թիշ է գործածվել. Գազիթ Անհաթի մոտ հանդիպում է «հակառակ, ընդդեմ» նշանակությամբ. սակայն ճակիլ «միտել, զեպի մի կողմ թեթիլ», ճակիվալ «մի բանի միտված» (և ոչ թե միտելուն հակառակ), արմատից մի բանի, հոժար, և նման բառերը ցույց են տալիս, որ նաև «թեթիլելով զեպի մի կողմ ծուլել, զեպի մի կողմ ուղղվել» իմաստն է նախնական։ Հետագայում այս կրկու իմաստների զարգացել են զեպի ինքնուրույնություն, և այժմ ճակիլ «հակառակ, ընդդեմ» (իրեն նախածանց) և ճակիլ- (հակել, հակում) «միտել, թեթիլել» առանձին արմատներ են դարձել։ Մազում է հնի. sag- սեհ- ամատել, (հոտոտելով) հետապնդել» արմատից։

Նախալնզվիլ այս բառը համարվում է հին որսորդական բառ, որից ստացվել են «քննել, հետախուզել, գուշակել», բայց և՛ «հակառակել, կուլել» և նման իմաստներով բառեր, ինչպես՝ հուն. γένωμαι, դոր. γένωμαι, տառերից դր-

¹⁵ Հճմա. Գարեհատ՝ կուրաշտակ (Հ. Մարգարյան, Կարենների բարբառը, 218), որ մեր կարծիքով համարաթի բառ է՝ կուր+աաշտակ>կուրաշտակ>կուրաշտակ (Հճմա. Բանբառ՝ կուրիբառ, որ նույնպես համարաթի է՝ կուր և կուր բառերից), Կաաազարեթ՝ աաշտակ, կուրաշտակ, սորբրլուաաշտակ (Վ. Մարգարյան, Կաաազարեթի բարբառը, 186), Ծամախումու՝ կուտ. կուի (Ռ. Քաաազարյան, Ծամախիի բարբառը, 208), Գուգարում՝ աաշլ կուեակ (բառ Հ. Կոտանյանի բանաբար հաղորդման) և այլն։ «Մերմատակահեռ և հասարում կրեալ բառի մասին Ձր. Աճաաշանը գրում է հետևյալ բազումը. «Մազում է կուր սծականի, նազակ» (այսինքն՝ սաաշ) բառից և նշանակում է բուն աաաշտակաբառը։ միշտ նույն ձևով են կապված որս. ՀՂ նկ աաաշու. Հ. կրիա, որ և لاکوشت lakpušt սիրիա (բառացի «աաաշտակահեռ»), լա. testudo սիրիա՝ ծագած testu «սաաշուց բառից, զիև. աաաշտակահեռ, կրիանկա սիրիա» (էջ 155).

¹⁶ Գազնելով ՊԲ2-ում (1955-1972) հրապարակված բոլոր ստուգարանաձյունների ցանկը, պարզեցինք, որ մեզանից սաաշ կուտ<՝ցւււ- սուաազարանուձյունն սաաաշակել է Գ. Զուռնյանը (ՊԲ2), որն միայնակով նաև կուտ, կուե, կուեկ, կուեակ բառերը։

նալ. սասնորգիւ», լատ. sagio. - Իր սգգալ, կասնէլ, հին իւլ. saigin «մի գործի գնալ, որոնել», կիմբ. haeddu «վաստակել», հին իւլ. sar «սիրտովորանք, անպատվութիւն», անիրավութիւն», միջին կիմբ. sayrhaed, նոր կիմբ. sarhad «վիրավորանք, անպատվութիւն», գոթ. sōkjan «որոնել, քննել, վիճել», sōkns «որոնել, քննել», քննութիւն, վիճելի հարց», անգլ. sōcn «քննութիւն, հարձակում, դրոշ, արդարադատութիւն», գոթ. sakan, sok «հատուակել, կտրել», հոգ. sahha «կիւլ, վեճ, դատական գործ», հին իւլ. saka «բողոքել, մտանել», sattu «հաշտեցում», իսկթ. šak(k)-> šek(k) «գիրենալ, իմաստը, և այլն:

Հայերենն իր իմաստով ավելի մոտ է գերմանական և կելտական լեզուների բառերին, որոնց մեջ գերիշխում է սեպկատակութիւն-թշնամութիւն—վեճ-կռիվ» նշանակութիւնը: Այնուամենայնիվ, ինչպես ցույց է տալիս հսկ ամիտում, թեւովելը զեպի մի կողմ» նշանակութիւնը, հայերենի համար պետք է կանխադրել նախնական ընդհանուր «մի բանի սողոված շարժում, բնացայ, գործողութիւն» իմաստը:

61. Հ Ա Յ Ե Լ, Ե Ա Յ Ե Լ

Հայել բառի արմատն առանձին չի գործածվել, բայց պահպանված է բազմաթիվ բարդ ու ամանցավոր բառերի մեջ, ինչպես՝ հայելի, հայեացք, հայալուս «աչք», երկամականաց, զմեանայեաց, լաւանայեաց, յառաջանայեաց, ընդվայրանայեաց և այլն, որոնք բոլորն էլ գործածված են հայ հին մատենագրութեան մեջ. աշխարհաբարում՝ նորակազմ բարդութիւնների ու ամանցավոր բառերի մեջ, հանդես է գալիս հայաց, հայեց (<հայեաց) ձևերով, ինչպես՝ հայեցում, հայեցակետ, բաժնաճանաչաց, գեղամայաց և այլն: Հ. Աճառյանը հայել բառի արմատն է համարում հայ—, սակայն ավելի ճիշտ է հա—, որի վրա ավելացել է յ-ն, համաձայն այն կանոնի, ըստ որի հայերենում ա-ի և հաջորդող ձայնավորի միջև մտնում է յ: Սազում է հնգեվրոպական *pa—

նախածինք, որ ցնդակից լեզուների մեջ պահպանվել է երկու հիմնական իմաստով՝ «պահել, պահպանել» և «սակել, նայել, դիտել»: Այսպես՝ 1. լատիներեն pascō, ēre «արածնցնել», pastor «հովիվ», սանսկրիտ՝ pāti «պահել, պահպանել», paçu-pa «նախբապան» և այլն: 2. սլավ. pásty očy'ma «հաստատուն նայել, ակնակառուց լինել», ասու. onpacать, запасать և այլն: Առաջին իմաստով հայերենում ունենք for-ան «այծի, ուլի, ինչպես և՛ սլաւոն հոտ», որ ծագում է նույն արմատի *patro սանսկրիտ ձևից. նույն արմատի բարդութիւնը ունենք և հայկի<oxvi-¹pa «տշարպա՛նոց» բնիմաստով: Երկրորդ իմաստի հետ կապում է հայել բառը, որ զրաբարում նշանակում էր. «նայել, դիտել, ակնկառուց լինել, սպասել, ակնկալել», որոնք բոլորն էլ իհարկեւ, նայել հիմնական իմաստի փոխարեութիւնները կամ առումների են:

Նույն արմատից է ծագում նաև նայել բառը, որ կազմված է, ըստ այդմ, հայել բառից՝ նի- մասնիկով. նի-հայել> նհայել>նայել, և սկզբնապես նշանակել է «դեպի ցած նայել», ինչպես որ հայել նշանակել է «դեպի վեր նայել»: Հայկազեան բառարանը հայել բառի առումներից մեկն է համարում «վերակիել, ամբարձալ գալս, վեր նայել»: Հայել և նայել բառերի իմաստային այս ստորբութիւնը գիտակցել է նաև Տաթևացին, որ «Ֆիրք հարցմանց», էջ 407-ում բացատրում է՝ հայել՝ «ցածրից վեր նայել», նայել՝ «վերևից ներքև նայել»:

62. Հ Ա Բ Ե Ի Բ / Հ Ա Բ Ի Ի Բ

Հայերենի թվականների համակարգում հարեւր/հարիւր բառը յուրօրինակ բացառութիւն է ներկայացնում. այն զեպում, երբ հայերենի թվականները՝ 1-ից մինչև 10-ը և այնուհետև բոլոր տասնավորները հնդեվրոպական ծագում ունեն և ճշտորեն ներկայացնում են հեղինորպական հաշվական գրութիւնը, հարեւր բառը մինչև այժմ էլ ստուգաբանված չէ և մնում է որպես անեղծված. ավելի մեծ թվերը (հա-

զար, միլիոն, բյուր) փոխառություն են: Հայտնի է, որ հնդեվրոպական միասնության ժամանակ հնդեվրոպացիների մեծազույն թիվը հարյուրն էր՝ kṛto, որ կազմված էր dek'ṛi «սասար» բառից՝ -to մասնիկով (dkṛto > kṛto). հազարի համար թեև Բրուգմանը կանխադրում է նախալեզվական ghesio (սանս. sa hasra) և g'zhlil (լատ. mille) ձևերը, բայց այդ ենթադրությունն ընդհանուր ճանաչում չի գտել և կասկածելի է:

Մենք դռնում ենք, որ հայերենի հաբեր/հաբիւր բառը ծագել է հեթ. աբ- արմատից -uro մասնիկով՝ *areuro > հաբու/հաբիւր. նախահունչ հ-ի հավելումը սովորական հրեայի է հայերենի համար, ինչպես հեթ. od > ալ, հոտ, հեթ. omo > ալ, հավ և այլն (հնդեվրոպարաններից շատերը այդ հավելում չեն համարում, այլ «կոկորդալիների» արտացոլում): Հնդեվրոպական աբ արմատը ունի «1. միացնել, կապել, կազմել, հարմարեցնել» նշանակությունները, որից ծագել են «1. անել, կատարել, կազմել, 2. հարգարել, 3. կուս, թե, ձեռք, 4. հաշվել, համրել» ընդհանուր իմաստները: Հայերենի հաբիւր թվական կապվում է «հաշիվ, թիվ» իմաստի հետ: Հայտնի է, որ լեզուների մեջ շատ հաճախ տասնյակ-ը, հարյուր-ը և այլ թվականները կապվում են շատ. հաշիվ, կտր հաշիվ, ամբողջ թիվ» և նման բառերի հետ: Այսպես՝ սուգրոֆինիական լեզուների մեջ տասը բառը նշանակում է «թիվ» ...աֆրիկյան սեսուտ լեզվով 100-ը կոչվում է lepkoio, որ նշանակում է «խոշոր թիվ»... աֆրիկյան ոտնգա լեզվով 100 կոչվում է grama, բայց կան բարբառներ, որ ստում են kulu, որ նշանակում է «մեծ»²⁰, Հայերենում էլ, որնմե, հնդեվրոպական հարյուր նշանակող բառի կորստից հետո այդ թիվն անվանել են հաշիվ, թիվ բառով, որ ստացել է հարյուր իմաստը: Մեր բառի համար լավագույն վկայությունն է գերմանական լեզուների հաբիւր-ը.

²⁰ Հ. Ա Վ ա ո յ ա ն, Կիսկատար քերականություն հայոց լեզվի, 1933, էջ 238—239:

որ կազմված է այս նույն աբ- արմատից ստացված ԴԱԾ «հաշիվ» բառի բարդությամբ (հին հյուսիս. hund-rad, գերմ. hundert, անգլ. hundred և այլն). այս լեզուներում էլ նախապես hundred նշանակել է բառացիորեն «հարյուր հաշիվ», որ արամարանդյան կարելի է բացատրել իբր «հաշիվը հասավ հարյուրի, հարյուրը լրացավ» ձևով:

Հնտաբրքեր հարց է, թե ինչպես է եղել, որ հայերենը կորցրել է հնդեվրոպական 100 նշանակող բառը. մեր կարծիքով այդ առիթվ կարելի է սույ հետևյալ բացատրությունը. հնդեվրոպական k'ṛto բառը հայերենում պետք է տար սան (սուն), որը, սակայն, բույնն է տասնվորների սան/սուն բազադրիչի հետ և նշանակում է տասն (համա. երեսուն «երեք տասն», քառասուն «չորս տասն», ինչպես և՛ քսան և այլն). ահա այս նույնացումն է եղել պատճառը, որ այդ բառը չի պահպանվել և փոխարինվել է «թիվ, հաշիվ» նշանակող բառով:

Հնդեվրոպական աբ- արմատից են նաև հայերեն առնել (արմատը՝ աբ), աղ (զարց, հարգարել), աղաբ, յարմար բառերը:

63. ՀԱԽՏ(ՀՕՏ)/ՅԱԽՏ(ՅՕՏ), ՀԱՍ, ՀԱՍԱՆԵԼ/ՅԱՍԱՆԵԼ,
ՉԱՍ.- ԱՆԵԼ, ՀՈՒՆԻ, ՀՈՒՅ

Հատ(հոտ), յատ(յոտ), հատ-, (հատանել) արմատը հայերենի ձևական, բառակազմական, իմաստային և գործառական շատ մեծ զարգացում ստրած արմատներից է: Իբրև առանձին բառ այժմ էլ գործածվում է՝ հատ «1. կորիզ, կուս, 2. որևէ բանի (հաշվող առարկայի) մեկ միավոր, 3. հյուսվածքի՝ գործվածքի յուրաքանչյուր հանգույցը» նշանակությամբ. զրաբարձում գործածվել է «1. կտրելը, 2. կտրել, հատված, 3. սերմ, հունդ, առանձնապես ցորենի և այլ հացաբույսերի հատիկ, 4. կորիզ, կուս, 5. վերք, ծայր» նշանակություններով: Արմատական այդ ձևը երևան է դալիս հատանել սկարել, կրճատել, ճեղքել, առանձնացնել, որոշել, սահմա-

եել, մետաղ հանել, հանք փորել՝ հատել, զբամ կտրել, լույսը ցույլ և այլն՝ բայի սնց. կտր. զ զեմքում (հաս կամ եհաս), հրամ. եզակիում (հատ), ինչպես և բազմաթիվ բարդութունների և ածանցումների մեջ՝ 1. կտրող, կտրված, 2. հատիկ և այլ նշանակություններով (վիմահո հաստ, զանձահաստ, մաթահաստ, զարեհաստ, զեղահաստ և այլն)։ Անհողակալ բարդությունների մեջ կորցնելով և կոկորդայինը, վերածվել է -ստ ածանցի (հմտ. հերատ, պահնչատ... և բացատ, իրբամատ և այլն)։ Ինտանսիտի տեսանկյանց հետաքրքրական է զբարբայան հատանալ բայը, որ նշանակում է «ամառ հաստի վերածվել, փչոզվել»։ Եսիգիբներով և եսիսածանցներով ունենք զատ «ստանձին, մեկուսի, անշատված, հեռու», եհաս «պակաս, մերի», արկիստ, որ զբարբայում նշանակել է «տարբեր», իսկ այժմ՝ «բնգմիչված»։

Արմատի երկրորդ ձևն է յատ, որ բոտ իս կազմվել է յ նախորդով (ինչպես ունենք զ-ատ հ-ի անկումով, այնպես էլ՝ ի հատ > յհատ > յ-ատ), որին իբրև ապացույց կարող է ծառայել յատակ* բառը, որ ունի նաև տակ (հայց. հոլ. գատակ, նախորդիվ տրական՝ յատակ) ձևը։ Հնարավոր է բացատրել նաև հ-յ լծորդությունը, ինչպիսին ունենք, որինակ, հից և յիսուն բաներում (2 և 3 հնի. ք-ի զիմաց)։ Արմատի այս ձևից է յատակն «կտրել, ծառի և հատկապես՝ խաղողի վազի մատները էտել», յատող «էտելու զանակ»։ Արմատի այս երկու ձևերին զուգահեռ ունենք՝ հատ (հոտ) և յատ (յոտ) «խաղողի վազի կտրած ճյուղ», հատել (հոտել)/յատել (յոտել) «էտելու հողաց/յոտաց «հատող, էտելու զանակ» և այլն։ Ձևերի և իմաստների յայսպիսի բազմազանությունը (մանավանդ յատել և յատակ բաների կարծես թե իրար հետ ոչ մի կապ չունեցող իմաստները) զարմանալի չէ, որովհետև բոլորի հիմքում ընկած է նախնական «կտրել, հարվածելով կտրել, հարվածել՝ խիլի կտրելու համար» իմաստը։ Մաղում

* 2. Անտայանը հատակ բառը կապում է սով/հեռք բաների հետ՝ հանելով միևնույն արմատից։

է հնի. քու- «հարվածել, հատու կերպով հարվածել, հարվածելով կտրել» արմատի քու- ձևից՝ ներկայի ժ-ով հիմքից՝ բառ > հատ, հատ։

Յեզակից լեզուների համապատասխանություններն են. լատ. pavlo, ire «հարվածել, խփել, գոփել, սոփել», pavimento «տոփանած վետին, հատակ», pudet, ere «ամաչել» («իրև»՝ ամոթահար լինել, ամոթի խփվել), հմտ. գրաբար՝ ընդ ամօք հարկանել, զամօքի հարկանել, յամօք հարկանել), հրգ. urfur, arfürian, անգլ. a-furan «կարտակել, կտրակել», լիտվ. pjauju «կտրել, քաղել, հնձել, մորթել, բուսանել» (հմտ. հայ. խփել «հարվածել» և «պանել»), քիեկ. «սողոց», рјутис «հնձի ժամանակ, սղոստոս», լատվ. plaut «հնձել, քաղել», plava «մարդագետին», հնի պրուս. piucian «մանգաղ», հավանական է նաև հուե. πειω «խփել»։ Հայերենն իր բազմիմաստությունը ներկայացնում է զբնիք բոլոր ցեղակից լեզուներում հնի. արմատի ստացած իմաստները և զբանով իսկ հաստատում մեր ստուգաբանության իսկությունը։

Սակայն հայերենն ունի ևս երկու բառարմատ, որոնք էլ ալիլի ամբաստնում են այս ստուգաբանությունը և, մյուս կողմից, միավորում ցեղակից լեզուների երևան բերած բոլոր իմաստները. դրանք են՝ հուեղ, որ ունի նաև ուեղ (հնում ալիլի զործածական) և հուեծ (հնում՝ սոլզրաբար հուեծ՝ հոգևակիով) բաները։ Հուեղ ծագում է արմատի ստորին ձևիցարձով pu-n-ձևից—to «ծանցով (punto > հուեղ), իսկ հուեծ՝ pun-ցեծ ձևից. հուեղ և հուեծ (դ-ն) բաների միջև ունենք նաև հարաբերությունը, ինչ որ՝ իսեղ և իսեծ։ Վ. Պիզանին մեր հուեղը բառը հանում է հնի. enek՝ «հասնել» բառի նախորդյով on-k'os ձևից, որ հիշում է նաև Պոտոսին (էջ 316), ստանց իր համառոտությունը տալու (երես Պիզանիի. Armen. 5), այսուհի է և հայ. հուեծ, հնձոց (*onk'os)։ Այս ստուգաբանությունը հիշա չէ. հնի. k' հայերենում բոլոր զեպրերում տալի է ս. սվլյալ զեպրում, հնեց այդ արմատից ունենք հայերեն հաս-անել, հաս-ի (արմատի դե ձևից՝ հանս-, անգալինի

անկումով՝ հաս-անկ): ել այսպես՝ ձեկ և իմաստի ճշգրիտ համապատասխանությունը ու տարրեր կազմություններիով իրար հետ միասնորում են և հիս. pecu-, pecu-, pu- արմատի հետ կապվում հայերեն հաստ/հաս, յաս/յաս, -աս, գաս, յասուկ, հատիկ, յատակ/ասակ («համա. յաս. pavementum, տափանած զետին, հատակ»), հունը (համա. հայ. հաս-իկ), հունձ(բ) «հնձելը, հնձելու ժամանակը, աժառ, հնձած հացարկյուղ» (համա. իրվ. և յաս. բառերը), ինչպես և այժմյան գրական լեզվում գործածվող և աերժինի արժեք ստացած էտ, էտել, էտոց բառերը, որոնք յաս, յասուկ, յատոց բառերից՝ պատմական հելլենափոխություններ ձագած բարբառային տարրից՝ակներ են:

64. Հ Ե Ի Ս / Հ Ի Ի Ս

Թե՛ գրաբարում և թե՛ ժամանակակից լեզվում ու բարբառներում շատ կենսունակ բառ է, որից բաղմամբով բարդություններ ու ածանցումներ ունենք՝ իմաստային տարրեր անցումներով (համա. հյուսիս, հյուսիս) «մազերը հյուս անել, գործել, հորինել» և այլն): Սագում է հիս. *pek-՝ «բուրգը կամ մազերը քաշել՝ փետել, բուրգ, զլխի մազ» արմատից, որ տվել է բաղմամբով բառեր՝ «բուրգ, մազ, սանրել, զզել, բրբրոտ (սրանից նաև կինզանիների, ժամանակորակակս՝ ոչխարի, անվանումներ) և այլն: Մեր արմատն ունի հես- (հեսուլ, հեսուլ «հյուսակ»), հես/հիս «զլխի մազի հյուսվածք, ծամ», (հիսել, հիսուլ, հիսանել «ծամ սարքել, մազերը հյուսակ, գործել, հորինել»), *սուչ- (հուսել, հուսուլ, հուսանել նույն նշ.) յաս- <՝ յ-հաս- (յասել, յասուլ, յասուլ նույն նշ.) և վերջապես, *հես- (հիսուլ նույն նշ.): Այս նույն արմատից է նաև հնակ «1. առագաստի պարան. 2. խիիր կամ նման նյութ՝ սորբին փաթաթվելու համար», որից հնակի շտրի զանգագան, սոնապան. սրանց հետ համեմատելի է (կ' մասնիկի համար) հուսուլ «հյուսակ»: Մեր բառի զանգան իմաստները զարգացել են «մազերը սանրել, հարգարի՛լ՝ պատրաստել, հյուսք գործել, ծամ անել» նախնական իմաստից:

Այս իմաստի համար մեր բառի հետ համեմատելի են. հուն. πικος, πικος, πεκτέω «սանրել, խոզիչ», πικος «արդեզր», κτεος «սանր», յաս. pecto «սանրել», pecten «արդեզր», այլ. pill «վաշ զլխու գործիք», հին բարձր գերմ. fahs, սեզգը. feax «հեր, վարա», հին իսլ. fah «հյուս, վարա», ձիւ. բաշ, սեզգը. feht «գեզմ» և այլն, ինչպես և՛ հայերեն սար (արմատի *pok'u-ր ձեռից): Ստանալով «մազերը հյուսել, հյուս անել» (իրև. գոյ. հյուսված մազ, ծամ) իմաստը, այնուհետև ընդհանրացումով նշանակել է սոնապանակ հյուսել, իսկ իրբև գոյական՝ ընդհանրապես գործվածք, գործված բան՝ մինչև պարանը, խիիրն ու սոնապանը: Հիս. արմատն ունի ձայնգարձի բուր սատիճաններն ու բաղմամբով աժած ձեռք, սակայն հայերեն արմատը բացի ար և հես- (հեսուլ, հեսուլ, հեսկ) ձևերից, երևան է բերում ել/իլ, ոչ, այ երկբարբառները, որոնք պետք է վերագրել նախահայերենի ձայնավորական ու երկբարբառային հերթագայությունների համակարգին: Հր. Աժառյանը հիս արմատի հետ է կապում նաև հիսն, հյուսնել բառերը (համա. յաս. lexo «հյուսել-հյուսանել»), որ միանգամայն ընդունելի է:

65. ՀՐԸՐՄՈՇՏ <՝ ՀՐԱՄՈՒՇՏ «ՄՈՌԱՅՅՈՒՄ»

Տարիներ առաջ, երբ ուսումնասիրում էիր մեր հայերենի՝ Մեղրու բարբառը և այդ բանի համար առաջին հերթին հավարում էիր բարբառի բառերը, առաջին անգամը լինելով՝ լսեցիր երբևիցե բարձր խոսակցություն միջոցին: Այդ բարբառը գործածեց այն ժամանակվա ամենածեր մեղրեցիներից մեկը՝ 83-ամյա Սամսոն Գարրիկյանը (այժմ վախճանված), որ բարբառի ուսումնասիրության ժամանակ մեր ամենավաղաճից աղբյուրն էր, հետևյալ նախադասության մեջ. Հրրիզելի շահիլին հրրիջուտ բն արած մրրիկ-ցոց լուպուն «այժմյան երիտասարդները մոռացել են մեղրեցիների լեզուն»: Մենք անմիջապես դրի առանց այդ բարբառի հարցրինք նրանից զրա իմաստը. նրա ասելով նշանա-

կում էր «մոտացում, անգիտացում» և զործ էր անվում հերբմօլտ աբիլ «մոտանալ, շփտենալ» հարադրության մեջ, Հարցրինք նաև ուրիշներից, որոնք լավ գիտակ էին Մեկրու բարբառին և մշտապես խոսում էին այդ բարբառով, բայց ոչ որ շփտեր այդ բառը: 1942 թվին նրանում հանդիպելով հին մեղրեցիներից մեկին՝ տիկին Ե. Հովակիմյանին (այն ժամանակ արդեն 70 տարեկանից անց)՝ նրանից խոսակցության միջոցին լսեցինք նույն բառը, որ նա գործածեց հետևյալ նախադասության մեջ. Եկամք բլ Բեկան, Մեղ բա հերբմօլտ բլ առած սեկել ևք նրան, Մեղրին մոտացել եք»: Այլևս չկասկածելով այդ բառի գոյությանը՝ վստահորեն ան մտքրի բառարանիս մեջ այս երկու վկայություննեով, առանց այլևս մտածելու նրա ստուգաբանության մասին, մինչև որ վերջերս առիթն ինքնին ստիպեց կատարել այս վերջերս Նիգամիի «Խոսքով ու Շիրին» վեպերը կարգադրու հանդիպեցի հետևյալ նախադասության. zabān-as kard pasux-ra farāmušt «նրա լիզան մոտացավ պատասխանը»: Այնքան ակնբախ էր պարսկերեն այդ բառի և Մեկրու բարբառի հիշյալ հերբմօլտ բառի նմանությունը թե՛ և՛ ձևի և թե՛ իմաստի կողմից, մանավանդ վերք բերված նախադասությունների մեջ, որ անկարելի էր չկապել նրանք իրար հետ: Մեծում էր պարզել, թե պարսկերեն farāmuš «մոտացում» բառը Նիգամիի մոտ զործածված ձևով իրոք գոյություն ունեցել է, թե այդ ձևը (farāmušt) զրազրական սխալի արդյունք է: Գիմելով բառարաններին, գտանք, որ այդ ձևը farāmuš ձևի հետ գոյություն է անցել նաև պահլավերենում՝ այսպես՝ Nyberg, Hilfsbuch des Pehlevi; II, S. 72 framōš «մոտանալ» բալարամար հիշելով՝ ցույց է տալիս, որ բառի վերջին -moš բաղադրիչը ձայնում է *-muršta<-mušt ձևից, որ 1-ն առկա է: Նախապես և Horn, Grundriss der neupersischen Etymologie § 812 ferāmōš «մոտացալ, մոտացություն» բառի առկ հիշում է feramūš, feramūšt, պահլավերեն framōš, farmōš, framōšt ձևերը: Նշանակում է ferāmūšt, framōšt ձևերը ավանդված են հինց, և Նիգամիի զործածած ձևը որևէ կասկածի ենթակա չէ:

Եթե պարսկերենում այդ բառանքը կասկածելի չէ, ապա տարակուս չկա նաև, որ Մեկրու բարբառի հերբմօլտ բառը իրանական փոխառություն է: Իմաստի բացարձակ նույնությունը զրա առաջին ապացույցն է: Ինչ վերաբերում է հրեշյունական օրենքներին, ապա դրանք ևս անսխալ կերպով պահպանված են: Ինչպես ցույց է տրված մեր «Քննություն Մեկրու բարբառի» աշխատության մեջ (Պետ. Համալսարանի գիտ. աշխատություններ, N 19, էջ 296, § 99), շեշտյալ վանկից առաջ գտնվող ձայնավորների դիմաց Մեկրու բարբառն ունի ր. ուրեմն, եթե վերականգնելու լինենք այդ ձայնավորները, Մեկրու բարբառի հերբմօլտ բառի դիմաց կստանանք *հրամօլտ, հրամօլտ (անշուշտ և ձայնավորի փոխարեն ազատորեն կարող ենք ենթադրել նաև նայերեն մյուն ձայնավորներից չուրաքանչյուրը, բանի որ շեշտից առաջ ր ունենք բոլոր ձայնավորների դիմաց, բայց տվյալ դեպքում պարսկերեն ձևը մեզ օգնություն է դալիս՝ թելադրելով միայն ւ): Համաձայն մեր նույն աշխատության § 92 սահմանված օրենքի, Մեկրու բարբառում նախնական ու-ի դիմաց շեշտյալ վանկում ունենք օ. ինչպես՝ գլուխ<գլուխ, տուն<տուն և այլն: Նշանակում է, այդ բառի մեջ ևս օ ստացվել է ու-ից, որով և վերականգնվող նախածը կզանա *հրամօլտ կամ *հրամօլտ: Հայտնի է նաև, որ իրանական [r հնչյունախմբի դիմաց հայերենը փոխառյալ բառերում ունի հր, ինչպես՝ freštak > հրեշտակ, frahang > հրահանգ, framan > հրաման և այլն, նշանակում է, հիշյալ երկու նախածներից հիշյուն է հրամօլտ, որ լիովին համապատասխան է պարսկերենից փոխառյալ հայերեն բառերի հնչյունափոխական օրենքներին և ուղղակի հանգում է պահլավերեն framōšt ձևին: Այսպիսով՝ Մեկրու բարբառի հերբմօլտ < *հրամօլտ «մոտացում» բառը իրանյան փոխառություն է և ունի պատկանելի հնություն: Նա փոխառված է պահլավական շրջանից և ո՛ր նոր պարսկերենից, որ առաջին վանկում տվելաբեր է ն ձայնավորը (farāmūš, farāmušt):

66. Հ Ի Ա Ն Ա Լ

Արմատն է հի-, որ բացի հիանալ և գրանից կազմված բառերից (հիացում, հիացմունք և այլն), պահպանվում է նաև հիասմանչ, հիագառուր, հիագոր, հիանաչ, հիանչուար, հիաչհաղ, հիապատում, հիասրավվել և այլ բառերում. Հիանալ բառի բուն նշանակությունն է պարմունքից ազդած մնալ, արանչանալ: Արմատը, սակայն, ունի ընդհանրապես հորիկան բարձր զգացման, հուզմունքի իմաստ: Սազում է հնդեվրոպական րի- արմատից, որի զուգարանություններն են. գոթ. Inieinan «հուզվել, խղճահարկել», լատ. pius «երկուշուգած, սասվածավախ, սիրալիր՝ ծնողների, հայրենիքի, հարազատների նկատմամբ», անգլոս. foële «համա-տարիմ», միջին գերմ. vefich, veillich «ապահով, անհոգ, ուրախ»:

67. Հ Ո Ի Ս Կ

Հաճախական զործածություն ունի զրարարում, բայց առավելապես՝ հուսկ լետին, հուսկ լետոյ, հուսկ վերչին և նման կապակցությունների մեջ. նշանակում է «հետին, վերջին, ամենավերջին», որից և սապցվել է նաև «բոլորովին, ծայրագույն, ամենա-» նշանակությունը (հմմտ. հուսկ կրտսերն, հուսկ լեզր մազադաթին և այլն): Սազում է հնդ. post- արմատից՝ -wo ամանցում: Հնդեվրոպական արմատի պարզ ձևն է pos, որից՝ հին հնդկացապոլոնական po, այր. pas, հին պրակ. pasā բոլորն էլ՝ «հետո» նշանակությամբ: Տեղակից լեզուների մեջ տվին շատ առիտ է t, r. ko և այլ անալոաններով ու ամանցներով. ինչպես՝ լատ. post «հետո», հուն. դար. πωστ: «հետո», թուր. B postam «հետո», հին հնդկ. pasca «հետև, հետո», ավեստ. pašca «ապր, հետո», լիտվ. paskui «հետո», հայ. բառ (<post): Հայերեն հուսկ ստացվել է pōstwo ամանցարով ձևից, բառ որում հնդ. stw առիտ է հայերեն սկ (հմմտ. istwo) իսկ. ostwer > ոսլր):

68. Հ Ի Ի Կ Լ Ը Պ Պ Կ Ա Ն Ա Ն *Ger ԱՐԻՄԱՏԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հնդեվրոպական այս արմատը, որի նախնական իմաստն է «թարձնել, զալարել, ոլորել», բաղձազան ձևերով և իմաստի գանազան փոխանցումներով բաղձաթիվ բառեր է տվել

հնդեվրոպական լեզվաբնուստների բոլոր էությունում: Այս արմատից է հայերեն կար բար, որի ծագումը հանգամանորեն լուսաբանում ու հիմնավորում է Հր. Անտոյանը «Արմատական բառարանում» (Տ. 3-րդ, էջ 1069—1071)՝ հենվելով է. Լիդեի ստուգարանության վրա:

Մեր քննությունները, սակայն, երևան են բերում այդ արմատի ուրիշ ժառանգներ, որոնք և ցույց են տալիս, որ հայերենում էլ հնդ. *ger արմատը մի մեծ բառախումբ է տվել՝ բաղձազան իմաստային փոխանցումներով և զանազան ձևափոխություններով, ավելի ճիշտ՝ ձայնգարձի տարբեր աստիճաններով ու ամանցումներով: Մեր նոր ստուգարանությունների համաձայն հնդ. *ger արմատից են ծագել, բացի կար բառից, նաև հետևյալ հայերեն բառերը.

1. Կռուկ, կռուկ > կռուկ. — Այս բառը է. Լիդեի կապում է հնդ. ց՝ u-ru «ծուռ» բառին, որ ընդունում են նաև վարդեն և Պոկոտին, մինչդեռ Հր. Անտոյանը ճիշտ կերպով մեթոմ է, որովհետև հնդ. ց՝ հայերենում գաճում է ծ և ոչ՝ կ:

Մենք ծագած ենք համարում հնդ. *ger արմատի ը ձայնգարձից՝ *gor > հայ. կուր. որ ուկ, ուկն մասնիկի հավելումով զարձկ է՝ կուրուկ(են) > կռուկ: Հնդեվրոպական արմատի սկզբնական իմաստից ցեղակից լեզուներում զարգացել են «կորուցում, կեռ, զունդ, մազիլ, սապատ» և այլ իմաստներ: Հայերեն կռուկն բառն իր իմաստով կապվում է հին հյուսիսային kraki «խարիտի նման կեռով ձող, Stange mit Haken am Ende, Art Anker», հին բարձր գերմ. kracho (<*krēkan), kraco (<kraggan) «ծնկաձև իր», հին հյուսիս. krakr, krok «ճկվածք, կորուցում, կեռ, անկյուն» (որից փոխառված է աստ. крѣк «կեռ»), անգլ. crook «ծք-ստվյուն, կորսվյուն, նովկարն զգալազան. կեռ», նորվիգ. krykkia «անթուցույ, նենակ», krykia «կոր փայտ», kryla «կորամեջք լինել», krylt «սապատավոր մարդ», հին բարձր գերմ. kragō «կեռ», աստ. ropō «սապատ, կոզ», հին բարձր գերմ. krampe «կեռ», գերմ. krampe «ճանկ. կորկոտաց կր-

կաթ, դուսն կեռ», միջին ցածր գերմ. krappe «կեռ, մազիք», հին բարձր գերմ. kräfto «կեռ, անկո», միջին բարձր գերմ. krape «կեռ», շվեդ. krabbe «կարթ», հին իտալերեն gairr «արունքի ոսկոր» և այլն (WP, I, 593—598): Հին համար. (Ճ Ժայռաօր) նախորդին նուս նամեմատելի են հին հնդկերեն gala<°goro «կողմն. պարան», հին հրուսիս. karm<°gor-mo-s «թուամբ, պատնեշ», շվեդ. karm «կողով, քիտոյ» և այլն:

Հայերենի կր-ուկ(ն) կազմության համար համեմատելի է արմ-ուկն բառի նետ, որ ունի նույն ուկ(ն) մասնիկը: Հին հայերենում, ինչպես և բարբառներում և արդի գրականում կրունկ նշանակում էր ոչ միայն սոբի գարշապարք, այլև՝ «ծխնիի սոբ, դուսն կրունկ», որի դուզահեռները կան բերված օրինակներում:

Կեղունքի մեջ ստորակառն է ում, սոււմ, կրունկ, ումի բար իմաստների գարգացումը «կոր, ծուռ» իմաստից, ինչպես, օրինակ, լատիներեն calx «կրունկ» ծագում է հնիւ. *skel «ծանկ, անկ, ծուռ, կոր» արմատից, որից են հայերեն շեղ և խել: Այդպես է նաև հայերեն կրունկ բառը, որ ստացվել է նախնական «ծուռ» իմաստից, որի համար, սակայն, լավագույն վկայությունը աայլս է հենց հայերենը: Ասացիք, որ հնւ. նույն արմատից է ծագում նաև կարք բառը, իսկ այլ բառի գրաբարյան իմաստներն են. 1. «ճանկուտր կամ ծանկուտ գործի երկամի առ որսույտ իայժիս զվանս և որ ինչ նման է նմա», 2. «կարթնան կամ ճանկան մասն կրկանց ոտից քուչոց և այլոց կենդանաց», և ընդհանրապես կրուկն. սրբուկն, գարշապարք, շիք սոսից. ոլոգ. սոբ. յօզք» (նձԹ): Ահա «կրունկ» իմաստի համար մի քանի վկայություններ, որոնք քաղում ենք նձԹ-ից, «Կարթ և որս սին կհնայ»: «Յնէ զմիկուսն իմ գարձանաց, վարքս Նարկատիցն՝ ոչք իմք իցեն» (Սեբ. Անետարան): «Չարցուկ նստէ ի վերայ նրեքտանույն, և գատուցեալ վարքան» (Սեպ. Ա. Կորնթ.): «Նորին կարթիցն գնի արկնալ, նաև զժուկան յօշոտեալ»

(Շնորհալի): Այսպիսով, կրունկ և կարք նույնանուն են թե՛ բառ ծագման և թե՛ բառ իմաստի:

2. Կոր, կեռ, կոռ.— Այս երեք բառերը Հր. Աճառյանը միշտ կերպով միացնում է իրար և երեքի կապող օղակն է համարում կոռ: Այս բառը, որ պահված է միայն բարբառներում, կապող օղակ է նաև մեր բառերի և հնիւ. արմատի տարբեր իմաստների միջև: Այսպես՝ կոռ (Մոկք, Սարմատ, Վան) «կոր, ծայր ծածմ, կեռ, կոր գլխով», Մոկք և Վան նաև՝ «կորացրած ծայրով հովվական զավազան», Մուշ և Վան՝ «ծայրը կեռ քայլ», կոռ-մոռ գալ (Վան) «ծուռվել», կոռագլուխ (Վան) «խարդախ, խաբրեա», կոռակառչ (Վան) «ծուռ եղջյուրների», կոռացիկ (Երև.) «ծանկ», կոռնի (Մոկք, Վան) «որևէ բանի ծայրը կեն շինել», կոռվի (Վան) «ծրովի, կորանալ, կղվել», կոռարք (Վան) «որսը ցցված մեծ ծայռ», կոռկար (Ղարաբաղ) «կորարքումակ պառավ» (Արմ., Գ, 1359—1361): Այս բառի գանազան նշանակությունները միջանց են կապում մի կողմից կոռ և կեռ, մյուս կողմից՝ դրանց և կարք բառի նախնական իմաստները: Սրանից էլ արդեն հետևում է, որ կեռ, կոր և կոռ ծագում են հնիւ. *ger արմատից, որի ցնդակից ձևերից մի բանիս բերեցինք վերը՝ կրունկ բառի տակ: Կեռ և կոր բառերի ո՛ն նշյալը, կոր բառի Ի-ի գլխաց, ստացվել է հնիւ. ԻՏ կապակցությունից («Bers» կեռ, gors» կոռ, որի համար ցեղակից ձևերից կարելի է հիշել: հին բարձր գերմ. kresan (հնիւ. (*Gres ձևից) «գեռանից գուլարվելով քարչ գալ, սողալ», kresen «թխվել», միջին բարձր գերմ. krisen, kres ստողալ, քարչ գալ» և այլն (WP, I, 597; Pok., I, 358—390): Կոր, կեռ իմաստների համար նախնական պեղան է հիշել. հին հյուսիսային kringr «օտ, շրջանակ», նոր բարձր գերմ. kring, հին հյուսիսային kringla «շրջանակ, բուրդակ», միջին բարձր գերմ. kranik, -ges «շրջանակ, բուրդակ», նոր բարձր գերմ. crangel «կորություն», նույնպե՛րն kronkel «ճեղվածք, կորություն», անգլ. crook «ծուռվում, կորսվում, կեռագլուխ հովվական զավազան» (նմտ. Մուշի և Վանի՝ կոռ «ծայրը կեռ ցույց»):

նորվեգ. krykia «կոր փայտ», հունգ. krinkelen «ծնվել, կորանալ», ծովել, նոր բարձր գերմ. krauch «ճանապարհի ոլորան», հուն. κρυπία «կոր, կորաքիթ», շրջան «կորաքանձեմ եմ, կհամ եմ, ճամ եմ», անգլ. ստոր. crippan «ճկել, ծոկել, կորացնել», նորվեգ. krypa «ծոկել, կորացնել», kryla «կորածեջք լինել» և այլն:

3. Կուռն.— Այս բառը ժամանակակից հայերենում և բարբառներում ունի երազուկ «հիմնական իմաստը, բայց հնում նշանակել է «կոնակ, թիկունք, թևի և ոտի միացման տեղը»: Հնի. նույն *ger արմատն է, Իմաստի տեսակետից մեր բառի զուգահեռն են կազմում. նորվեգ. kryla «կորածեջք լինել», krük «կորածեջք, մեջքի վերին մասը, թիկունք», հին ռուս. гортъ, гърбъ «մեջք, բութ», ռուս. горб «1. սուպատ, կոպ, 2. (գլխ.) կոնակ, մեջք», հին սլավ. грѣнь «մեջք», սլավոն. грѣ, грѣав, բուլղար. грѣнь, грѣбещъ «գորբի թիկունք, աշխատանք, ճիգ, ծախս», ցրեպաստե «տառցրիկ», ցրեбина «մեջք», սերբ-խորվաթական gr'bara, gr'bina «մեջք», ցր'batise «ճկվել, կոտնալ, խոնարհվել» և այլն (WP. I, 591—596; Pokk. I, 385—390, Преображенский, I, 146): Այս բառերի և վերին բարբառային կուռ ու կուռն բառերի իմաստային կապի համար առանձնապես կարևոր է Ղարաբաղի բարբառի կապկառ բառը, որ նշանակում է «կորաբամակ պատավ» (հմմտ. նորվեգ. kryla «կորածեջք լինել», kryll «տապառավոր մարդ», krük «կորածեջք»): Բառի նշանակությունը ցույց է տալիս, որ կապկոտ պետք է համարել ոչ թե կառ «ծուռ, կոր» բառի կրկնությունը, այլ կոր և կուռ բառերից կազմված բարբառություն (= կորածեջք): Արդ նույն կապկոր բառը ցույց է տալիս, որ հայերեն կուռն բառի ուն ստացվել է ՏՏ-ից, ինչպես վերի կոր բառը. իսկ ապացուցվում է նաև կուռն բառի կուռն գրաբարյան սեռականով, որի մեջ ո հնչյունը և-ից հեռանալով՝ ր չի զատնում: Նշանակում է, այդ բառի մեջ ո վերջահանգ հնչյունը հայկական հավելում է: Սրա հետ է կապվում նաև կուռն արմատը, որ զործածվել է միայն հոգե. կարուն՝ «կոնակ,

մեջք» ձևով բայց ունենք կարճել «հենվել» բայը. ծագում է ճորթա ձևից (հմմտ. կարթթ < *gr̥btil/g̥r̥ptil):

4. Կուռ.— Այս բառը հիշում է շր. Աճառյանը «Արմատական բառարանում» (Պ, 1340) հետևյալ բացատրությամբ. «Վեդի նման մի սուկոր». ունի միայն ՀՀԲ, առանց վկայության. գտնվում է զավառականներում. ինչպես՝ Մկ, կառ, Երև, կուռն, Շիր, կուռ Եզգան, կուլի, ցուլի, արջառի և հորթի վեգա: Իմաստը և ձևը ցույց են տալիս, որ ծագում է հնիս. *ger արմատի *gors ձևից: Իմաստի համար համեմատելի են նույն արմատից ծագած՝ հայերեն կուլի, կուլին և հին իսլանդերեն gairt «արունքի սուկորը, ոլոր, վեգա: Վերջահանգ ո հնչյունը կարող է դիտվել որպես *gor-ս ածած ձևի ր > ո օրինակով փոփոխություն, բայց կարելի է նաև ենթադրել հնագույն կուռն ձևը, որ թելադրում է Երևանի կուռն բառը, և այդ զեպտում կուռնենանք ր > ո սովորական փոփոխությունը և-ից առաջ:

5. Կուռ.— Հիշում է դարձյալ շր. Աճառյանը «Արմատական բառարանում» (Տ, 3, 1340), որ մենք մեկնել ենք և ստուգարանել՝ կապելով հնիս. նույն *ger արմատի հետ²¹:

6. Կուռ, կուռեայ, կուլի.— 2. Աճառյանն այս բառերը դիտում է որպես կեռ բառի ածանցավոր ձևեր և «Արմատական բառարանում» դնում է դրա զավառական ձևերի շարքում: Մատենագրության մեջ գործածվել է 10-րդ դարից: Այժմ գործածական է բարբառների մեծագույն մասում, ժողովրդական-խոսակցական լեզվում, ինչպես և՛ գրականում: Կեռ բառի ածանցավոր ձևեր լինելու դեմ է խոսում և ձայնավորի սղումը բոլոր բարբառներում: Ղարաբաղի, Ագուլիսի, Մեղրու, Զանգեզուրի և մի քանի այլ բարբառներում դա սովորական է, բայց որում շեշտից առաջ ընկնելով՝ բոլոր ձայնավորներն էլ սղվում են կամ դառնում ր: Այդպես չէ, սակայն, Աբարառյան, Թբիլիսիի և այլ բարբառներում ո-

21 է. Բ. Ազալյան, Բառարանություն, 2002 ՊԱ հասարակական գիտությունների բանաձևերի լեզաբան, 1965, № 12 (սե'ս ստոր.՝ § 71):

րոնց մեջ ե > է ձայնավորը շեշտից առաջ էլ մնում է, ինչպես՝ մեծ — մէծանալ, մէծանալ, մէճանալ, տեղ — տէղավորել (համատ. Մեղրի՝ տըղըլուրի) և այլն: Սրանից պետք է նորակացնել, որ հայերենում ունեցել ենք կես բառի ու ձայնավորով ձևը՝ կուտ: Այս բանը հաստատվում է նաև այն բարդ բառերով, որոնք ավանդված են մատենադրության մեջ. դրանցից են՝ կառուց Վեոր ծայրով (վիպված 10-րդ դարից), կոակաոց Վեոր կուտցով (վիպված 14-րդ դարից), կաշուրքն Վեոր շրթուներով (վիպված 8-րդ դարից), կապող (կոր՝ կես նշչորներով) (վիպված 10-րդ դարից): Այս բարդությունների առաջին բաղադրիչի սղված ձայնավորը ե չի կարող լինել, ուստի պետք է կանխադրել կառ կամ կիտ. առաջինը նախընտրելի է, որովհետև հաստատվում է կուտն բառով, որ նույնպես ունի ու ձայնավորը:

Այսպիսով, հեխ. *ցեք արմատից հայերենն ունի. կարբ, կրուվ. (կրուկն > կրուկ), կոր, կեռ, կու, կուտ (կույ, կուտալ), կուտն (կոտակ). *կուտքն (կարուկ, կորեն): Այստեղ է նաև կոր «կարիճ» բառը, որ ըստ Հր. Աճառչանի նույնն է կոր «կոր» բառի հետ (Արմ., 2, 154):

69. Չ Ե Ղ Ո Ւ Ե

Այս բառը Պոկոտինի կապում է հուն. γελωτος «չրթունք, ծնոտ», հին իտլ. gielanr «ծնոտ», չվիզ. gäl, գան. gjoelle «ծնոտ, խոիկ» բառերի հետ և ծագած համարում հնիտ. gheluna «ծնոտ» բառից, ըստ որում հայերեն ձևերն բառի իմաստն էլ դնում է «քիմք»: Այս ստուգաբանությունն ընդունելի չէ իմաստային անհամապատասխանության պատճառով: Հայերեն ձևերն նշանակում է «ծածկ, առատաղ, սոխք». «քիմք» նշանակությամբ զործածվել է վերին ձևերն բերանոյ կապակցությամբ, որի մեջ նշանակում է «քերանի վերին առատաղ», այսինքն՝ քիմք. և որովհետև ամբողջ բառակապակցության մեջ միայն առաջին է այդ փոխարևրական իմաստը, հասկանալի է, որ չի կարելի վերադրել «քիմք» ուղ-

ղակի նշանակությունը: Այդ ստուգաբանությունն ընդունելի չէ նաև այն պատճառով, որ ձևերն բառի ձևերուն, ձևերունց հարվածների ծագման բացատրությունը չի տալիս:

Չեղուն բառի մասին գրել է Հր Աճառչանը²², բացատրելով բառի կազմությունը, և կապել վրաց. jeli «գերան» բառի հետ: Աճառչանը միանգամայն ճիշտ կերպով ցույց է տալիս, որ բառը կազմվել է —ուն ամանցով. նա համեմատում է անուն, սրուն և այլ բառերի հետ, որոնք նույնպես ունեն անուն, սրուն և ձուլ սեռական: Նշելով հայերեն ձևերն և վրաց. jeli բառերի կապը, Աճառչանը գտնում է, որ հարցը վճռականորեն լուծել հնարավոր չէ, ըստ որում հայերեն ձևերն բառի ձևը «արմատը գտնվում է միայն վրացերենում և չկա ցեղանից լեզուների մեջ: Լրիվ պատկեր կկազմվի կովկասյան լեզուների համեմատական քերականությունը ունենայով»²³:

Առաջին անգամ այս ձևը արմատը կապեց հայերեն նոյ բառի հետ Պ. Բեդիրյանը²⁴, որը, հիմք ընդունելով ձող բառի ստուգաբանությունը, ձևերն բառն էլ կապեց հեխ. ց՛hel արմատի հետ: Բեդիրյանի հորվածում, սակայն, եկատի շեճ անունով կովկասյան լեզուներում եղած բառերը (գոնել վրաց. jeli), ինչպես և ճիշտ չի բացատրվում բառի կազմությունը. նրա կարծիքով «ձևերն բառը ներկայացնում է ձող արմատի հոգն. ուղղական ձևը»²⁵:

Ի նպաստ բառի կազմության Հր. Աճառչանի բացատրության կարելի է հիշել, բացի վերև ասվածներից, նաև հեռուալբ. ձևերն բառի զործակալի ձևերով սովորական ձևի հետ ունենք նաև ձևովամբ ձևը Անանիա Սանահնեցու մոտ. այդ ձևը ցույց է տալիս —ուն ամանցը, ճիշտ ինչպես որ ու-

²² Հր. Աճառչան, Հայկականը, է. 2002 94, «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1950, 12, էջ 87—88:

²³ Նույն տեղում, էջ 88:

²⁴ Պ. Բեդիրյան, Հայերենի մի բառի բառերի ստուգաբանության շուրջը, 2002 94 «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1955, N 3, էջ 103:

²⁵ Պ. Բեդիրյան, նույն տեղում, էջ 103:

եննք պաշտանե՛ կազմված ուն ածանցով (պաշտանուն > պաշտանն), սեռ. պաշտաման, գործ. պաշտամամբ՝ ունն > մն ածանցով:

Ի նպաստ ձեզ- և ձող արմատների կապի, կարելի է հիշել ձողունքի սաստապաղ, կտուր՝ բարբ, որ Հր. Աճառայնը համարում է նույն ձեղուն բառը՝ բերելով նաև «վարք (վկայաբանութիւն) Ս. Գեղարայ զորավարին» գրքի ձեռագրական ձեղուն և ձողուն տարբերակները, ինչպես և՛ Ակնի բառբարի ձողունք. Տր. ցլխեմ բառերը՝ նույն նշ.:

Այսպիսով, Պ. Բեգիրյանի ստուգարանությունը հաստատվում է, և ձեղուն բառը հայերեն ձող բառի հետ կապվում է հնիս. g'hel արմատին:

Ինչ վերաբերվում է վրաց. jeli բառին, ապա դա լուրջ նորին տարածված է կովկասյան լեզուներում, և կովկասագիտները համարում են բուն կովկասյան բառ: Վ. Ի. Արսենը օտերեն ձեռքով ձեռքով ձեռքով «ձաղան» (жер.ли), գերան (брус)» մեկը. jali «ծառ», ճան. ja:jalepe, nla:njalepe նույն. նշ., չեղեն. jolim «գետինը ընկած ծառ՝ ճյուղեր՝ խոիվ (валек-ник)», բալի. Յձևա, շձևա «ծածկի գերանների վրա փափղ ճյուղեր՝ խոիվ» բառերի հետ և համարում կովկասյան փոխառություն:

Քվում է, թե հնիս. g'hel արմատի ծայրագրծի արտացոլումը ձող և ձեղ արմատների ո՛ն ձայնավորներով, ինչպես և ձեղուն բառի հայերենով միայն բացառվող հոլովումը, բավականաչափ հիմք են տալիս ձեղուն բառը բնիկ հայկական համարելու: Ինչ վերաբերում է այդ բառի և՛ հիշված կովկասյան բառերի կապին, ապա դա կամ պետք է համարել փոխառություն հայերենից, կամ էլ պետք է դիտել որպես պատահական զուգահեռություն: Անշուշտ, այդ հարցը վճռելը կովկասագիտներին է պատկանում, սակայն մեր կողմից կուպելներ հիշել հետևյալը. ինչպես հայտնի է, հնագույն շրջանում վրացերենի ձ, ծ, ց քաղաձայններին մեղրելու ենում և ձաներենում համապատասխանել են շ, ց, չ բա-

ղաձայնները. օր. վրաց. jeri ձերի «արմատ», մեկը. Ին՛ի նույն նշ., վրաց. ceri ձերի «ձան», լազ. mčali մճալի նույն նշ., վրաց. չա ցա «երկիր», լազ. չա շա նույն նշ.: եթե վրացերենում և կովկասյան լեզուներում ձեղի և համապատասխան բառերի մեջ վրաց. ձ և մյուս լեզուների ձ համապատասխանությունը որևէ այլ հնչյունաբանական բացատրություն ու հիմնավորում չունի, ապա հայերենից փոխառություն համարելը վերացնում է այդ հարցը: Այնուամենայնիվ, այս մասին մենք որոշակի չենք կարող ուրիշ տակ և խորքի լուծումը թողնում ենք կովկասագիտներին:

70. Ճ Ա Ր Տ Ա Ր

Ճարտար բառը հին հայերենի շատ զործածական բառերից է. հիմնական իմաստներն են 1. վարպետ, արվեստագետ, ճճտան, 2. բերթող, իմաստասեր, 3. լալի, ճճտորեն: Առանձնապես կենսունակ է բարդ և ածանցավոր բառեր կազմելու տեսակետից, ինչպես՝ ճարտարաբան, ճարտարասան, ճարտասան, ճարտարազոյն, ճարտարազոյն, ճարտարախոս, ճարտարպետ և այլն, և այլն: Բառի ձևը ցույց է տալիս, հատկապես իր ճարտ մասով, որ իրանական ծագում ունի. այդ են նկատի ունեցել շատ հայագետներ, որոնք փորձել են կապել իրանական այս կամ այն բառի հետ: Այսպես, օրինակ, Պոլ դը Լազարը կապում է պահլ. čarətar «քայլող, առաջ ընթացող» բառի հետ, որ Հյուսիսային մերձում է իմաստի սահմանափակությունից պատճառով: Մյուսները կապում է պահլ. čarətarā «զործունեություն» բառի հետ, որ Բարթոլոմեոս մեթոմ է, ուղղելով հիշյալ պահլաերեն բառը kartartum, և ինքը կապում է հայերեն ճարտար-ը շավանդով՝ čartara բառի հետ, որ կցում է սանսկրիտի čatura «ճարտար, ճարպիկ» բառին: Հր. Աճառայնը, թվելով այդ բառի շատ ուրիշ սահմանափակություններ էլ, Բարթոլոմեոսի ստուգարանությունը ևս մեթոմ է, հավանաբար իրանական *čartara բառի գոյությունը չընդունելով: Այս մերժված ստուգարանություն-

ների համար նշանակալից է այն, որ բոլորն էլ կապածից վեր են համարում նախաբ բառի իրանական ծագումը: Մենք նույնպես ընդունում ենք այդ, բայց որում հայերենի նաւ-ով սկսվող բոլոր ստուգաբանված բառերը իրանական փոխառություններ են (ճար, ճարակ, ճարտուկ և այլն):

Գրանից կենելով՝ մենք հայերենի նախաբ բառը կապում ենք նույն արմատի հետ, որից ծագում է նախկին-այս բառը Հ. Աճառյանի ստուգաբանում է այսպես. ծագում է պահլ. ճարթիկ ձևից, որ թևն ավանդված չէ, բայց հմտ. պրակ. ճարb-dast «աշտղակաձեռն և կրողաշարժ», ճարb-zaban «ճարտարակերու», որ և յարb «աշտղակ, ճարտար», յարb-dast «աշտղակաձեռն», յարb-zaban «ճարտասան» են (Արմ. Գ, 622): Մենք գտնում ենք, որ ճարտար բառն ստացվել է պահլ.՝ ճար արմատի* ճարp-tar ձևից, որը նույնի համեմատական աստիճանն է և պետք է նշանակեր ավելի նաշտղակ, ավելի հմուտ, որ թևն պահլավական աղբյուրներով ավանդված չէ, բայց գտնում ենք Ֆիրդոսու Շահնամում

چربتر ճարbtar ձևով: Պարսկերեն ճարb-tar ձևն օրինաչափորեն ստացվել է պահլ. ճարptar-ից, որ հայերենում պետք է տար նախաբ, ինչպես ունենք պահլ. ճարtik > ճլ. նախուկ «ճանձկեն, բժավոր սպիտակ»: Որ բաղադատական աստիճանի ձևը կարող էր անցնել հայերենին և զործածվել որպես անկախ ձև, հաստատվում է պահլ. vattar > ճայ. վատար²⁶ բառի փոխառությամբ: Այստեղ ճարptar > նախաբ ձևի մեջ կապած կարող է նարուցել պ-ի անկումը, բայց հայտնի է, որ հայերենը բաղաձայնների խնձողում չի թուլադարձում և սովորաբար կամ իրար հաջորդող բաղաձայնների մեջ ավելացնում է ը, կամ էլ նրանցից մեկը կորցնում է. նախաբ բառի հետ հատկապես համեմատելի են վարդապետ > վարդպետ > վարպետ և կրտսեր > կրտսր, որոնց մեջ ունենք միջին պայթեղականի անկում, որպ, բու կապակցությունների մեջ:

²⁶ Պահլ. vattar > ճայ. վատար բառի մեջ ունենք ր* տարեանուն-թյան հետեանքով:

71. ձիվ, ձեվ, ձիւ, ձիւղ, ձեւթ, ձուլթ, ձուր(ն)

Այս վեց բառերը կապվելով իրար հետ, Հ. Աճառյանը սուլիս է հետևյալ բացատրությունը. ճիւղ, ո ճլ. «ծառի սառ. փխր- ուրիչ բանիկի ճյուղավորված ժառք», որից կրկուց- նաճիւղ, բազմաճիւղ... երկճիւղ... Այս արմատի հետ նույնն են նեղ... որից մեղեայ «ճյուղ-ճյուղ բաժանված»... նեղան «ճիւղեր», նեղի «ճեղքել», նազարանեղ... երկնեղ... ետ- նեղ... (հմտ. Ղրբ. նեղ «պատովածք», որ տարբեր է նեղեր «ճյուղ» բառից); — ձիւղ, ո. ի. ճլ. «սառ»... որից մեղի «ժառ- սերի բաժանել»... նեղեղե՛ն «բազմաճյուղ»... ճիւղար «ճյուղ- ճյուղ»... նաղ, նեղ և նաղf...: Այս վեց ձևերը պատկանում են միևնույն արմատին, հիմնական զոգափարն է պատասելով իբրայից բաժանելը. վեց ձևերից շուրք իրար հետ ձայն- զարձ են (հմտ. լիւղ, լոլղ, լիղ), իսկ վերջին կրկուսը կազմված են — և՛ ածանցականով՝ նեղ, նաղ պարզական ար- մատներից» (Արմ., 656): Այս ձևերին պետք է ավելացնել նաև նուղ, որ լայնորեն զործածվում է բարբառներում և ժողովրդական լեզվում: Բարբառների մի մասում նուղ ձևը կա- րող էր ստացվել ճիւղ-ից, ինչպես ունենք ձուլ, առուլ, սուլ և ներք հին ձիւլ, երիւլ, սիւլ ձևերից: Բայց ունենք բար- բառներ, որոնց մեջ ու-ի դիմաց ունենք օ. ինչպես՝ Ղարբաղ նուղը (և նեղը), Գորբա նուղը, Կարձնաև նուղու՛ն և այլն: Այս բարբառների մեջ օ չէր կարող ստացվել ոչ կ-ից (ճեղ), ոչ ի-ից (ճիւղ), ոչ էլ ի-ից (ճիւղ) կամ ո-ից (ճուղ), այլ միայն ու-ից, ինչպես՝ սուր > սօր, գուլս > գուլս, իլղ > լոլղ, ֆուղ > ֆոլ և այլն: Ուշադրության արժանի է նաև վերջահանց ն հեյլուր, որ եղել է բառ երեսփիլի բոլոր բարբառներում և որը պահպանվել է ժողովրդական (որից և գրական) նեղե՛ր «ոչեղակիում, ինչպես և սեռականի ժողովրդական նղան ձե- վում»: Այսպիսով, հիշյալ վեց ձևերին զուգահեռ կարող ենք կանխադրել նաև նուղե՛ն ձևը:

Այս բառերից ոչ մեկն էլ ստուգաբանված չէ, բայց որում մեկի ստուգաբանությունն արգելն բավական կլինե՛ր բոլորի համար: Ստուգաբանական հարցը փորձ պետք է համարել

միայն Պեղերարները, որից վերջում են նաև Վարդն և Պոկոսին, բայց այդ փորձն էլ մերժվել է Նեոսելյու պատճառով: Պեղերարնր ասանձին բառեր է համարում երկ և երկ. գրանցից ասաշինը դիտում է իբրև հնդկերուական բառ և կապում է հուն *ἄνω, βίον* «ալբ», լիպվաներեն *gelōnis* «խալից» բառերին: Մենն այց չի ընդունում իմաստների անհամապատասխանության պատճառով (Արմ., գ, 657): Երկրորդը՝ երկ, իրենցում է հնթ. *sqel* արմատից համեմատելով հին սրավոն, *skolika*, *լատ.* *siliva* «կնդն», պատյան», *սիլեք* «կայծրաց», հուն. *σίλιον* «փորել» ևն բառերի հետ, որ ընդունում են Վարդն, Բուսասիք և Պոկոսին, բայց մերժում է Աճառյանը՝ առանց բացատրելու, թե ինչու, թեև կարելի է կարել, որ մի կողմից նկատի ունի համեմատվող բառերի իմաստների տարբերությունը, մյուս կողմից՝ երկ և ելույ բառերի տարբեր ստուգաբանությունները, երրորդ կողմից՝ հնչյունական համապատասխանության զրգվարությունը:

Չիշյույ վից ձևերի միասնությունն այնքան լավ է հիմնավորում է. Աճառյանը, որ ամեն կասկած վերանում է: Դրան ավելացնելով նաև նույն ձևը՝ ունենում ենք յոթ ձև, որոնցից կարևոր են հինգը՝ երկ, երկ, երկ, երկ, երկ, բայց որում ենք և երկ երբ ձևեր չեն, այլ միայն ամանցավոր կազմություններ, Արզ ձայնավորների այդ տարբերությունները կարող են բացատրվել միայն հնդկերուական ձայնաբանով, որը կտար *ḥ-ḍ*, իսկ սրանցից է՝ *e>h*, *ē>h*, *o>w*, *ō>w*: Զայնդարձի գոյությունն արդեն բավական է ընդունելու համար, որ գրանք հնդկերուական ձայնում ունեն: Մեր կարծիքով չիշու է Պեղերարների երկրորդ ստուգաբանությունը, բայց համար չեն համեմատության առված ցեղակից ձևերը: Հնթ. *sqel* «հնդրել, պատռել, կտրել» արմատը բազմաթիվ բառեր է ափել ցեղակից լեզուների մեջ, որոնցից մեր երկ (երկ), երկ և երկ, երկ, երկ, երկ բառերի համար պետք է համեմատել հին իսրանդ. *slitan* «պատռել, հնդրել», *անգլ.* *sarpe*. *slitan* «պատռել», հին սարսոն. *slitan* «հնդրել, պատռել», հին

բարձր դերմ. *slitan* «հնդրել», հին իսրանդ. *slit* «բաժանում, հնդրում», միջին իսրանդ. *scalp* «հնդրվածք, հնդր, խոտը», *սուս.* *מעלב* «հնդր», *պրուս.* *schalm* «անտառամիջի ուղի՝ անցում» և այլն (Քոկ., I, 923—927): Բուրյի ընդհանուր իմաստն է «հնդրել, հնդրելով բաժանել, մասերի բաժանել», որի լավագույն օրինակներն են հին հնդկերեն *kalpāyati* «բաժանել, մաս մաս անել», բայց նաև՝ մազերը հարգարել (հյուսիսի բաժանելով) և հայերեն *խեղելի* «մի ամբողջի կեսը» և «մազերի երկուսի բաժանված հյուսիսից ամեն մեկը»: Հայերեն երկ, երկ(ը), երկ, երկ, երկ բառերն էլ, ինչպես չիշու կերպով բացատրում է է. Աճառյանը, ունեն մի հիմնական գաղափար՝ պատռելով իրարից բաժանել:

Այսպիսով, իմաստի կողմից ոչ մի կասկածի տեղ չի մնում: Կասկած չեն հարուցում նաև ձայնավորները, բայց որում հնթ. արմատն ունի ձայնարձի բոլոր աստիճանները՝ երկար և կարճ ձևերով: Անբացատրելի է մնում, սակայն բառակազմի բացառությունը. հնթ. *sq* սովորաբար ապրի է սխ, կամ, *sk* գոտնալով՝ *g*, *s*-ի կորուստով՝ *f*, մի բանի բառերում՝ չ կամ *kh>f*: Առհասարակ հայերեն *ե-ի* ծագումը հայտնի չէ. ինչի բառերի մեջ հանդիպում է շատ սակավ զեպերում, այն էլ կապված հասուի պայմանների հետ: Արդյոք այստեղ էլ ունեն ինչ-որ առանձին հանգամանք, թե ոչ, զժվար է ասել, եմ, սակայն, համապատասխանությունն այնքան անբարխ է, որ պետք է ընդունել:

72. ՄԱՏՐԵԼ ԿԵՐՄԱՆՈՒԿ ԿՈՒՐ ԲԱՌԸ

Բերելով այս բառը «Բրմատական բառարանում», է. Աճառյանը գրում է «Անստույգ բառ, որ մեկ անգամ գտնում եմ գործածված Մամր. ք տու., էջ 31. «Շրեշտակն գեմբալում մարզարժ Նացիդն եփելովք և թանիրն հասելովք գրույր կերակուրն սարա հուսոյց կոտին լեղիկին Բարբելացոցն: Ակնարկում է Գան. ժղ, 32—37. հրատարակիլը համարում է «նշանակիլ գրոյն» և դնում է զիսատառ. մյուս խմբադրու-

Յլան մեջ, էջ 56, խնդրական բարդ պահանսում է և ասվում է պարզապես ասարավ ի Բաբելոն» (Արմ. բառ., Գ, 1340)։ Գանիելի մարգարեության համապատասխան հաստատված հետևյալն է. «Եւ իբրև հոտս թագաւորն՝ եթէ կարի տաքանապեն զնա, հարկաւ ի ձեռս նա նոցա զԳանիելն եւ զարհիս զնա ի Գուբն առիւծոց, և անդ էր զվեց օր։ Եւ էին ի գրին եթն առնօք. և տալին նոցա հանապաղ երկուս մարդս և երկուս պատուհանկս. բայց յայնմամ ոչ ինչ արկին նոցա, զի վաղձազայի կերցցեն զԳանիելն։ Եւ էր Ամբաստան մարգարէ ի Հրէաստանն, և եփնաց թան, և բրգիւցոց հաց ի կուր, և երթայր յանդ՝ տանել մշակաց իրաց։ Եւ ասէ հրեշտակ տնտես ցԱմբասկում. տար զմաշղ զոր ունիս՝ ի Բաբելոն Գանիելի՝ ի գուրն առիւծոց։ Եւ ասէ Ամբաստան. Տէ՛ր, զԲարելոն՝ իմ չիր տեսնաւ, և զգուրն ոչ զիտեմ ուր իցէ։ Եւ բուռն եհար հրեշտակն զգազաթանէ նորա, և կալաւ զվարսից զլիտոյ նորա, և եզ զնա ի Բաբելոն ի վերայ գրոյն սաստիութեամբ հօղոյ իբրոյ։ Եւ աղագակեաց Ամբասկում և ասէ. Գանիել, Գանիել՝ արի՛, ա՛ռ զմաշղ զոր առաքեաց քեզ Աստուած։ Եւ ասէ Գանիել. յիշեցիք զիս Աստուած և ոչ ընդ վայր հարցի գտիրելիս քո։ Եւ յարեալ Գանիել և եկիւր։ Աչտպես, որեմն, վեց օր Գանիելն ընկած էր Գրի մեջ. յիշե՛ չէր կերել և ոչինչ չէր խմել։ Բնականաբար նա բաղցից թուլացել, տկարացել, ուժիք ընկել էր։

Հետևաբար Մամբրեի «հասոյց կոտին յերկիրն Բաբելոնացոց» պետք է հասկանալ՝ «հացոցնց տկարին (թուլլին, ուժից ընկածին)՝ բարեկամքների երկիրը»։ Որեմն կրտ նշանակում է «թուլ, տկար, ուժից ընկած»։ Այս իմաստով նա կապվում է հնիս «ջըբ- սրմտաի հետ, որ նշանակում է «ծոնել, գալարել, ոլորել» և որ ցեղակից լեզուներում ստացել է, այլ իմաստների հետ, նաև «թուլ, տկար, թմբած, անզգաց» նշանակությունը, ինչպես՝ հին իուպոնդերեն gerbach «խորշումած, թոտամած», հին սլավոներեն гѣбѣн «մեքք, կանակ. շղաձգություն», гѣбѣн «սպուշ, զանհիկ, անկիրթ», նոր բարձր գերմ. (բավարական) krank «անեղան, աննկատելի», նորվեգերեն «թուլ՝ խեղճ մարդ», krasen «թուլ,

տկար, նկուն», հին բարձր գերմ. krankoith «թուլանալ- սայթաքել», գերմ. krank «հիվանդ, տկար» և այլն (Walde—Pokorny, 1, էջ 593—598)։ Այս մեկնության իբրև ապացույց ունենք հնիս. նույն արմատից ծագած զավառական կրտ «կոր, ծուռ» և կոտեալ (արմատը՝ կուտ) բառերը, որոնց մասին տ՛ս Վերթ § 67։

73. ԿՐԱՆ/ԿՐԼԻ, ԿՐԱՅԲ/ԿՐԱԲ, ԿՐԱԿԵ, ԿՐԱՅԷ

Այս բառերից առաջին երկուսը հին մատենագրության մեջ գործածվել են սովորաբար կաշուն բառակապակցությունների կամ բաղադրյալ բառերի մեջ, ինչպես ի մասն մտանել, ի մասն զանեալ «մայր մտնել (արևի)», մտնանալ «մատախուղով պատված, մատախուղի մեջ մասած»։ Առանձին կա գործածված մտնել, մա. լեհացու բառարանում (բառ նՆԲ). «ծածկեցաւ մառամբ Բաղաբն ամենայն»։ Թն՝ նՇԲ և թե՛ Անտալանի «Արմատականում» բառս բացատրված է «մեզ, մշուշ» իմաստներով, բառ որում երկուսի համար էլ որպէս կշակետ են ծառայում մառխուղ/մառախուղ, մառախուղապա և նման բառերը։ Բերված կապակցությունները, ինչպես և լեհացու վկայությունը, ցույց են տալիս, որ բառի իմաստն է «մոլթ, մթություն»։ Միայն այդ իմաստի վրա կարող էին առաջանալ ի մասն զանեալ՝ մտանել կապակցությունները, որոնք, բնականաբար, չեն նշանակում «մեզի՛ մշուշի մեջ մտնել», այլ «մայր մտնել»։

Ժամանակակից հայերենում էլ մոտ բարդ գործածվում է «մոլթ, մթություն, մթմած» և փոխաբերաբար՝ «մառախ, խոտոտ» նշանակություններով։ Այդ «մոլթ, մթություն» իմաստը հաստատվում է նաև մայր նույնանիշ և նույնարմատ թառով, որով ունենք նույնիմաստ կապակցություններ ի մայր մտանել, ի մայր զանեալ «արևի մայր մտնել», ի մայր զարժուցանել «հանգցնել, մորել», այլև բաղադրյալ բառեր, ինչպես՝ մայր աբուտ, աբեամայր և աբեամաբ «արևի մայր մտնելը, մայրամուտ, արեամուտ», մարիլ «(սասողի) մայր մտնել» և մարել «հանգցնել, հանգնել», անմար «անշեշ»,

Հատկապես՝ մայրամած «մթամած, խաւարածած» և այլն և այլն: Այս երկրորդ շարքի բառերի մեջ հանդես են գալիս արմատի երկու տարբերակները՝ մայր և մար, որոնց նույնութունը կաակածի տեղիք չի տալիս (հմմտ. այլ/աղ-աւ-աղ, նշոյլ/նշող, թոյլ/թող, այր/ար և այլն): Այս բառերի հետ է նույնանում նաև մաայլ բառի արմատը, որ է մուռ կամ միռ, իսկ -այլ-ը ածանց է:

Այսպիսով, մառն/մառ, մայր/մար և մուռ կամ միռ (մաայլ) արմատները միանում են իրար թե՛ ձևով և թե՛ «մթություն, մթամած, մթագույն» բնօճանուր իմաստով: Այս բառերի կապը նշել է դեռևս Ս. Տերվիշյանը, զրանց միացնելով նաև մար, մուռ բառերը, բխեցնելով զրանք հնխ. mar «մարել, սևանալ» արմատից և համեմատելով ասուս. mal-ina «մուսթ», հուն. μέλας «սև» բառերի հետ: Հր. Աճառյանը բացատում է վերջին երկուսը (մուր, մուրք) և իրար հետ կապում միայն առաջինները, բայց մերժելով ինչպես Տերվիշյանի, այնպես էլ մտնն և մաայլ բառերի այն ստուգաբանությունը, որ առաջարկում է Պետրոսյանը, և ընդունում են Վալդեն և Պոկոսնին: Այս բառերին անզրադառնում է Պոկոսնին իր նոր բառարանում, որ նախկինում ընդունված հնխ. մեկ (mer-), mor- արմատ տարբերակելով վերածում է երեքի և երրորդ՝ (mer), mor-(u) արմատից բխեցնում հայերեն մառ (մառախուղ) և մաայլ բառերը:

Փնտրության անելով այս բառերը (ՊՀԲ, 1965, 1, էջ 258—259) և միավորելով զրանք իրար հետ, Գ. Զատուկյանը հանգում է հետևյալ եզրակացության. «Եթե հայերեն այս բոլոր արմատներն ու բառերն իրոք կապված են, ապա կարելի է երկու ենթադրություն անել: 1) Հնարավոր է, որ արդի մարել, մարմել բայերը պահպանում են հնագույն սաակայծեղով հանգչել» իմաստը, և բոլոր անցած ձևերն ու իմաստներն անսեպական են. այդ զեպում կարելի է որպես աղբյուր նշել «mer «սաակայծել» արմատը, որտեղից հուն. μερμερῶ, μερμερῖω «սփայլել», μερμερῶω, μερμερῖωω «սփայլել, առկայծել», μερμερῖ «մթին, մթագույն», աուս. բրբա. мар

«պատրանք, մեզ, մառախուղ, մշուշ», марево «միրամ, պատրանք, մեզ, մառախուղ», меркнутъ «աղոտանալ, մարել», мерцать «սաակայծել» և այլն: 2) Հնարավոր է, սակայն, որ մենք զորք ունենք երկու հնդեվրոպական արմատների խառնվելու (կոնտամինացիայի) հետ, եթե միայն այդ հնդեվրոպական արմատները միևնույնը չեն և միշտ են առանձնացված: Կարծում ենք, որ մեր այդ բառերը, որոնց կապը կաակածի տեղիք չի թողնում, չեն կապվում «սաակայծել» բառի հետ, Մարմել թեև նշանակում է «սաակայծելով հանգչել», բայց դա չի ենթադրում մարել «հանգչել, հանգչել» բառի «սաակայծել, սաակայծելով հանգչել» նախնական իմաստը, այլ բխում է կրկնություն տրամաբանական իմաստից. մարմել-ը կրկնավորն է մարել-ի և պետք է նշանակեր «ուսականորեն կամ պարբերաբար մտաբշտ, որ է սաակայծելու» արան իրեն ապացույց կարելի էր հիշել բարբառային հանգերեզվ, հնգրեզվ (հանգչել-ի կրկնավորը), որ նշանակում է «սաակայծել, վտաճի ու հանգչել»:

Մեր կարծիքով բոլոր այդ արմատները ծագում են միևնույն (mer-), mor-ու սեռացնել, սե՛ մուսթ գույն, կեղտի բիծ» արմատից: Գրանից են ծագում հուն. μερμερῖω «սփայլել, սեփափանց», μερμερῖωω «սփայլալուստ Ժխալալուստ սեպցած» լիտվ. merai «փառ, բարբառ», աուս. маратъ «կեղտոտել», марашка «մարբիծ, կեղտի բիծ», չեխ. maraty «սեպցած, սեպցած», հուն. μερμερῶ «կեղտազույն», μερμερῶ «սև», և այլն: Իրար հետ կապելով հիշյալ հայերեն արմատները հնարավոր է դասանում հաստատել Պետրոսնի և Պոկոսնա ստուգաբանությունը, բառ որում մառ/մառն ծագում է արմատի merso ձևից, մար-ը՝ mр-о ձևից, մայր-ը՝ meiro անձամ ձևից և մուռ կամ միռ-ը (մաայլ)՝ merso կամ merso ձևից:

74. ՄԵՑ (ՄԷՑ), ՄԱՅՆԸ

Բոլորն էլ ավանդված են դասական շրջանից. մեց (զբված նաև մկց) նշանակում է «փտություն, ցեց, ապականություն», որից՝ մեցոսիլ «ցեցցոտվել, փտել, ապականվել», մեցամեց

75. Մ Է 8. Մ Ե 8

Մկա-ը կշեռքի լծակի միջին կետն է. ապա՝ «կշեռքի նծար՝ թախթ», որից ծագել են միակ ճեռակել, թեթել, ծակել», միակի ճեռակել, թեթվել, նավանոթյան գառ, միտում ճեռակում, ձգում, դեռում, դեռադորոթյունն է այլն: Մագում է նեխ, մեծ- ճշտվել, կշեռլ» արմատից. զեղակից ձևերն են. հին ճեղ- masti վշեռելը, շափելը, նախ, բննառ: Երեսուցորոթյունն ենել, մատծել, ձգտել, բննառ: Ետերուն նյութերի շափ միտվոր», բառ. meditor «մտածել», modus շափ, ձև, կերպ, եղանակ, գոթ. mitan, անգլոբ. metan, հին բարձր, գերմ. mezzan ճշտվել, կշեռլ», հին իսլ. meta «գնահատել», met վշեռ, ծանրութուն, անգլոբ. ge-met ճշտվել, կըշեռլը», հին բարձր գերմ. mer շափ, գաղթ, անոթ», անգլոբ. mitta ճեղանատակի շափ» է այլն: Այս նույն արմատից է ծագում նալ. միտ «մեղք» բառը, ինչպես և՛ մետ «մեղքեղը», մետակոն «միջին, միջանկ (գործածվել է բայի մասին՝ «մետարակ բայ» նշանակությամբ): Հայերենի միտ ծագում է արմատի med ձևից, մկա-ը med-ից, իսկ մկա-ը կնխադրում է meid- կրկնաբարումով ձև:

76. Մ Ո Ւ Վ, Մ Վ Ե Լ

Առանձին գործածված մուլ արմատ ունի «վարժ, գործի մեջ մտած, շամացող» (կենդանիների մասին), ինչպես և բարդությունների կրկնորդ կերպում՝ աբմուլ «անվարժ», քաշամուլ «վարժ», բայն ունի «Լ. հրել, վարել, բշել, 2. վարժեցնել, գործի սովորեցնել (կենդանուն), 3. պատերազմ վարել, կռվել» իմաստները: Մաղում է հնիս. mo- ճշանել, շանք՝ ճիգ թափել» արմատի -lo անանցում անձամ molo

²⁷ Преображенский. Этимологический словарь русского языка. М., 1914, стр. 572.

«ցեղակեր», մեղամեծ նույն նշ. (Արմ., Դ, 998—999): Ածանցավոր և կրկնավոր ձևերը ցույց են տալիս, որ սկզբնապես նշանակել է «ցեց», ապա՝ «ցեցի կերած, որդնակեր», և հետո՝ «փռած»: Մագում է հնիս. *mu-, *mus- «սծծող, ճանճ» արմատից (Pok., I, 752), որի ցեղակիցներն են նաև. բաշ, բառ. muska, լիտվաներեն mušc, բարիչերեն muša, müscha, հին պրուս. muso, հին սլավ. muscha=muša, муха, բարդար. муха «ճանճ», սուս. мушца, мошка «ճանճիկ, սժողակ, մանչ», լեհ. mszyca «ծառի ոչիլ», հին սլավ. mušica «սծծակ», հին իսլ. mý, անգլ. ապա. muceg, հին սարբ. muggia, անգլ. midge, հին բարձր գերմ. mucca «ճանճիկ», գերմ. Mücke, նույն, mug, շվեդ. mygg, mygga, սլոբան. mize «սծծակ»: Հնիս. *mu-, *mus- արմատը բնածանր է նամարիում. ցեղակից լեզուներում մեծ մասամբ կազմվել են անանցավոր ձևեր. հայերենի մեց բառը ծագում է mes-ko անանցավոր ձևից, որի գրգռնուն են ներկայացնում բառ. musca «ճանճ», լեհ. mszyca «ծառի ոչիլ», գերմ. Mücke «սծծակ», սուս. мушка «սծծակ», և այլն: Հայերենի նամար դժվարություն է նարցում հնիս. արմատի u անանցավոր, որ և կամ է չի գրանցում: Մակայն ցեղակից լեզուներում առկա է այլաներեն mize, որի մեջ ի ձայնավորը կարող է ստացված լինել հնիս. i, ī, e ձայնավորներից կամ «l կրկնաբարից, բայց ոչ՝ u-ից կամ o-ից: Արդարև, նամարիոր է գանձում կանխադրել հնիս. արմատի *mes, ինչպես և *mos (սուս. мушка) ձևերը. նամարիոր է, որ արմատն անհամ լինի նաև *meis ձևը, որի հետ կիսավոր նայերեն մեց-ը, եթե սխալ գրություն չէ:

Նույն արմատի -no անանցավոր *mus-no ձևից է ծագել հայերեն մուց (Արմ., Դ, 1158—1159):

Վերջապես նույն արմատից է ծագել նաև մացել, որ նշանակում է «վանել, հասցանել, մի սովորությունից նրաժարեցնել». իմաստի նամար կարելի է նամեմատել սերբուկան-խորվաթական мухати се, мухатсе «վանել, քր-

Անից համտ հուն. *μολος*: *αζάνης*, *δής*, *αζήλασταν*, *հոզ*, *լարում*, *հոզնություն*, լատ. *moles* *ερεθ*, *զանգված*, *կույտ*, *molestus* *ερεθվարին*, *աճան*, *ձանձարային*, *զոթ*. *af-maulis* *εσφης* *εσφης*, *հրգ*, *muoan*, *միջին դիբ*. *māen*, *māejen* *εσφης* *հոզնային*, *գծվարություն* *պատճառել*, *նիզու* - *moeijen* *ερεθնել*, *ձանրարենել*, *անճանգունային*, *հրգ*. *muodi*, *հին սաբ*. *modi* *εσφյան*, *լիտ*. *pri-si-muolet* *εզանայ*, *աշխատել*, *շանր թափել*, *ուս*. *МАЯТЬ* *εσφյան* *անել*, *շարշարել* և *ալն*: *Есть* *այս*, *հայերեն մուլ արմատի նախնական իմաստն է եղել* *εջանացող*, *շարշարող*, որից և *գար-դացել* են *մյուս նշանակություններ*:

77. ՅՈՐՈՇՏՈՒԿ (?)

Այսպիսի մի բառ գտնում ենք Անեհիա Շիրակացու «Յաղագս ամպոց և նշանաց» գործում, հետևյալ նախադասության մեջ. «Յորժամ պապիր ի ծով էլանեն բազում զմիմամբ» հոգմ նշանակ է նման է որպես որ յարշառեղ (?) ելան է²⁶ Հրատարակիչը, ճիշտ կերպով կասկածելով բառի իսկությունը, հարցական է դրել: Կասկած չկա, որ գրչադրական սխալով առաջացած Ան է, որ մենք բացատրում ենք հետևյալ կերպ. բնորոշակվող նախնական օրինակում կամ բուն բնագրում եղել է

ՆՄԱՆԷՆՈՒՊԷՍՈՐԻՈՐՇՏՈՒԿԱԿԱԿԱՆԷՆ.

Ընդօրինակողները կարդացել են և բառերն անջատել՝ նման է որպես որ. այս որ-ը առանձնացնելով իբրև հարսբնական, այնուհետև հաջորդող ի-ն հատկացրել են հաջորդ բառին և ստացվել է ՈՐՇՏՈՒԿԱԿ, բայց որովհետև ի-ն էլ ձայնավորից առաջ գտնուում է Յ, ուստի և գրել են ՅՈՐՇՏՈՒԿԱԿ. այնուհետև այս ստացվածն էլ աղավաղվելով դարձել է

²⁶ Ա. Արամյան, Անեհիա Շիրակացու մատենագրությունը, 1944, էջ 308.

ՅՈՐՇՏՈՒԿՈՒԿ բոլորովին աղճատված գրությունը: Բառերի անջատման մեր նշած սխալի համար պետք է նկատի ունենալ, որ գրաբարում, ներառյալ և 7-րդ դարի գրաբարը, որ հարաբերականից սորժածությունը վերջ բերված ձևով (նման է որպես որ), անսովոր է: Ամբողջ հատվածը պետք է սրբագրել հետևյալ կերպով. «Յորժամ պապիր ի ծով էլանեն բազում զմիմամբ» հոգմ նշանակ է. նման է որպես որի որոշուակ էլան է, այլ կերպ սասծ, մենք ՆՄԱՆԷՆՈՐՇՏՈՒԿԱԿԱԿԱԿԱՆԷՆԷՆ, այլ կերպ սասծ, մենք ՆՄԱՆԷՆՈՐՇՏՈՒԿԱԿԱԿԱՆԷՆԷՆԷՆ, ի-ն (ի-իսխարեն) և այն հատկացնելով ՈՐ-ին, որով ստացվում է ՈՐԻ (Յուշանուն): Նախադասության միտքը այն է, թե նոր շատ ՊԱՊԻՐԻ (?)-ներ ծովից բարձրանում են իրար հետ, հոգմի նշան է. նման է (այն բանին), նոր որին առանձնացած (մենակ) է ելնում: Որոշակի բառը հայտնի է բոլորին, ուստի և ոչինչ չի մնում սակու: Նույն հատվածը պապիր՝ բառը նույնպես կասկածելի է. Հր. Աճառյանը «Արմատական բառարանում» բերում է այդ բառը հենց միայն այս հատվածը նկատի ունենալով՝ իբր նորագույն բառ և բացատրում է. «մի տեսակ ձուկ ծովից իջնում»: Հարմար էլ մեկնանուն համարել (ձկնեք ինչ՞ պետք է ծովից իջնեն): անշուշտ ծովային թռչունի անվանում է, որ Գ. Աբգարյանը կապում է հուն. *πύραυλος* բառի հետ:

78. Ն Կ ՈՒ Ղ

Նկուղ բառը, որ ավանդված է հին մատենագրությամբ՝ միտքային շրջանից, նշանակել է խորք, գետնափոր վայր, այլև՝ «բարավանի իջան»։ Նապոլյն գործածությունն ունենք Աստվածաշնչում, հետևյալ նախադասության մեջ. «Եղից զինում յապականութիւն, ոգնիք ի յարկս բնակեացն. և գազանք գուխցն ի նկուղ նորա» (Մտին., Բ., 14): Նոր Հայկոլյան բառարանը, նրան հետևելով նաև Հ. Աճառյանը («Արմատական բառարան», հ. Ե, էջ 139) տա-

իբս են «վաճառանոց, մթերանոց, դանձատուն» իմաստը ևս, որ քաղում են «Հիս բուսորանից», բայց որի համար մասնակարգությունից վկայություն չեն բերում: Փամանակակից լեզվում նշանակում է «գետնափոր տուն, տան գեանահարկ»:

Հիս իմաստով հոմանիշ է գրաբարյան կաղաղ բառին, որ նշանակում է «որջ, թարստոց, գազանների գազարի վայր, ծակ, բուն»։ Երկու բառերի իմաստային տարբերությունն այն է, որ մինչդեռ երկրորդը չի նշում որի կամ դա-րարման վայրի ցածր լինելը, առաջինն ուղղակի ցույց է առնում ցածր տեղ, գեանափոր տեղ, Կաղաղ բառը կրկնավոր է և ծագում է հիս. *gol «կացարան, որջ, բուն» բառի ստորին ձայնդարձով ձևից, այն է՝ *g: Կիող բառը ներկայացնում է պարզական արմատը՝ նի- նախանկանիկով, որ նշանակում է «ցած, ներքև» (հմտ. եզով, նայլի > «նիսայլի և այլն): Հե-տևաբար՝ նախնական կող արմատը, որ առանձին չի պահպանվել, ծագում է հիս. *gol արմատից, օրինական հնչյունա-կան փոփոխություններով: Ցեղակից լեզուներում ավանդված ձևերից կարելի է համեմատել լիտվաներեն guolis «մարդ-կանց և գազանների կացարան, գազարի վայր, որջ», լեթթե-րեն guōl'a «կացարան, բուն», լիտվաներեն guliu, gulti «պտուկել», լեթթերեն gult «պտուկի բնիլու», gul'a «քծա-րան, կացարան» և այլն: Հայերեն երկու բառերը՝ նկուս և կաղաղ ժամանակի ընթացքում, բացի նի- մասնիկով ստեղծ-ված տարբերությունից, ստացել են նաև իմաստի այլ տար-բերակում. նկուղ նշանակել է ընդհանրապես «ցածր գտնվող վայր, գետնափոր տեղ» թե՛ մարդկանց և թե՛ կենդանիների համար, իսկ երկրորդը՝ «տեղ, որջ» կենդանիների, այն էլ մեծ մասամբ սողունների համար: Այդ տարբերակումով է, որ նկուղ վերջապես ստացել է այժմյան իմաստը, որ արտա-հայտում է անդի ցածր, գետնափոր լինելը և վերարձարում է մարդկանց կացարաններին, բայց մյուս կողմից էլ՝ հենց «գետնահարկ» իմաստի զարգացմամբ ստացել է նաև «մա-ռան, մթերանոց» իմաստը:

Կործանված է մեքսոլյան շրջանի գրաբարում (Ս. զերբ-Քուլանդ ևն) «արհամարհել, անարգել, մերժել, ուղտամ-բել» իմաստով: Ա. Մեյլեն բառս համարում էր (REA², 2, 234) իրանյան և կասյում niš/kaf- ձևի հետ (արմատը՝ kaf-): Հ. Վ. Բեյլին (REA, NS, X 2, 2) գտնում է, որ նշվածն է (ի-նքը գրում է՝ նիշկանեմ) ազգակից է խոթանյան սակերեն naškasta-, naškasta «հովի, բարձրացավ» բառին, որի ար-մատն է kah-, khah-: Ես հիշում է նաև հին հնդկերեն kas-, պրակրիտ kas- և nikas- հիմքերը: Այս բոլոր ավյալները ի մի բերելով՝ գտնում ենք, որ հայերեն նշվածն էլ բարձրա-նկուն է իրանականից (հին պարսկական). իրանականի համար պետք է ենթադրել *ni-škaft-tan բայը՝ «ցած նե-տել, վայր ձգել» իմաստով (ni- նախածանցն ունի թի վայր, գեպի ցած» իմաստը): Հայերենում, բայտ այդմ, նշվածն էլ բառի նախնական իմաստն է «վայր նետել՝ ձգել», որից «ա-նարգել, արհամարհել», ապա «շանալ, բանի տեղ շղծել, մերժել» և վերապես՝ «ապտամբել»: Հ. Վ. Բեյլին իբրև ելակետ է ընդունում «նշել, բարձրանալ» իմաստը, որից դժվար է բխեցնել մեր բառի «արհամարհել, անարգել» ի-մաստները: Բացի դրանից, kah-, khah- արմատը թե՛սկել, հարվածել» իմաստը միանգամայն հարմար է և՛ չլան. և՛ նշվածն էլ բաներին, որոնք նույն ծագումն ունեն: Նախածան-ցավոր *ni-škaft- ձևի համար լավ պուզահես և պրակրիտի ni-šas ձևը: Այսպիսով, բառի բաղադրիչներն են գտնում (իրանականում) ոչ թե niš kaf, ինչպես առաջարկում է Մեյլեն, այլ՝ ni-škaft

Իրանական փոխառություն է, որ ծագում է vačih բա-ռից՝ ni- «ցած, ստոր, ընդ, նեթ» մասնիկով: Իրանական այդ բառը, որ ծագում է vak «տառ, խոսել» արմատից, ունի «ի-

խոսք, նառ, բառ. 2. արտահայտություն, դատողություն. 3. խոստում, ապահովություն, բանավոր երաշխիք» նշանակությունները²⁵: Ըստ այսմ, *ni-vačah պետք է նշանակած լինի «խոսքի սակ զցել, իր խոսքին ենթարկել, ապահովություն՝ երաշխիք անել», որից ինքնին արդեն բխում է «ենազանցանել, հաղթել, տիրել»: Ձեռի նամար (ni-vačah > նոսճ-եղ) համեմատելի են՝ իրանական (պահլավ.) ni-vedak > նիվե-րակ > նևերակ > նուրակ. ալեւա. ni vaeday > նիվե > նևեր > նուե բառերը, որոնց մեջ իրանական ni-ve դարձել է հայերենում նուվ:

ՏԼ ՇԵՂՐ

²⁵ Իտալիան չրչանից ավանդված չէ. մասնակցություն մեջ պատահում է միայն միջին դարերում, որի պատճառով էլ ն. Բյուզանդացին և Հ. Անադյանը համարում են միջին հայերեն բառ: Գործածական է բազմաթիվ բարբառներում, որոնցից և անցել է արդի գրականին «գանակի՝ սրի են բերան» իմաստով՝ Բարբառներում ունենք շեղր, շեղրիկ, շղրիկ, շղրիկ, շղրիկ «գանակի բերան», շեղր «անկոթ դանակ կամ կտրած դանակ» (Չեխոն), խղրիզ «գանակի կրկաթն մասը» (Հաճրն), շղղուպի «անկոթ դանակ» (Ղարբազ, Մեղրի, Զանդղուր) և այլն: Ն. Անադյանը (Արմ., 2, 319—320) համարում է ստորական փոխառություն. «ստոր. šelpa, šelāfa «գանակ», šelpana «փորը դանակ», կրթ. šelēf «գանակ, թուր», šalfone «ստոր պատյանից հանել, կիրաննիք արարելն զվռ. šalfone «գանակի փոքր բերան», «...արմատը ստոր. šelap exlraxit, evellit, բաշել, հանել, խելա: Մեղ թվում է, որ այստեղ զործ ունենք պատահական նմանություն հետ: Հնչյունական օրենքները թույլ չեն տալիս մեր բառը ստորերևից փոխառյալ նամարելու: Այսպես, այն հանգամանքը, որ բառը ավանդված է միջին դարերից և զործածվում է բարբառներում, ենթադրել է տալիս, որ փոխառությունն էլ միջին դարերում է տեղի ունեցել, խոսակցական-ժողովրդական լեզվի միջո-

ցով. բայց այդ զեպրում ստոր. l-ի դիմաց պետք է ունենալիք հայերեն l, որովհետև q-ն արդեն այսօրվա արտասանությունն ունի: Այնուհետև, ստորական փոխառությունների մեջ ստոր. p-ն ոչ մի զեպրում հայերեն բ չի տալիս, այլ միայն՝ պ կամ փ, նույնիսկ ձայնորգներից հետո, ինչպես՝ šappurā > ճայ. շամբուր:

Մենք գտնում ենք, որ հայերեն շեղր բառը ծագում է հնթ. *(s)qel «կարել, ճեղքել» արմատից, որ ցեղակից լեզուներում ստացել է նաև «կտրող գործիք, սուր, զեղարդ» իմաստը, ինչպես՝ ֆրակ. skalmē «սուր, թուր», հին հնդկերեն kutharah «կացին», հուն. ζαχισ; «սեպ, կրիթ», լատ. cultur «գանակ», հին իտալերեն skallis «հերձոց, պատվաստի գանակ», հին իտալերեն colg «սուր», լատ. scalpere «ճեղքել, հերձել, սուր գործիքով կտրել», աուս. челонок «էլ. մաքուր, 2. մակույի. նավակ» (իրեն՝ «ճեղք փորած») և այլն (WP, II, 590—596, Pok., I, 926): Հայերենը ծագում է արմատի *sqel(ep) > *sqelp «ձեղ» p > ր օրինաչափ փոփոխությամբ՝ ձայնորդից հետո (նման. *penk > ք > քիկ, *ant > (դ)անդ) և այլն): *Sqel(e)p ձեռի նամար ցեղակիցներից կարելի է հիշել. լատ. scalpere «ճեղքել, հերձել, սուր գործիքով կտրել», scalprum, skalper «կտրելու սուր գործիք», skalpelum «վիրահատական սուր գանակ, հերձակ սկալպել», անգլոսաքս. hiefl «կրիթ, բանակ», անգլո. helve «կացնի կոթ», գոթ. halbs, 5. իտալոնգ. hallr, անգլոսաքս. healf, զիգրմ. halb «շին» (=մտ., բաժին) և այլն (WP, II, 595):

Հայերենի նամար կարող է կասկած հարուցել միայն բառակցքի sq > շ հնչյունափոխությունը, բայց այդ կասկածն էլ վերանում է, երբ համեմատության ենք անում հնթ. *sqel «ճեղել, ծեղ, կտրացնել» > ճայ. շեղ և խեղ բառերը: Մեր նշած արմատից հայերենն ունի ցելուպ, որ ծագում է sk'el «ձեղ», շեղր-ի նամար պետք է կանխադրել արմատի *qel(e)p ստանց s-ի ձևը, որից ծագում են նաև լատ. cultur «գանակ», հուն. ζαχισ; «կացին» և այլն:

²⁵ Ch. Bartholomae. Altiranisches Wörterbuch, էջ 1340—1342.

Այս բառի բազմաթիվ ստուգաբանությունները մերժվել են Հյուրըմանի և Աճառայանի կողմից: Հյուրըմանը (Arm. Grammatik) հիշելով շերտ բառի համեմատությունները ցեղակից լեզուների ձևով և իմաստով նման բառերի հետ, դատարարում է, որ դրանցից ոչ մեկն էլ բնօրինակի չէ, թեև նշանակության անասկետից հարմար է համարում հունարեն $\tau\epsilon\iota\tau\omega$ «ճեղքել», $\sigma\epsilon\iota\tau\epsilon$ «փայտի կտոր», $\tau\epsilon\lambda\epsilon\sigma\epsilon$ «ճեղքված փայտ», գերմաներեն scheid «փայտի մեծ կտոր» և այլն բառերը, որոնք, սակայն, ծագում են հնիս. *sk'eid- արմատից, որ տվել է հայերեն ցանկ:

Աճառայանը (Արմ. բառարան, հ. 5, էջ 332) հիշելով Հյուրըմանի մատնանշած լիովաններն skēdra՝ բառը, որ Հյուրըմանն իսկ մերժել է հեշյունական օրենքների խախտում նկատելով, գրում է. «Այս բոլոր ձևերից ամենահարմարն է Հյուրըմանի մատնանշած լիթ. skēdra «տաշնոց», որ թեև պիտի տար հյ. *շկւտ, բայց այս էլ համաձայն հայերենի ներքին ձայնական օրենքներին՝ խկույն պիտի դասնար շկւտ: Անպատեհ է միայն այն հանգամանքը, որ լիթ. skēdra զբվում է հնիս. *sqeid արմատի տակ, որ տալիս է հայերենի ցանկ: ներկա ենք թերևս ձայնաբանական մի առանձին օրենքի, որի պայմանները անծանոթ են մեզ: Պատրուբանին (Sprachwissenschaftliche Abhandlungen, հ. 1, էջ 195) կցում է լիովաններն keriu «կտրել», հունարեն $\tau\epsilon\lambda\epsilon\sigma\epsilon$, րատիներեն curtus և այլ բառերի, որոնք, սակայն, մերժում է Աճառայանը (անդ, էջ 331), որովհետև դրանց հետ կցվում է հայերեն Բերի բառը:

Պատրուբանին ճիշտ է կասում համեմատվող բառերի ընդհանրությունը, բայց լի կարողանում գտնել հայերենի հիմքում բնկած նախաձևը և ցեղակից ձևերը: Հնդեվրոպական այն արմատը, որից ստացվել են հիշյալ բառերն, հունարեն և այլ բառերը, ունի S-ով և ստանց S-ի ձևեր. առանց S-ի ձևերից ստացվել են հայերեն Բերի, Բուրի <*qer

(հմմտ. սանսկրիտ kṛṇāti «սպանել, վերավորել, ոչնչացնել», հունարեն $\tau\epsilon\lambda\epsilon\sigma\epsilon$ «կտրել, ձևել, մկրատել, խուզել», հին բարձր գերմաներեն sceran կտրել և այլն), քերթել, քերծել <*qeret (հմմտ. լիովաններն kertu «կտրատել», սանսկրիտ kṛṇāti «կտրել», այլրաներն kēḥ «թափել» և այլն), Բարբ արբայիկ օձ <*gerep (հմմտ. հունարեն $\sigma\epsilon\tau\epsilon\pi\acute{o}\varsigma$ «կարիճ» բառերը: S-ով արմատից է ստացվել հայերեն շերտ բառը, որի նախաձևն է *sqerd: ցեղակից լեզուներում այս ձևից ունենք միջին բարձր գերմաներեն scherze, scherzel «կտոր», հին սաքսոններն kurz, հին բարձր գերմաներեն kurz, խոյանգերեն kort «կարճ» (վերջին հերքը ստանց S-ի ձևից), միջին բարձր գերմաներեն schranz «պատաս, շերտ, կտոր» և այլն: Այսպիսով՝ շերտ բառը կապվում է քերթել, քերթել, քերծել, բարբ արբերի հետ և ծագում հնդեվրոպական *sqer, qer արմատի S-ով ձևից, միջնդեռ մյուսները ստաշանում են ստանց S-ի ձևից՝ արբեր սանսկրիտով

83. Շ Կ Ա Է

Այս արմատն առանձին, իրրև բառ, դործածված է, բայց նշՔ-ի, հորենացու «Յազարս պիտոյից» գրքում՝ «նկատ սուր ծայրը, սլաք» իմաստով: Դրանից են կազմվել՝ ա) շկանել, ունի մի քանի դործածություններ. նշՔ բառը բացատրում է՝ «շառաչել կամ ձրկել շալմար, ձրկել, նշառակ ձեռամբ նշանակել կամ վարել զիմն»: բ) Շկանիւն «աղեղների հանած ձայնը, աղեղի շառաչում» նկատ արձակելուց»։ գործածված է Աստվածաշնչում (Ք. Մակ.) և «Ս. Եփրեմի մատենագրութեանց» մեջ (Ք. հատ., էջ 271):

Ծագում է իրանական Šikāiten «ճեղքել» բառից. հիմքն է Šikaf, որ բայ մեր շկան <*շիկան բառի սուրբ, նկատի սուր ծայր» իմաստի պետք է նշանակած լինի «ճեղքող, պատռող» (գործիք): Է. Բեյլին, ստուգաբանելով շկանիւն <*նիշկանիւն բառը, հիշում է խոթանյան սակերեթի naškasta-

naškhasta- «ելավ, բարձրացավ» բառը, որի արմատն է kah-, khah-, վիճարված եզ. 3-րդ դեմքի kaitha գոյնում է, հարվածում է» ձևով:

84. ՊԱՂ, ՊԱՂՊԱՂԸ, ԳՎԹ. ԲՈՒՂ, ՊՈՒՂ (<ԲՈՂ)

Մեղրու բարբառում գործածվում է բուղ³⁰ բառը, որ նշանակում է «1. կայծ, 2. փայլ, ցուր»: Նկատի ունենալով, որ այդ բարբառում միավանկ բառերի մեջ ու ձայնավորը բարձրացվում է հին հայերենի ու-ից (ինչպես՝ խուա <խոտ, թուր <թր հն), բառ որում հին հայերենի ու-ն էլ զանազան է օ (ինչպես՝ սոր <սուր, ծոռ <ծուռ հն), պետք է հիշել բառի հնագույն ձևը համարել բուղ: Այս բառը ծագում է հնի. *bhel- («bhal-, *bhāl, *bhol) արմատից, որի շեղակից ձևերից կարելի է հիշել սանա, bhāla «1. փայլ, 2. ճակատ», հն. 721b: «փայլուն, շողողուն, սպիտակ», 721b: «լուսավոր, սպիտակ», լատ. fullo «հարուստ մարդու», ռուս. бѣлым «սպիտակ», бѣльмо «աչքի փուռ, լուսն», սնդու-սարս. baēl «բուր, կրակ-փայտակալու» և այլն (Wp, II, 174—176, Pok. I, 118—120). Նույն հնգեվրոպական արմատից է ծագում նաև հայերեն բաղ «մշուշ, մեղ» բառը, որի մասին մանրամասն տե՛ս 2. Անտոյան, Արմատական բառարան, Ա., էջ 884—885:

Մեղրու բարբառի բուղ բառի զուգահեռն է Ղարաբաղի բարբառի պող սխարիթը կրակ կտրած ածուխ³¹, որի մեջ հին լատինեղ բ-ն օրինակաբար ներթափանցել է պ:

Բարբառային այս բառերը անկասկած զուգահեռն բուղ ձևն են ներկայացնում հին զրաբարյան պղղ արմատի, որ առանձին շի գործածվել, բայց որից ունենր պաղապանձ, պաղապանձական «պանձափայլ, սառնատեսակ, վճիտ, հատակ, պսպղուն» և կրկնությունները «1. փայլուն, փայլ,

ցուր»: 2. փայլուն», պաղպաղել «փայլել, փողփողալ, շողողալ», պաղպաղումն, պաղպաղուն, պաղպաղունք «գարգաբուն զահավորակ, դեսպակ», կրկնավոր կազմությանը այս բառերը ավանդված են մետրոպոլիտան շրջանից³². նշք տալիս է պաղպաղել բառի նաև բաղբաղել ձևը, որ անշուշտ կարելի է համարել բարբառային ձև՝ պ|>բ փոփոխությանը. ավյալ դեպքում մեղ համար ստուգաբանական տեսակետից պղելի հարմար կլինի որ ճանաչել հնում գոյություն ունեցած զուգահեռն ձև, բայց հաստատուն կզման շունենալով, դիտում ենք որպես հետին՝ ուշ շրջանի բարբառային ձև:

Իմաստով պղղ արմատը և կրկնավոր պղղպղը բառը միանգամայն համընկնում են Մեղրու և Ղարաբաղի բարբառների բուղ, պող բառերին: Ըստ այսմ, զրաբարյան պղղ արմատը ծագում է Հնի. նույն *bhel- արմատի՝ *bāl ձևից, որոնց նախնական արմատն է *bu, *bhu (WP, II, 115). սրա *bhu, *bho ձևից են հայերեն բուբ, բով, բովել: Այսպիսով, հայերենում ունենց բուղ և պղղ ձևերը, որոնք նույնպիսի հարաբերության մեջ են միմյանց հետ, ինչպիսին ունեն պղ-ար, բուղ, բովի, բու-ար են: Վերջպես, նույն արմատի ր և րի նախահնչյուններով ձևերից ունենց հայերենում՝ փու-բ, փել, փայլ, փաղ-փիմ, փաղ-փաղիմ, փաղփաղիմ են: Այս բուրբառերից կարելի է հնգեվրոպական նախալեզվում ծագած են համարվում նախնական *bu, *bhu արմատից (WP, II, 115), որի սկզբնական իմաստն է եղել. «փշել, փշելու ձայն հանել», ապա՝ «փշելով բորբոքել, արծարծել» և հետո՝ «գառել, փայլել» և այլն: Չր. Անտոյանը, ստուգաբանելով բուբ բառը, գրում է, թե հայերենի մեջ զանազանվում են *pu-, *peu->բևալ, *pu->փուբ, փշել և bhū->բուբ, միայն *bu- ձևը շունի իր ներկայացուցիչը³³: Մեր այս ստուգաբանությունը զրաբարյան պղղ, պղղպաղել և զվո. բուղ, պող <բող բառերի, երևան է հանում մի կողմից զարձյալ *bhu-, *bho-, մյուս կողմից՝ *bu-, *ba- ձևի օրինական ներկայացուցիչը:

³⁰ Զգետք է շփոթել Թուրքերենից փոխառված և ինչպես Մեղրու, այնպես էլ շատ ուրիշ բարբառներում գործածվող բուղ/բող «գուրջի» բառի ձևն:

³¹ 2. Անտոյան, Գաղտնական բառարան, էջ 919:

³² Տե՛ս նշք, II, էջ 590:

³³ Արմատական բառարան, է, էջ 109:

Այս բառը համարելով իրանական փոխառություն՝ Հր. Աճառյանը գրում է «այ՛ց. paragaud- համանիշից, որ թեև գործածված չէ իրանյան գրականության մեջ, բայց նույնն է ավանդում Հեքիթիս»՝ παραγωγός (παραγωγός?) ձևով. παραγωγός χιτών παραπάσις վերարկու բառ պարթևաց)։ նույնը հունական վերջավորություն՝ παραγαυδός։ Իրանյանից են փոխառվել նաև լատ. paragauda, paragaudis, paragaudius, «գզեխտի վրա մետաքսի կամ սակի բամբակը. 2 սակի՛նա գզեխա», առար. մանդ. և թալմ. paragod? «վերարկու. վարագույր», արար. بجرج burjud «ճաստ կապերտ, թանձր առախ»։ վրաց. პარაგაუდიანი պարագաւდიანი «რჩაჲ, հանդերձ, երկար գզեխա»։ Այնուհետև ստուգարանությունների պատմության մեջ գրում է. Lag, Arm. Stud § 1863 «մեկնում է գոտի բառով, իբր «շուրջը գոտիով», իսկ էջ 182 լատ. և թալմ. բառերի հետ։ Տերմ. Altarm, 80 և նախալ. 92, 107, պար «շուրջը» մասնիկով գոտի բառից. ...շուրջ. տալիս է վերի մեկնությունը, բայց առանց հասկանալիության հիշում է նաև պար-գոտի մեկնությունը, ինչ որ չի կարող ուղիղ լինել, որովհետև նախ առանց բացատրության է մնում գոտի բառի վերջածայնի անկումը և երկրորդ՝ պար մասնիկի այսպիսի գործածությունը հետին է» (Արմ., 5, 969—971)։

Հր. Աճառյանի վերջին երկու փաստարկները ընդունելի չեն. ինչպես դիտենք, նա գոտի բառի մեջ առանում էր -տի բաղադրիչը (գաւ-տի), այդ պատճառով էլ ստիպված է եմբացրել ի վերջածայնի անբացատրելի անկում. սակայն ինչպես մենք ցույց ենք տվել, գաւտի բառը բառ չէ, այլ ածանցավոր (գաւ-տ-ի), որ ծագում է հերի. gha-g > հայ. գամ և հերի. ghaud- > հայ. գաւտ արմատից և նախապես՝ նշանակել է «պատող, պարուստը, ծածիկը»։ Ըստ այսմ, պարեգոս նշանակել է «շուրջը պատող, շորս կողմից պատող», ինչպես որ ունենք շուրջատ բառը։ Սրա համաձայն պետք է ամենից առաջ վերանայել պարեգոս բառի իմաստի բացատրու-

թյունը։ նժԲ և մյուս բառարանները, կապելով գոտի բառի հետ, բացատրել են իբր «գոտի ունեցող, գոտիով կապվող վերարկու»։ Ասկայն բառս նշանակել է պարագոս պերարկու, որ ցույց է տալիս նաև Հեքիթիսի վկայությունը (վերարկու բառ պարթևաց)։ Ինչ վերաբերում է այն փաստարկին, թե պար- մասնիկի այսպիսի գործածությունը հետին է, ապա դա էլ հիմնավոր չէ. պարեգոս նախածանցավոր (պար-գոտի) բառ չէ, որովհետև այդ վերջում պետք է ունենար պարեգոս (հմտ. պարագիծ, պարագոսի «մեղքին գոտի կապել») կամ էլ պարգոս (առանց նույնացված, ինչպես՝ պարեկություն, պարբերել և այլն), այլ բարդ բառ (պարե-գոս), բառ որում ենթադրում է պար բառի հնարյուն բնավոր ձևը՝ պարե (հմտ. հեղե-տասան) կամ պարի (հմտ. երկի-հարեղ)՝ երկիարեղ > երկերեղ, որով բարդություն նախածնը բարդ էր լինել կամ ուղղակի պարեգոս, կամ էլ՝ պարե-տգոս > պարեգոս։

Իրանական փոխառություն համարելը երևան է հանում մի բանի գծավորություններ. ամենից առաջ՝ պահլավերեն հին պարսկերենի երկբարբառները վերածել էր պարզ ձայնավորների, ուստի և՛ պահլավերենում շպետք է լիներ paragaud-, au երկբարբառով ձև. իսկ եթե այդ ձևը վերապրենք հին պարսկերենին, ապա au երկբարբառի դիմաց նայերենը պետք է ունենար ոչ և ոչ ա (հմտ. հին պրսկ. gauša (gaōša) > հայ. գոյշ (գգոյշ), պ՛շ. goš, հին պրսկ. auša (aōša) > հայ. ոյժ, պ՛շ. օշ, հին պրսկ. palti-rauka (raōka) > հայ. պատրոյժ, պ՛շ. patrok և այլն, իսկ d(δ)-ի դիմաց էլ) բառ (հմտ. irapašak- > հրապարակ, nitvaeda > նուր ևն)։ Ըստ այսմ իրանական paragaud ձևը պետք է տար հայերեն պարագոյր, ինչպես որ ունենք վարագոյր բառը, Այս բառն առանձնակի նշանակություն ունի մեր կողմից բննարկվող խնդրի համար։ Ստուգարանելով հայերենի վարագոյր բառ, է. Բենիկեխոր գրում է. «Հայ. վարագոյր-ը մենք հանգեցնում ենք *varagōd-ին՝ ստացված մի հին բարբառ-թյունից՝ *varagauša. երկրորդ բաղադրիչը՝ -gauša ծանոթ

է պարսկա-լատին paragauda բառի մեջ, արամ. Թալմ. paragauza «վարագոյր» և միջին իրանական բազմաթիվ ձեւերով. սոգո. 𐭪𐭥𐭥𐭥, 𐭪𐭥𐭥𐭥𐭥 «ծածկոց», հմմտ. օս. агул «զգեստ»: Բնկվենիստի այս ստուգարանովյա՞մբ, ասենից առաջ հաստատվում է մեր այն պնդումը, որ իրանական paragauda-ի դիմաց հայերենը պետք է ունենար պարագոյր. այնուհետեւ, այդ ստուգարանովյան համաձայն, ցաւո՞ բառ հին իրանական լեզուներից այլուստ չի վկայվում, բացի paragauda բառից: Սա մեզ հիմք է տալիս ընդունելու, որ ինչպես paragauda բառն ամբողջովյա՞մբ, այնպես էլ նրա ցաւո՞ բառը արիւն իբրեւ առանձին բառ հին իրանականը վերցրել է հայերենից: Մեր ասածը հաստատող մի փաստարկ էլ կա. մեր պարեգոմ-ը իրանական paragauda-ից ենթադրելու դեպքում անբացատրելի է մնում մեջին ե ձայնավորը իրանական ա-ի փոխարին (հմմտ. *varagauda > վարագոյր), մինչդեռ հայերենի ե-ի դիմաց իրանական a-ն բացատրվում է իրանական հին լեզուներից հատուկ e > a հնչյունափոխությամբ, իսկ հայերենի ե-ն բացատրվում է հենց հայերենով: Պարեգոմ բառը բուն հայկական բարդություն է՝ պարե-գոմ կամ պարի-ա-գոմ, ինչպես բացատրվեց վերը: Հեսթրիտի վկայությունը չի հակասում մեր բացատրությանը, այլ, ընդհանրապէս, հաստատում է. այդ վկայության մեջ ասվում է՝ «վերարկու ըստ պարթևաց», այսինքն՝ այդ վկայությունը վերաբերում է պարթևական շրջանին, իսկ փոխառությունը հայերենից կատարվել է շատ վաղ ժամանակներում, այն դարաշրջանում, երբ իրանական լեզուների մեջ գործում էր e > a հնչյունափոխությունը, և երբ նախահայկական դ-ն դեռևս ա չէր դարձել, որի պատճառով էլ իրանականն ունի ցաւո՞ (և ոչ ցաւ):

Այսպիսով, ինչպես paragauda բառը, այնպես էլ նրա ցաւո՞ բառը արիւն իրանական փոխառություն է հայերենից: այդ փոխառւոյլ բառից իրանականում կազմվել է varagauda բառը, որից է հայկական վարագոյր-ը: Այստեղ էլ ունենք այնպիսի երևույթ, ինչպես որ, ասենելով իրանական զով

«զովասան» բառը, հայերենը կազմել է զովասան և տվել իրանականին, որ պահպանելու համարով ցօsan, կրկին վերադարձել է մեզ՝ զուսան ձեով: Հունական, լատինական և մյուս լեզուների paragaud- բառի համար դժվար է որոշակի բան ասել՝ հայերենից է փոխառվել ուղղակի, թե իրանականից՝ միջնորդաբար. վրացերենը ենթադրում է իրանականը՝ իր ա ձայնավորով (պարագավատի). թերևս նույն հատկանիշով էլ կարելի լինի ասել, թե հույն և լատին բառերը ես իրանականից են: Այսպիսով՝ պարեգոմ բառը դուրս է գալիս իրանական փոխառությունների շարքից, դառնում բնիկ հայկական բառ՝ իբրև հնագույն հայկական բարդություն, իսկ ցաւո՞ և paragauda բառերը՝ իրանական փոխառություններից:

86. Մ Ս Ա Հ Ա Կ

Այս բառն «Արմատական բառարանում» ենթադրաբար իրանական փոխառություն է համարվել՝ կապվելով պչու- Vistaxv. Ավեստ. Vistaka (> հայ. վստան) բառերի հետ, որոնք կազմված են slak եղև կանգնելու արմատից: Այս ենթադրությունը հիմք են ծառայել —սի վերահար կապակցությունը, որ իրանական փոխառություններին է հատուկ, բառի ըստանակ ամանգական ընթերցանությունը, և տարբեր նշանակություններից նախնականն ու հիմնականը սքրքոստ, հանդուգն՝ իմաստը համարելը: Հայկազյան բառարանում բերված են սանաստ, ստամբակ, անկարգ, անխրատ, անսակ, խոտվարար, խեռ, բմբոստ, հանդուգն, խխաս՝ նշանակությունները: Օրինակների մեծագույն մասին ավելի հարմար է ասնկարգ, մուր, անխրատ՝ իմաստը, ինչպես՝ ծերասուեցելը գտահակա՞ (ա Թեւ, է, 14), «Ստահակք են, որք արտաբոյ կամաց աստուծոյ և առաջնորդաց գործս դարձես» (Ոսկ., ա Թեւ.), «Անուամժոնքս և անխրատքս և ստահակք» (Փիլ., էլ., ր, 34) և այլն: Բառի նախնական իմաստը պետք է համարել սմուր, մուխ, ստամբոս, ըստ այսմ, կհանվիլ արմատական բառերի շարքից և կգտավի բարդությունների շարք-

բում, կազմված սուտ-հակ արմատներից, որ նախապես պետք է նշանակեր ստոմբյան հակված, ստոմբյան հակում ունեցող, մայր: Համապատասխանաբար ավանդական ըն-
կերցանությունը պետք է փոխարինել սրտանակ բնկերցա-
նությունը:

87. ՍՏԻ/ՍՏՈՒ

Հին մատենագրության մեջ ստի բառը, ըստ Հր. Աճառ-
յանի, գործածվել է միայն մեկ անգամ՝ «կարգ, պատշաճու-
թյուն» իմաստներով: Դրանից է աճստի «անկարգ, անհե-
ղանդ, ստահակ»: ստու ձևը առանձին չի ավանդվել, գոր-
ծածվել է միայն մեկ անգամ՝ աճստու «անկարգ, անպատ-
շաճ, անճոռնի» իմաստով՝ Բարսեղի վեցօրեից արալություն
ճանորի Թարգմանություն մեջ (տպագրեր ունի աճյոց, էջա-
ստորի ծանոթություն մեջ՝ աճստու, որ Լ. Ա. Վարդանյանը
ուզողով է աճստու, և Աճառյանն էլ ընդունում է): Երկու
ձևերն էլ համապատասխանորեն ծագում են հնիս. stā-/ste-
«կանգնել, դնել» արմատի stī (<stāi) և stū (<stāu) աճած
ձևերից: Հնդեվրոպական այս արմատը մեծ զարգացում է
կրել թե՛ ձևական և թե՛ իմաստային տեսակետից. այդ ար-
մատից է հայերեն ստանալ, որի մասին մանրամասնորեն
տե՛ս Արմ. Յ. 421: Մեր ստի/ստու բառի իմաստի համար հա-
մեմատելի են որս. при-столниѣм, «պատշաճ, վայելու-
կարգին», հուն. στίλα «կարգի կանոնի դնել, ոտքի դրա-
կանգնեցնել, պատրաստել, հանդերձել, հազցնել», ռուսիս.-
իտալ. assetare «կարգի բերել», հուն. ἄστει «բխավունք,
օրենք», գոթ. stāua, i «ստայան, դատ, դատատան, օրենք»
և այլն:

88. ՎԱՀԲ

Այս բառը, որ Լ. Աճառյանը բերում է «Արմատական
բառարանում», աճելով ներստովիչ լատին-հայ բառարա-
նից, լատիներեն տարածված է բարբառներում «թարախ» ի-

մաստով: Ծագում է հնի. *s) uer «թարախոտել, թարախ
բռնել» արմատից, որի ժառանգներն են. Ավեստայի xwra
«վերք», հին բարձր գերմ. sweran «ցավ դրուլ, տուչել, թա-
րախոտել», swero «մարմնական ցավ, պայտք, տուցիք» և
այլն (WP, II, 329, Pok., I, 1050): Հայերեն բառը ծագում է
նույն արմատի առանց s-ի՝ warah ձևից, որի զուգահեռն է հին
բարձր գերմ. warah «թարախ»: Հայերենի նախածնը պետք
է լինի վարհ, որ հետո անդամորոշվում դարձել է վահիթ,
ինչպես՝ բիթի > բիթր և բիթիլ (հմտա. զիթ. բիթր > բիթր),
կասկած է հարուցում, սակայն, բասակցրի w > հայ. վ (օ-
բինաչափն է գ):

89. ՏԱՎ, ՏԱՂ

Տաղ բառը ավանդված է հեռավորության շրջանի մա-
տենագրությունը (Փիլոն, Պղատոսի տրամախոսությունը,
Թրակացու «Արուեստ բերականին» և այլն) և նշանակում է
«երգ, բերված, ոտանավոր»։ սակայն նախապես նշանա-
կել է նաև «խոսք, բան», որ պահպանված է ստատաղ «ստա-
խոս» բառի մեջ (գործածել է Համբրոնացիին «Գովեստ ներ-
բողական յաղագս վարուց... ներխուի Կլայեցույց» զործում,
տպված Ենթահայու «Փոռղթ բնդհանրականում», էջմիածին,
1865, էջ 461—497) և որ նարեկացու ռուսերի մեկնիչը բա-
ցատրում է «բան» (Տաղն՝ բան ախ):

Առաջարկված ստուգաբանությունները մերժված են
չյուրջմանի և Աճառյանի կողմից. Ենթուելովիցը միացնում
է պարսկերենից փոխառված տաղ «խաբան» բառին և եր-
կուսն էլ համարելով բնիկ՝ համեմատում լատիներեն dolare
«շինել, կերտել», հունարեն δολῶναι «մարտարությունը շի-
նել, ձեռտոց զորատախտակ» բառերին ու հանդեցնում հնիս.
*del- «ձեղբել, կտրել, արվեստով շինել» արմատին. այս
ստուգաբանությունն ընդունում է Պոկոսին (I, էջ 194), որ,
սակայն, իրավացիորեն մերժում է Աճառյանը՝ իմաստի ան-
համապատասխանության պատճառով, Թե՛ նախնական ի-
մաստով («բան, խոսք»), և թե՛ նրա հետագա զարգացմամբ

կապում է հին հյուսիսային tal շ. «հաշվում, համարնք, խոսք», անգլոսաքսոններեն tael շ., «թվարկում, շարք», հին բարձր գերմաներեն zala «թիվ, թվարկում, լեզու», անգլո-սաքսոններեն tellan (=անգլ. tell) «պատմել», հունարե-րեն taal «լեզու, խոսք», հունարեն δῆλος «խորամանկո-թյուն», յատիներեն dolus, սակերոս doctum, dolud (հյը. և գործ. հորվներ) «խորամանկություն, խաբերայություն», լատիներեն dolōsus «խորամանկ», հունարեն δῆλος «խորա-մանկել, խաբել» և այլ բառերի հետ և ծագում է հնի. *del «նկատի ունենալ, նպատակ դնել, վնասել, հաշվել, պատմել» (Պոկ. I, 193) արմատից։ Որ հաշվիկ իմաստից կարող են ա-ծանցվել խոսել, պատմել, երգել իմաստները, հաստատվում է բազմաթիվ ավյաներով, որոնցից կարելի է հիշել հունա-րեն ἔλω «ասել, պատմել», բայց և՛ «թվել, համարել», լա-տիներեն computare «թվել, հաշվել» և «ծանր արտասա-նել», ֆրանսերեն compter «թվել, համարել» և conter «պատ-մել», compte «հաշիվ» և conte «վեպ» և, վերջապես, լա-վադույներ այս առիթով՝ նույն *del արմատից՝ գերմաներեն zahl «թիվ» և erzählen «պատմել», անգլերեն to tell «թվել, հաշվել, ասել, պատմել»։ Ըստ այսմ՝ հայերենում առղ կա-խաղապ նշանակել է «խոսք, պատմություն», հետո միայն՝ ստացել «երգ, ոտանավոր» իմաստը։

Նույն արմատի հետ է կապվում նաև հայերեն առղ բա-ռը։ Անուշանը սերմանական բառարանում» (հ. 6, էջ 941—942) համեմատելով վրացերեն ტოლი toli «համար, նը-ման, հասակակից»։ Երևոմե toliba «հասակակցություն», Երևոմե toleba «բազմաթիվ», Երևոմե tolaoba «ձկների կամ օձների գողգոլորություն», Երևոմե toltoli «համար, հա-սակակից», Երևոմե utoli «անհամար» բառերի հետ, գտնում է, որ իմաստների «այսպիսի երանգները թույլ չեն տալիս բեզունելու, քի մին մյուսից (հայերեն և վրացերեն— է. Ա.) փոխադրել է, այլ երկուսն էլ փոխադրել են միևնույն աղբյուրից» («Արմատական բառարան», հ. 6, էջ 942) և գրանից էլ ենթադրում է, որ առղ բառը «խաղապ» շրջանի

